





ԶՄԻԱԾԻՒ





Ի Ը
ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ


49h'gr - 44



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Մարտի

1972




ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻՑ

ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆ

« Ա Թ Ո Ր Լ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց »

Ծուրջ վեց տպագրական մամուլ, ընտիր տպագրություն, 1000 տպաքանակ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ. ա) Եկեղեցական դասակարգություն, բ) Կաթողիկոսական աստիճան, գ) Հայաստանեայց եկեղեցի, դ) Սահմանք Աթոռոց, ե) Մեծ և Փոքր Հայք, զ) Առաքելական Հաստատություն, է) Աթոռ Հայոց և Աթոռ Կեսարիոյ, ը) Աթոռ Հայոց և Աթոռ Անտիոքայ, թ) Աթոռ Հայոց և Աթոռ Կոստանդնուպօլսոյ, ժ) Աթոռ Հայոց և Աթոռ Հռովմայ, ժա) Երկրորդական Աթոռք Հայոց, ժբ) Արքեպիսկոպոսք և եպիսկոպոսք, ժգ) Վարդապետական աստիճանք, ժդ) Եզրակացություն:



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐԱՆԻ՝ ՈՐ ՈՒՆԻՅԻ ՅԻՇԱՏԱԿ Ի Ա. ԷԶՄԻԱԾԻՆ

Մեր ամսագրի հերթական համարի սույն խմբագրականը նվիրվում է ընդհանրապես բարեգործության և ի մասնավորի Մայր Աթոռի վերջին շրջանի բարերարներին և նրանց նվիրատվությանը:

Վեհափառ Հայրապետը Իր գահակալության առաջին իսկ տարվանից առաջադրեց և բայլ առ բայլ գործադրության դրեց Մայր Աթոռի վերաշինության ու բարեգործության և մեր երկրի վանքերի ու եկեղեցիների վերականգնման և վերանորոգման ծրագրերը:

Հայրապետական Իր առաջին կոնդակում (1955 թ. դեկտեմբեր 1) Հայոց Հայրապետը գրում էր. «Պիտի տքնինք ապա վերանորոգելու և վերագործելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, ինչպիսին են ա. Հռիփսիմեն, ա. Գայանեն, Խորվիրապը, Օշականը, Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուները կհանդիսանան ու հռչակված տաճարները աղոթքի և ուխտի և զմայլելի հուշարձանները հայ ճարտարապետական փառքի»:

Ծինարարական սույն աշխատանքները գլուխ բերելու համար Հայոց Հայրապետի հրավերով Մայր Աթոռին առընթեր կազմվում է անվանի հայ ճարտարապետներից բաղկացած մի հանձնաժողով, որն ինքնաբերական նվիրումով և գիտական հեղինակությամբ իր վրա է վերցնում ա. Էջմիածնի, վանքերի և եկեղեցիների շինարարական մեծ աշխատանքների ընդհանուր վերահսկո-

ղությունը՝ մարմին տալու համար շինարար և կառուցող Հայոց Հայրապետի ծրագրերին:

Ուրախությամբ պետք է արձանագրել, որ անցնող տասնվեց տարիների ընթացքում, առանց ընդհատման, շարունակվեցին և ծավալվեցին տարեց-տարի շինարարական աշխատանքները և՛ Մայր Աթոռում, և՛ Մայր Աթոռի շրջակայքից դուրս:

Ծինարարական այս մեծ ձեռնարկների զգալի մասը կատարվել է սիլյուրքից ստացված հատկացումներով և, մանավանդ, բացառիկ նվիրատվություններով:

Երախտագիտությամբ և գոհունակությամբ պետք է արձանագրել, որ Մայր Աթոռի ընթացիկ բյուջեն ապահովվել է ներքին թեմերի եկամուտներով, իսկ վերաշինությունների մեծ աշխատանքների նյութական միջոցները ապահովվել են սիլյուրքի հայ հավատացյալ ժողովրդի լուծանքով և նվիրատվություններով:

Այսօր Նոր Վեհարանի երկրորդ հարկ բարձրացող կամարակապ սանդղատան երկու պատերի վրա արձանագրվել են, ոսկյա տառերով, մարմարյա մեծ քարի վրա, Հայոց Հայրապետի գահակալության անցնող 16 տարիների ընթացքում Մայր Աթոռի բարերարների անունները (տես էջ 6—7-ի ներդիրը):

Բարեգործությունը քրիստոնեական առաքինությունների՝ հավատքի և սիրո գործնական սրտահայտությունն է:

Ավետարանը թելադրում է. «Տուր և տացի ձեզ, չափ բարոյք, թաքաղում, շարժում, գեղուն տացեն ի գոգս ձեր» (Ղուկ. Զ 38):

Նյութականը մեծ ուժ է, և ինչպես ամեն մի ուժ, եթե իմաստությամբ շահագործվի, բարոյական, շինարար բարեգործության է փոխակերպվում և հանդիսանում է աղբյուրը մեծագույն իրագործումների:

Նյութական հարստությունը միշտ է և ոչ թե նպատակ:

Բոլոր նրանք, ովքեր ոսկու չափանիշով են դատում կյանքը և մարդկային բոլոր հարաբերությունները, նրանք դժբախտներ են, որոնք նույնիսկ չեն կարողանում վայելել իրենց դիզած նյութական բարիքները, ինչպես Ավետարանի անմիտ մեծատունը: Այդ դիզված հարստությունը «գողք հատանեն և գողանան», մինչ «երանի է տալն, քան գտնույն» (Գործ Ի 35):

Ոսկու դեզերի մոտ՝ ոսկի սիրտ. հարքստության կողքին՝ առողջ միտք և մարդասիրական վերաբերմունք. հանրային-հասարակական, ազգային-հայրենասիրական պարտքի գիտակցություն:

Այս է հիմնականն ու կարևորը: Այս մասին ծանոթ է Ավետարանի տնտեսական-բարոյականը. «Ո՛չ կարէք ծառայել Աստուծոյ և Մամոնայի». ուրեմն՝ «Արարէք ձեզ բարեկամս ի Մամոնայէ անիրաւութեան»:

Գեղեցիկ է և սպառնիչ Պողոս առաքյալի պատգամը. «Մեծատանց որ են յայսմ աշխարհի, պատուէր տաջիր մի՛ հպարտանալ և մի՛ յուսալ ի մեծութիւն սնտոի, այլ յԱստուած... զբարիս գործել, **մեծանալ գործովք բարութեան**» (Ա. Տիմ. Զ 17):

Ավետարանի և առաքելական այս պատվերները շատ ճիշտ են հասկացել մեր եկեղեցին և մեր ժողովուրդը:

Եկեղեցին ամեն օր աղոթում է «վասն եկեղեցի շինողաց, պտղատուից»:

Այս ոգով հաւակցված բարեգործությունը հանդիսացել է մեր ժողովրդի հոգեկան մեծ բխումը, որը հիմք և խարիսխ է հանդիսացել նրա վանական-եկեղեցական շինարարության:

Հարուստ է մեր եկեղեցու և ազգի պատմությունը Ավետարանի պահանջած մեծատունների օրինակով և գործով, մեծատուններ, որոնք խորհել են միշտ եկեղեցու և ժողովրդի կարիքների համար և օժանդակել նրա հոգևոր, մտավոր կյանքը մշտնջենավորող ու գեղեցկացնող, բարեգարդող ձեռնարկներին, հաստատություններին:

Մեր ժողովրդի և եկեղեցու գոյության, կենսունակության գլխավոր «դրամագլուխ»-ը բարեգործության այդ ոգին է, այդ բխումը, որը հրաշք գեղեցկություններ է գործել անցյալում և գործում է նաև այսօր:

Այսպես, և Գրիգոր Լուսավորչի կողքին Տրդատ Գ թագավորը հալոց, արքայական նվիրատվություններով կանգնեցնում է «խնդալից փութով և մեծաւ երկիրի» հայ հավատքի վեմ և Էջմիածնի տաճարը, որպես «Տուն աղօթից ամենայն հաւատացելոց և Աթոռ քահանայապետութեան», ինչպես վկայում է Ագաթանգեղոսը, ու Վաղարշապատի բոլոր վկայաբանները, «գերանելեացն հանգստարանացն ճիմունս յօրինեալ», և Մասիս լեռան լանջերից իր թիկունքի վրա «հալկաբար» մեծ քարեր տաած բերում է «ի շինութիւն վկայարան տաճարացն»:

Այնուհետև և Ներսէսի կողքին Արշակն ու Պապը, և Սահակի և և Մեսրոպի կողքին Վոստչապուտ արքան և ապա շինարար Հայոց Հայրապետների կողքին մեր այլ «քրիստոսաւեր թագաւորք և բարեպաշտօնք իշխանք», մեր ամիրաներն ու խոջաները, մեր մեծատունները, որոնց նվիրատվություններով և «պարգևօք գաւառաց» «պայծառանայր կարգ կրօնաւորական հանդիսից յաշխարհին Հայոց» (Ասողիկ), կառուցվում են «քազում վանօրայք... կոփածոյ, մեծափառ եկեղեցիք, գեղեցկաշէն արուեստի, գմբեթայարկ, երկնամասն, սխարլի տետղաց» (Կիրակոս Գանձակեցի):

Այդ վանքերը հարուստ էին նաև «ծովամատոյց փիլիսոփայիք, երաժշտական երգովք, վարդապետական կրթութեամբ, նաև արհեստարարք նկարչացն և գրողաց անհամեմատք» (Ստեփանոս Օրբելյան):

Վանական-եկեղեցական այդ շինարարությունները երկյուղած բարեպաշտությամբ կառուցվում էին իշխանական նվիրատվություններով:

«Ի վաչկումն ազգիս հալոց.

ի յիշատակ ծնողացն իրեանց» և

«ի փրկութիւն հոգւոց մերոց»:

Ս. Էջմիածնի պատմությունն էլ հարուստ է, Տրդատ Գ թագավորից սկսած, Մայր Աթոռի հարազատ զավակների եկեղեցանկեր բարեգործության օրինակներով, զավակներ, որոնք թանկագին հիշատակներով կապված են Մայր Աթոռի հետ և իրենց փառավոր, արտաբովն նվիրատվություններով անմահացրել՝ համազգային այս մեծ և օրհնյալ Հատաատության մեջ, իրենց ծնողների և իրենց անունն ու հիշատակը:

Երանի՜ որ ունեցի յիշատակ ի ս. Էջմիածին:

«Զբարերարութիւն և զհաղորդութիւն մի մոռանալք, զի ընդ այնպիսի պատարագս հանի Աստուած» (Եբր. ԺԳ 16):

Մայր Աթոռ և Էջմիածինը, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրով, իր հոգևոր, եկեղեցական, կրթական ու շինարարական վերազարթոնքն ու բարեգարդու-

թյունը պարտական է նաև մեծ մասամբ մեր օրերի Մայր Աթոռի հարազատ զավակների իշխանավայել նվիրատվության և այն սիրուն և վստահությանը, որ ողջ հայությունը ունի դեպի իր սիրելի և շինարար Հայրապետը:

Մայր Աթոռում օրհնությամբ են հիշվել ու հիշվում միշտ՝ մեր եկեղեցու բարերարների անունն ու հիշատակը:


Արդարև, շատ մեծ է երախտիքը մեր եկեղեցու և ժողովրդի հոգևոր-մշակութային, ազգային-հայրենասիրական կյանքում, հայ մտքի, կրթության, գիտության, տպագրության բնագավառում իշխանական այդ նվիրատվությունների արժեքը:

Այդ բարեգործությամբ հայ մարդը բարոյական, անկորնչելի արժեք է տալիս իր նյութական հարստությանը, «բարեաց յիշա-

տակ» է թողնում և արժանանում եկեղեցու օրհնության և հայ սերունդների երախտագիտության:

Հայ հավատավոր ու հայրենասեր մարդու նվիրումի ոգուն հատուկ է բարեգործության այս բխումը: Նա տվել է երկյուղած բարեպաշտությամբ, օժանդակել է լիաբուն կերպով եկեղեցական-ազգային կարիքներին, մշակութային-հայրենասիրական ձեռնարկներին, տվել է, հային հատուկ բուխ սրտով, որովհետև քրիստոնեական ըմբռնումով տալիս հոգևոր պարտականություն է և, միաժամանակ, անսպառ աղբյուր հոգեկան անկողնայուն երանության:

«Եղիցին ձեզ քարինքս այսոքիկ ի յիշատակ» (Յես. Դ 7) «յազգէ մինչև յազգս» (Սաղմ. ԺԱ 18):





Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱՋԳԷՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՐԵՐԱՐՔ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ

Նոր Վեհաբանի երկրորդ հարկ բարձրացող կամարակապ սանդղատան երկու պատերի վրա ոսկյա տառերով, մարմարյա մեծ բարի վրա, այս վերտառության ներքո, արձանագրված են Հայոց Հայրապետի զանակալության անցնող 16 տարիների ընթացքում Մայր Աթոռի բարերարների անունները (տես ներդիր երկու նկարները), մինչև 31 դեկտեմբեր 1970 թվականը:

Մայր Աթոռի բարերարների առաջին ցանկը գլխավորում է ազգային մեծ բարերար հանգուցյալ **Գալուստ Ա. Կյուլպենկյանը**, որը որպես Մայր Աթոռի հարազատ զավակ ա. Էջմիածնի Մայր տաճարի ամբողջական վերանորոգման համար կտակել էր 400.000 դրվար:

Այս գումարը ամբողջությամբ ծառայել է իր նպատակին:

Մայր տաճարի Ավագ սեղանի ետին կա հետևյալ արձանագրությունը Գալուստ Ա. Կյուլպենկյանի նվիրատվության մասին.

«Յուսովն անմահին Աստուծոյ, ի հայրապետութեան Տ. Տ. Վազգենայ Առաջնոյ սրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց կտակաւ բարեպաշտ Գալուստի Կիւլպենկեանի, ի յիշատակ ծնողաց իւրոց Սարգսի եւ Տիբուհոյ յամի Տեառն 1957—1965 վերանորոգեցաւ Մայր տաճարն ա. Էջմիածնի, կանգնեցաւ մարմարակերտ Աագ ա. սեղանն, վերաշինեցաւ մարմարեայ Իջման ա. սեղանն, վերականգնեցաւ հարաւային գմբէթն, պատեցան մարմարաշէն սալօք յատակը Մայր տաճարի, աւանդատանց եւ թանգարանի, նորոգեցան սիւնը, կամարը եւ տանիքն կաթողիկէիս, տաճարն զարդարեցաւ ջահիւք եւ գորգովք, կատարեցան այլ վերանորոգութիւնք եւ բարեզարդութիւնք եւ շրջապատոն տաճարի սալարկեցաւ եւ պարսպապատեցաւ ի վալէրումն ազգիս հայոց:

Որք երկրպագէք, յիշեցէք ի Քրիստոս Յիսուս: Կտակն բարերարի Գալուստի Կիւլպենկեան իրագործեցաւ ի ձեռն Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան որ ի Լիսաբոն»:

Դ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱԶԳԷՆ Ա ԿԱԹՈՒՍՈՍ
ԲԱՐԵՐԱՐԷ ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ՍԲ ԷԶՄԻԱՇՆԻ

ԳԱՆՈՒՅՑ Ա. ԿԻՒՂԵԼԿԵՆ	ԼՈՏՏՈՆ
Զ. ԿԻՒՂԵԼԿԵՆ ՀՈՄԱՐԿՈՒԹՆ	ԼԻԶՐՈՆ
ԱՐԳԱՐԵՆ ԽԱՄԱԿԱՆՈՒԹԻՆ	ԼՈՏՏՈՆ
ՀՈՒԹԱԽԵ ՌՈԶ ՌԻԲԻ	ԼՈՏՏՈՆ
ԵՐՈՒՄԵՆ ՀԻՄՍԻՍԵՆ	ՄԻԱՆՏ
ՍԱՐԳԻՍ ՔԻՐԻՔՅԵՆ	ԼՈՏՏՈՆ
ՊԵՏՐՈՍ ԱՆԷՔՍԱՆԵՆ	ԼՈՏՏՈՆ
ՍՏԵԹԱՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵՆ	ՏԻԹՐՈՅՈՒՆ
ՕՆՆԻԿ ՄԱՆՈՒԿԵՆ	ԿՈՍՏ-ԻՏԱՆԻՍ
ՀԵՐԻ ԴԸՐԹ ՄՈՎՍԵՆ	ՄԱՅՐԱՆ-ՄԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՂԱԶԱՐԵՆ	ԺԸՆԵՒ
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԱՐԱԳՅԵՆ	ԱՏՏԻՍ ԱՊՍՏՈՍ
ԼԵՒՈՆ ԵՐԶԼԿԱՅԵՆ	ԱՏՏԻՍ ԱՊՍՏՈՍ
ԿԱՐԴԻՍ ՃԼԿԸՏԸՐԵՆ	ԷԻՈՆ
ՄՈՒՇԵՂ ՊԵՏՐՈՍԵՆ	ՓԱՐԻԶ
ԿՈՊԵՆՀԱԳ ՍԷՖԵՐԵՆ	ԴՈՒԷՆՈՍ ԱՅՐԻՍ
ՍՈՒՐԵՆ ԳԱԼԵՏԵՐԵՆ	ՀԱԼԷԴ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒ ԿԱԶՄԵՆ Ս ԿՈՂԱՍԻ
ԲԱՐԵՐԱՐԻ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ ԷԶՄԱՄԵՆԻ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ	ՆԻՒ-ԵՈՐԹ
ԱԼԵԲՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ	ՏԻԹԻՈՅԸ
ՀԱՅԿ ԳԱՒՈՒԹՃԵԱՆ	ՆԻՒ-ԵՈՐԹ
ԵՂՈՒԱՐԴ ՄԱՐՏԻԿԵԱՆ	ՏԻԹԻՈՅԸ
ՊԵՏՐՈՍ, ՀԱՄԱՅԵԱԿ ՄԱՐԱՅԵԱՆ	Ս. ՖԱՆԱՍԻԱՅԸ
ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՄԱՐԳԻՍ ՏԻԱՐՊԷԹԻՐԵԱՆ	ՊԱՅՐԵԱ
ՏԱՏՈՒՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ	ՆԻՒ-ԵՈՐԹ
ՍՏԵՓԱՆ ՄԱՐԿԵԱՆ	ՄԻԼԱՆՈ
ՀԱՅԿ, ԹՈՐԳՈՍ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ	ՄԻԼԱՆՈ
ԱՐԾՐՈՒՆ ԶՐԲԱԾԵԱՆ	ՄԱՐՍԷՅԼ
ԿԱՐՊԻՍ - ՌՕԺԷ ԶՐԲԱԾԵԱՆ	ՓԱՐԻԶ
ՆՈՒՐՀԱՆ ՖՐԷՆԿԵԱՆ	ՓԱՐԻԶ
ՄՈՒՇԵՂ ՃԻԼԻՃԵԱՆ	ՄՈՆԱԲՕ
ՆԱԾՈԼԷՈՆ ՊՈՒԼՈՒԹԵԱՆ	ԼԻՈՆ
ԳԷՈՐԳ ՊԱԳԸՐՃԵԱՆ	ՓԱՐԻԶ
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ	ՊԵՏՐՈՒԹ
ԳԱՌՆԻԿ ՊԱԶԱՐԵԱՆ	ՍԱՆ-ԲԱՍՈՒԼՕ

Հայոց Հայրապետի գահակալության 16 տարիների ընթացքում Մայր Աթոռի բարեգարդության, շինարարական-վերանորոգչական աշխատանքների, ինչպես նաև հայրենի երկրում գտնվող այլ պատմական վանքերի, եկեղեցիների վերանորոգության համար, ինքնաբուխ սրտով և մեծ սիրով կարեվոր նվիրատվություններ կատարվեցին և սրանցով էլ իրագործվեցին մեր շինարար Հայրապետի շինարարական-կառուցողական մեծ ծրագրերը:

Եվ ահա այսօր, Հայոց Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Մայր Աթոռը, իր օրհնության հետ միասին, գալիք սերունդների երախտագիտությանն է հանձնում անունները Մայր Աթոռի վերջին շրջանի (1957—1970) հարազատ այն զավակների, որոնք այս բարի և եկեղեցաշեն նպատակով նվիրատվություններ են կատարել:

Մայր Աթոռի բարերարներ են կոչվում այն նվիրատուները, որոնք նվազագույնը **տասն հազար դրվար** և դրանից ավելի մեծ գումարներ են նվիրել Մայր Աթոռին:

Մայր Աթոռի բարերարների այս երկու ցանկերում արձանագրված անունները ծանոթ ազգային-հասարակական դեմքեր են, որոնք իրենց սրտաբուխ նվիրատվություններով բարի անուն են վաստակել անմահացնելով համազգային այս մեծ և օրհնյալ Հաստատության մեջ **իրենց ծնողների և իրենց անունն ու հիշատակը:**


Քրիստոնեական ըմբռնումով տալը հոգևոր պարտականություն է և միաժամանակ անապառ աղբյուր հոգեկան անկողոպտելի երանության և երջանկության:

Հայ եկեղեցու գոյության, կենսունակության հիմնական ազդակներից մեկը բարեգործության այս ոգին է, որը միշտ ամուր հիմք է հանդիսացել վանական-եկեղեցական, մշակութային և կրթական հաստատությունների բարեգարդությանը:

Դարերի պատգամն է՝

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանս Լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

«Երանի՛ է մանաւանդ որ ունիցի յիշատակ ի ս. Էջմիածին»:





Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ

ԲԱԶՄԱՇՆՈՐՀ ՊԱՀՔԻ ԿԱՏԱՐՅԱԼ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Ի ՏԵՐ

Պահքը դաստիարակում է մարդկանց: Որովհետև ինչպես որ դաստիարակը պատվիրում է երեխաներին՝ հեռու մնալ վնասակար գործերից և օգտակար գործեր կատարել և անժողկալ ձևով չզբաղվել անօգուտ արարքներով, այսպես էլ պահքը մեր վրա դրվեց՝ որպես խափանիչ բոլոր վնասների անժողկալության, որ հոգիների ու մարմինների հակամետությունն է մեղքերի հանդեպ, որպեսզի կատարենք սրբությունը Աստուծո ահով. անցնենք անքննելի անդորրությանը, որ կա և մնում է պահեցողներին: Եվ (չլի՞նենք) որովայնամուկների նման, որոնք նրստեցին ուտելու և ըմպելու և վեր կացան պարելու, և բոլորը իսկույն սպանվեցին Տիրոջ բարկությունից: Որովհետև նրա պատվիրանները չպահեցին, այլ զազրելի դարձան իրենց մտքերով, պահքի հրամանները անարգեցին որովայնամուկությամբ, չմնացին ուխտի մեջ և չհալատացին խոստացված պարգևներին ու բարկացրին Աստծուն, և Աստված նրանց հարվածներ հասցրեց ու սպանեց: Իսկ ովքեր մնացին խիստ պահքի մեջ և համբերության ու ժողկալության նիգցույց տվեցին, պահեցին Տիրոջ հրամանը և ժողկալներ մնացին օրհնադրված պահքի մեջ սրբության բոլոր բարեձև կարգերով, նրանք հանգիստ կոտնեն ի Քրիստոս:

Որովհետև պահքը մեզ համար բուժիչ է, որովհետև ինչ որ անժողկալությամբ մթերված է հոգու և մարմնի մեջ, մեղքերի տեսակ-տեսակ վնասները և միմյանց վրա կուտակված ու նեխած ալյանդակ խորհուրդ-

ներն ու անմաքուր բարքերը, ժողկալության պահք մտնելով նորոգվում և սրբվում է մեղքերի մթերումից և դառնում սրբության բնակարան: Որովհետև պահքը, մոտենալով ժողկալներին, առողջության դեղ է շնորհում և հոգու ջերմ սիրով հալեցնում աղտոտ մթերումները և առաքինությունների հաւաքում: Եվ բարեհամբույր վարքով ցամաքեցնում է զազրահոտությունը և մեջտեղից վերացնում, առողջություն է տալիս (այն) հիվանդներին, որոնք ապականված են մեղքերով: Եվ առողջությունից հետո սրբություն ու անարատ վարք է դնում՝ սրբության համար նահատակված անձի մեջ: Եվ նրան, որ վիրավորեց իրեն անմաքուր ցանկությամբ և անխտիր անատակությամբ, կհարվածի սրբության և անարատ անբծությամբ. որովայնամուկությունը միշտ պահքով կդատի և կըլի չար սովորությունը նրանից: Որովհետև մեղքը և մեղքի տեղը կդատապարտվեն Քրիստոսի շնորհների միջոցով և կատանան կատարյալ առողջություն՝ խոստովանության ու ապաշխարության փրկական խորհրդով՝ պահքով և աղոթքով վնասներից պաշտպանված: Եվ այսպես կատանան հաղթության պատկը, որ գոյություն ու պարծանքով է հորինված պահեցողների համար: Որովհետև բազմատեսակ են պահոց կարգերը և բազմաթիվ օգուտ են բերում այն անձանց, որոնք սիրում են այն և միշտ պահում:

Պահքը կատարյալ հավատքի ճշմարտության ազդեցությունն է՝ Աստծուց ակնկալված, և հույսը առողջության, որ առաջնոր-

դում է անարատ, անքիժ և սուրբ երախտի-
քով Աստծու հանդեպ (ունեցած) սիրուն:
Եվ նրանով դադարում են մտքերի ալլանդա-
կությունը և զգայությունների շփախտությունը՝
աչքին տեսնելու համար և ականջին լսելու
համար, լեզվին խոսելու համար և ձեռքին
գործելու համար և ուղիղ սրտով ու ճաշա-
կելիքով պարկեշտության համար: Այս բո-
լորով մնալով սուրբ պահքի մեջ, և զգայու-
թյունների ամբողջ ցանկությունը արմատա-
խիլ անելով, բարիքի մոռացումն ենք արթ-
նացնում աստվածամիտությանն անուղղա-
յունով: Եվ հրաժարվելով մեղքի չար լու-
ծություններից՝ պոռնկությունից, որովայնամո-
լությունից, նախանձից, բարկությունից, ա-
գանությունից, գողանալուց, խաբեքայություն-
ից, երդումից, չարախոսությունից, զրկե-
լուց, նենգությունից, ցատումից, թշնամանք-
ներից, ռիսակալությունից, ծուլությունից, ծի-
ծաղելուց, խեղկատակություններից, հարբե-
ցողությունից և բամբասանքներից: (Պետք
է) այսպիսի մահաբեր լուծույթն դուրս փըս-
խել ուղիղ խոստովանությամբ և ընդունել
կյանքի դեղը ու հոգու սիրով առողջացած՝
ստաքինության ասպարեզով պայքարել ընդ-
դեմ վարքի վնասակար ուղղության: Եվ
միասնությամբ հնազանդվելով բարեբար
կամքին, փակենք չար բարքերի ողջ հոր-
դումը: Եվ միշտ արգելենք մտքի չար ու
դատն շարժումները և զգայությունները, որը
պահքի լրումն է ու կատարումը, որ հասցը-
նում է կյանքի դոմերին: Ժուժկալությամբ և
համբերատարությամբ արմատանանք պահ-
քի մեջ, և զգուշությամբ, զգաստ վիճակում
մնալով և հորդորելով գութ և ողորմություն
հեռավոր և մերձավոր կարոտյալներին՝ ի
փառս և ի պարծանս ամբողջ ներկա վիճա-
կի և մեռելների հարությունը:

Պահքը մարմնի մեջ եղած հիվանդություն-
ները դուրս է հանում, ինչպես մաղձի դեղը,
որը երբ ընդունում ենք, մաղձը դուրս է
փխտում և առողջություն պարգևում մար-
դուն, այսպես և պահքը՝ մեղքը: Որովհետև
երբ կերակուրները պակասում են, մարմինն
էլ հանգստանում է և արբւում: Որովհետև
մարմնի հետևից գնալ, անձի կորուստ է նը-
շանակում, իսկ հոգու հետևից գնալ՝ Տիրոջ
մոտ հավիտենական կյանք:

Պահքը զորացուցիչ է հոգևոր վարքերի
համար և խափանիչ՝ մարմնական շարժում-
ների համար, որովհետև մեկը զորանալով,
սկսարանում է մյուսը: Որովհետև ինչպես որ
գիշատիչ թռչունները անխնա ուտելուց տը-
կարանում են թռչելիս և հեշտությամբ են
բռնկում որսացողներից ի մահ, իսկ սակա-
վակները արագաթռչիչ են և որսացող-
ների որոգայթների համար անորսալի, նույն-
պես և պետք է նկատի ունենալ որկրամու-

նեքին և սուրբ պահքի մեջ պարկեշտներին:
Պահքը աղ է, որ անարատությամբ քաղց-
րացնում է հոգիների և մարմինների մեղքե-
րի աղսեղության նեխվածքները և քաղ-
ցրացնում է ս. Հոգու կամքի համաձայն ան-
արատությամբ, ինչպես որ աղը երկրից է
դուրս գալիս և քաղցրացնում շատ ուրիշ բա-
ներ:

Պահքը մարդկանց հորդորում է ապաշ-
խարության, ուղղության մեջ դնում և խոս-
տովանության կարգի համաձայն լուծում
մեղքերը: Որովհետև անբաններ են հա-
մարվում նրանք, որոնք չեն գիտակցում
պահքի միջոցով սրբության մոտենալու Տի-
րոջը: Իսկ իմաստուն են նրանք, որոնք
կյանքի հույսի առհավատչան են ընդունել
իրենց մեջ, և հիմարներ են նրանք, որոնք
իրենց կապել են պարտքի հուսահատու-
թյամբ: Երկուսին էլ հարկավոր է պահքը,
որովհետև նա, որ կատարյալ է գիտության
մեջ, պահքը քաղցրացնում է (նրա) սրբու-
թյան ճաշակը, Տիրոջ հաճույքի համաձայն,
իսկ տխմարներին դրդում հավատքի մշտա-
րության գիտությանը (ծանոթանալու): Եվ
որոնք սրբության կենդանի են, պահքը պա-
հում են ամուր կերպով և անարատությամբ:
Իսկ որոնք մեղքերով մահացել են, պահքը
նրանց կենդանացնում է, նրանց հետ շաղա-
խելով ողջ արդարությունը: Որովհետև ինչ-
պես որ կերակուրները աղով համեմվում են
և մարդկանց պետքերի համար կրակով ա-
նուշանում, այսպես և մտքի և մարմնի հա-
կումները պահքի միջոցով համեմվում են
Հոգու շնորհներով և նվիրվում ի մեծություն
աստվածային իշխանության և խաղաղու-
թյուն շնորհում: Որովհետև ս. Հոգին ա-
նարգվում է անժուժկալ որկրամոլությունից
և անառակների զվարճությունից, որոնք ի-
րենց հանձնում են ցուրտության ձեռքը: Որով-
հետև ինչպես որ Ադամի և Եվայի անժուժ-
կալությունը անձեք և մահ բերեց, այնպես
էլ նրանից ծնվածները, որ նույն անժուժկա-
լությունն ունեն, բարուց հեռու, որովայնա-
մոլության պիտի կործանվեն: Իսկ Փրկչի
պահքը և ժուժկալությունը վերացրեց թըշ-
նամությունը մեջտեղից և Աստծուն հաշտեց-
րեց մարդկանց հետ, խաչի և կամավոր չար-
չարանքների միջոցով, մարդիկ, որոնք հա-
վատացին կենսաբեր քարոզությանը, որ
մարդկանց կոչեց կյանքի վերստին նորոգ-
վելու:

Պահքը հզոր պարիսպ է և ամուր դուռ, որ
պահում է մեր խորամանկ թշնամու վնասա-
կար մոտքից: Որպեսզի չլինենք անժուժկալ,
ինչպես Հեղիի որդիները, որոնք Աստծու
բարկությունը շարժեցին իրենց և իրենց հոր
և Աստծու ժողովրդի վրա: Այլ լինենք ժուժ-
կալ, ինչպես Սամվելը, որ մանկությունից

սնվելով պահքով, եղավ մարգարեների գլուխը: Պահքը հանգցնում է ցանկության բորբոքված հոտը, որովհետև ինչպես որ կրակը մվագ նյութից հանգչում է, նույնպես և որովայնամոլությունը և հարբեցողությունը պակասելով, ցանկության բոցը հանգչում է, և սրբությունն ու արդարությունն է բորբոքվում պահքով ամրանալով: Պահքը ցամաքեցնում է պիղծ գիշությունը և, ինչպես երաշտից նեխելով երկիրը չորանում է, նույնպես մարմինը զզվելով գիշության զազիր այստից, սրբվում, անուշահոտ է դառնում: Պահքը արգելում է պատանիների ցանկության եռանդը, որ այստի կրակով տոչորում է թշնամու շարժումներից: Պահքը դադարեցնում է լիսնությունը, որ ուտելուց և հարբեցողությունից է ստաշանում, որովհետև մաքրված մարմինը վերստին է հաստատվում սրբության: Պահքը խափանում է հույզերը մտքի և մարմնի, որոնք պոտորվում են ցանկությունների հոսքի ուլիտերից և, մաքրելով, ոռոգում է իմանալի և հոգեկիր երկրները:

Պահքը խաղաղ նավահանգիստ է ախտերի ծովածուսի ալիքների և բոլոր այլ վնասների և առաջնորդում է դեպի կյանքի նավահանգիստը, որպեսզի չվնասվի որկրամոլությունից և հարբեցողությունից ի մահ, մեղքերի ծովում ալեկոծվելով: Պահքը զալով խաղաղություն է բերում ամբոխներին, հանգրստացնում ծառաներին և բոլորին առաջնորդ դառնում՝ որպես զգաստություն վերինների (մասին) խորհելու, որ են ի Քրիստոս:

Պահքը սանձ է ստահակների համար, որոնք անկաշկանդ են անիրավությունների մեջ: Որովհետև ինչպես որ սանձը ձիու բերանն է դրվում և նվաճվում ողջ մարմինը ու անում սանձ բռնողի կամքին՝ հոգևոր պատերազմի համար: Իսկ նրանք, որոնց միտքը վառվում է արդար և սուրբ խորհուրդներով, զգայարանը կազմված պատվիրանապահությամբ, պահքի ամբողջությունը չունի, երբ մարտ սանձազերծվի, հեշտությամբ կբռնվի:

Առավել ևս զգուշացնում է մահի և գինուց (հեռու մնալ), խրատի խոսքով, որովհետև գինին ստավել հիմարացնում է զգայությունները և միտքը և եռ է տալիս ցանկությունները և անասկության է առաջնորդում, մանավանդ պատանիներին, և մարմիններից գիշության հոսք է լինում: Գինին թմրություն է սրտի, պապանձում՝ բերանի, խախտ՝ աչքերի, խլություն՝ ականջների, հաշմում՝ ձեռքերի, գայթակղություն՝ ոտքերի, ցնորք՝ խորհուրդների, ծանրություն՝ քնի, թշնամի է արդարության: Գինին բացառում է երկյուղը, հեռու մղում պատկառանքը և պատվիրանների հիշատակները քամահրում, սուրբ սիրտ

խնամքը զանց է առնել տալիս և շեղում ուղիղ հավատքից, անեղ դատաստանը անհիշելի է թողնում և չի թույլ տալիս մտաբերել մահը և անվախճան տանջանքները:

Այս ասելով հիվանդներին և տկարներին չեմ արգելում փոքր ինչ գինի օգտագործել, առաքյալի խրատի համաձայն, ստամոքսի և հաճախ երևացող հիվանդության համար տկարներին և ծերերին, իսկ նրանք, որ առողջ են և դեռաստի, թող զգուշանան մահից և գինուց, որպեսզի հեշտությամբ չենթարկվեն ամենօրյա թշնամուն, որսվելով նրանից նրա կամքին ենթարկվելու համար: Գինին և հարբեցողությունը ապականում են կատարյալ իմաստուն մարդկանց, իսկ ուր մնաց թե մտքով և մարմնով անկատարներին: Եվ ինչպես որ կրակով տոչորում և վառվում է ցանկության բոցը, և կրակը միայն մարմին է այրում, նույնպես և միտք և գինին՝ հոգիները ցանկության շարժումով: Եթե հոտը առանց վառելանյութի հանգչում է, ապա և ցանկությունը՝ պահքից: Իսկ եթե պատանեկությունը անարգել ուտելու, ըմպելու և անասկության մեջ լինի, ականջ չի դնի ողջախոհ դառնալու սրբությունների մեջ, այլ եռ զալով ցանկությունը որովայնամոլությամբ, թափում է հոսանքները և այրում այն բոլորը, ինչ որ գտնում է ախտի սիրով, և ինքն իրեն սրտմոլության և հաղորդակցությունների դատաստանն է կազմում: «Որովհետև նրանց որդը,—ասում է մարգարեն,—չի ուշնջանում, և կրակը չի շիջանում, և ամենայն մեղեքն բանի տեսիլք են ունենում»: Այսքան պատիժներ ունեն որովայնամոլները և հարբեցողները, և պատիժներ, որոնք հրաշատնում են նրանց մեջ և ապականում նրանց մարմինները պես-պես գարշելի ախտերով:

Ծշմարիտ պահքը հոգիների և մարմինների վերաբերյալ ամեն տեսակ ցանկությունները հեռու է վանում՝ հետևելու ամենայն արդարությունների և ժուժկալ լինելու այն ցանկությունների մեջ, որոնք կոչվում են հոգու և մարմնի դեմ՝ ի վերացումն մեղքերի: Եվ պետք է տեսապես մնալ բարեպաշտ ջանասիրության մեջ, ի Տեր մեր Հիսուս Քրիստոս, որին փառք հալիտյանս. ամեն:

(Թարգմանություն քաղվածաբար «Սրբոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսատրչի Յանախապատում ճառք լուսատրք», ճառ Թ, էջ 90—102, տպարան Մայր Աթոռոյ Էջմիածնի, 1894):

Գրաբար բնագրից թարգմանեց հոգեվոր ճեմարանի Բ լսարանի ուսանող

Սամվել սարկավազ Պետրոսյանը



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ո Ւ Մ

Մարտի 5-ին, կիրակի.—Դ կիրակի Քառասնորդական պահոց (Տնտեսին).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քին. Մարտիքյանը, իսկ «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Վարդան արեղա Դիլանյանը՝ «Տուր զհամար տնտեսութեան Բոյ» (Ղուկ. ԺԶ 2) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Մարտի 9-ին, հինգշաբթի.—Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ տ. Վահան եպս. Տերյանը այսօր գործուղվեց Հնդկաստան՝ տանելու Նորին Սրբության օրհնություններն ու ողջույնները հնդկահայ եկեղեցական համայնքներին և զբաղվելու տեղի հայ գաղութի պատմության մի շարք հարցերի ուսումնասիրությամբ:

* *

Մարտի 12-ին, կիրակի.—Ե կիրակի Քառասնորդական պահոց (Դատաորին).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քին. Հակոբյանը, իսկ քարոզում է տ. Հովսեփ արեղա Հակոբյանը՝ «Բախեցէք և րացցի ձեզ, խնդրեցէք և տացի ձեզ» (Ղուկ. ԺԱ 9) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Նույն օրը, Վեհափառ Հայրապետի հրավերով, ուխտավորաբար Բուենոս-Այրեսից, Բելյուօթի վրայով, Մայր Աթոռ է ժամանում Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ տ. Բարգեն արքեպ. Ապատյանը:

Օդանավակայանում սրբազանին դիմավորում են Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը, տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը, տ. Վարդան արեղա Դիլանյանը, տ. Մասիս արեղա Գալստյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիտյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի քարտուղար Պարզե Շահբազյանը:

Տ. Բարգեն արքեպ. Ապատյանը, Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, ներկայանում է Վեհափառ Հայրապետին:

* *

Մարտի 14-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Վեհարանում բարեհաճում է ընդունել այցելությունը Արարատյան թեմի թեմական, եկեղեցական խորհուրդների, Վերստուգիչ հանձնաժողովի անդամների և Երևանում քահանայազործող ավելի քան քսան քահանա հայրերի:

Վեհարանում սույն հանդիպմանը ներկա են լինում նաև տ. Կոմիտաս և տ. Հուսիկ եպիսկոպոսները:

հոյոր ներկաները աջահամբույրով առանում են Հայոց Հայրապետի օրհնությունը:

Նորին Սրբությունը սիրով ողջունում է ներկայությունը Արարատյան թեմի հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներին, հետաքրքրվում թեմի եկեղեցական հարցերով և իր հայրապետական ջերմ ցանկությունը հայտնում Երևանի երեք եկեղեցիները՝ ս. Սարգիսը, ս. Հովհաննեսը և ս. Զորավորը, տեսնել ավելի բարեզարդ վիճակում, թե՛ արտաքինապես և թե՛ ներքինապես:

Հայոց Հայրապետը հատկապես նշում է, որ ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցին, այս տարի այնտեղ կատարվող շինարարական-վերանորոգչական աշխատանքներից հետո կդառնա մայրաքաղաքի զարդերից մեկը, որպես եկեղեցական կառույց և պատմական հուշարձան:

Հայոց Հայրապետը ապա խոսում է հաջորդ մի քանի տարիների ընթացքում ս. Հովհաննես և ս. Զորավոր եկեղեցիներն ու նրանց շրջապատը էլ ավելի բարեկարգված ու ավելի ներկայանալի վիճակում տեսնելու իր արտագին ցանկության, ինչպես նաև Արարատյան թեմում գտնվող տասնհինգ և ավելի այլ եկեղեցիների և վանքերի հետագա վերանորոգության և բարեկարգության մասին:

Հայոց Հայրապետը շեշտում է, որ եկեղեցական այս վերանորոգչական և բարեզարդման աշխատանքներում մեծ անելիքներ ունեն թեմի հոգևորական, թեմական ու եկեղեցական մարմինները, միասիրտ և համատեղ գործակցությամբ:

Այնուհետև Հայոց Հայրապետը հայտնում է, որ հայրապետական փոխանորդ տ. Վահան եպիսկոպոսը իր կարգադրությամբ գործողված լինելով Հնդկաստան, հայրապետական փոխանորդի պաշտոնակատար է նշանակված թեմական խորհրդի ատենադպիր տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյանը, որը կատանձնի վերահսկողությունը և ղեկավարությունը Արարատյան թեմի ընթացիկ գործերի, հայրապետական իր անմիջական հսկողության ներքո, մինչև ցնոր տնօրինություն:

Իր հայրապետական խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը օրհնում է Արարատյան թեմի հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներին և բարեմաղթում նորանոր հաջողություններ նրանց եկեղեցանվեր գործունեության ճանապարհի վրա:

• • •

Մարտի 17-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի հանդիսության սրահում, Վեհափառ Հայրապետի բարձր

նախագահության ներքո, արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանը բովանդակալից դասախոսություն է կարդում «Ներսես Շնորհալին որպես բանաստեղծ և երաժիշտ» թեմայի շուրջ:

Դասախոսությանը ներկա են լինում տ. Բարգեն արքեպ. Ապատյանը, տ. Կոմիտաս, տ. Հուսիկ եպիսկոպոսները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մույրավանքի պաշտոններությունը:

Դասախոսության վերջում շնորհալի երգչուհի Գոհար Գաապարյանը հանդես է գալիս Ներսես Շնորհալու երաժշտական ստեղծագործությանը պատկանող հետևյալ սրանչելի շարականների արտագրավ կատարումով:

ա) Պահոց Զ կիրակի կանոնի օրհնությունը՝ «Որ գլխորհուրդ քո գալստեանդ»:

բ) Վարդավառի Բ օրվա կանոնի մանկունքը՝ «Օրհնեցէք Մանկունք»:

գ) Ծննդյան տաղ՝ «Ստեղծող մանկանց»:

դ) Հատված «Որք զՔրովբէիցն» արքասացությունից՝ «Ալէլուիա»:

Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբի անդամ, երգիչ Գևորգ Նիխազարյանը ապրումով կատարում է Հովհան Ոսկերեքանի նվիրված մանկունքը՝ «Որ յանկիզբն ի Հօրէ»:

Հանդիսության վերջում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարությանը, հանուն Հայոց Հայրապետի և բոլոր ներկաների, արտագին շնորհակալություն է հայտնում երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանին՝ իր այնքան շահեկան և հետաքրքիր դասախոսության համար, և սիրված երգչուհի Գոհար Գաապարյանին ու Գևորգ Նիխազարյանին՝ իրենց այնքան ապրումով և հասկացողությամբ կատարած շարականների երգեցողության համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Վեհափառում ընդունում է այցելությունը երաժշտագետ Ն. Թահմիզյանի, երգչուհի Գ. Գաապարյանի և երգիչ Գ. Նիխազարյանի և նրանց հետ զրույց ունենում հոգևոր երգերի բանաստեղծական և երաժշտական-կատարողական բարձր արվեստի մասին:

• • •

Մարտի 18-ին, շաբաթ.—Տօն է սրբոյն Գրիգորի Լուսաորչին մերոյ տոկալի չարաբանացն և մտին ի վիրապն:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում նորընծա տ. Հովսեփ արք. Հակոբյանը, իսկ բարոգում է տ. Վարդան արք. Դիվանյանը՝ «Մերոյ լուսաորութեան լուսաոր վե-

բակացու և նախաշտիղ» (Խորենացի) բնա-
բանով:

Նույն օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին այցելություն է տալիս Իրաքի համայն եզդիների կրոնապետ Միհր Բազետինը, որը հյուրաբար գտնվում էր Հայաստանում՝ որպես հյուրը եզդիների համայնքի:

Միհր Բազետինին ողեկցում էր Երևանի ռադիոյի եզդիներին տրված հաղորդումների բաժնի աշխատակից Մուրադ Խուրդյանը:

Հայոց Հայրապետի և Միհր Բազետինի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

Մարտի 19-ին, կիրակի.—Քառասնորդական պահոց (Գալստեան).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քին. Մարտիքյանը, իսկ քարոզում է Գործնա Ս. Եղիշե քին. Բաղրամյանը՝ «Ռու ես վեմն և ի վերայ այդր վիմին շինեցից գեկեղեցի իմ» (Մատթ. ԺԶ 48) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, ս. պատարագին ներկա գրող-վեպերիստ, Հայոց Հայրապետին են այցելում ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Եվգենի Վախտանգովի անվան թատրոնին առընթեր Ծչուկինի անվան թատերական ինստիտուտի ռեկտոր, պրոֆ. Զախավա Բորիս Եվգենովիչը իր տիկնոջ՝ Զախավա Նատալյա Իվանովնայի հետ:

Հարգելի հյուրերին ողեկցում էին դերասան Լորենց Առուշանյանը և բեմադրիչ Հրաչյա Աշուղյանը:

Հայոց Հայրապետի և արվեստագետների միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ հայ և ռուս դասական թատրոնի մի շարք հարցերի շուրջ:

Մարտի 22-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել այցելությունը լիբանանահայ «Մասիս» մարզական միության մի խումբ մարզիկների, որոնց թվում՝ Զավեն Դեմիրճյանի և Կարպիս Բերբերյանի:

Մարտի 23-ին, հինգշաբթի.—Այսօր, ժամը 13-ին, Հայոց Հայրապետին են այցելում հյուրաբար Հայաստանում գտնվող՝ Մոսկվայում Հնդկաստանի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Քվիշնատտ Շիվատտ Շելվանքարին իր տիկնոջ հետ, և պաշտոնական այլ անձինք:

Հարգելի հյուրերը, այցելելուց հետո Մայր տաճար ու եկեղեցական թանգարան, Վեհափառում զրույց են ունենում Հայոց Հայրապետի հետ ջերմ մթնոլորտում:

Մարտի 26-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Ծաղկազարդի տոնի հոգևոր-եկեղեցական ու հայրենասիրական մեծ նշանակության մասին՝ «Եւ դիրդեցա քաղաքն ամենայն» (Մատթ. ԻԱ 10) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը անվանի երգահան Արամ Խաչատրյանի, որին ընկերակցում էին միջազգային մրցույթի դափնեկիրներ Կարինե Գեորգյանը ու Նիկոլայ Պետրովը, որոնք ներկա էին եղել Մայր տաճարում ս. պատարագի արարողությանը:

Հայոց Հայրապետի և մեծանուն հայ երգահան Արամ Խաչատրյանի ու մյուս հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում, հայ և ռուս դասական և արդի երաժշտության վերաբերյալ մի շարք հետաքրքիր հարցերի շուրջ:

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում կատարվում է «Ռոնքացեք»-ի ավանդական կարգը՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ:

Մարտի 27-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին մասնակցում է նաև տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը:

Մարտի 28-ին, երեքշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից հրաժեշտ առնելով, Բեյրութի վրայով իր պաշտոնատեղին՝ Արգենտինա է մեկնում տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը:

Հանուն Հայոց Հայրապետի Երևանի օդանավակայանում տ. Բաբգեն արքեպիսկոպոսին ճանապարհում են տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը, տ. Գևորգ վրդ. Սերադյարյանը և տ. Մասիս արդ. Գալստյանը:

Ժամը 18-ին տվանդական հանդիսությամբ կատարվում է Մայր տաճարում «Կարգ Ուրբնությանի», վրահայոց թեմի սուսնորդ տ. Կոմիտաս եպիսկոպոսի հանդիսադրությամբ:

«Ի գիշերի հսկումն է»:

Հայոց Հայրապետի նահապետությամբ ժամը 19-ին Մայր տաճարում կատարվում է Հսկումի արարողությունը:

«Փառք ի բարձունս»-ից առաջ բարոգում է Վեհափառ Հայրապետը՝ օրվա խորհրդի փրկագործական, բարոյական ու հոգևոր մեծ նշանակության մասին:

Մարտի 30-ին, հինգշաբթի.—Առաջ հինգշաբթի. Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.


Այսօր հոգևոր ճեմարանը փակվում է գատկական տոների առիթով:


Օրվա տոնի առիթով հանդիսավոր և պատարագ է մատուցում Մայր տաճարում տ. Վարդան արդ. Դիլանյանը:

Հավարտ և պատարագի հոգևոր ճեմարանի ողջ ուսանողությունը և հաղորդություն է ստանում:

Մարտի 31-ին, ուրբաթ.—Յիշատակ չարչարանաց և խաչելության Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Երեկոյան, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Թաղման տվանդական կարգը՝ Մայր տաճարի շուրջ եռադարձ թափորով, ողջ միաբանության և ճեմարանի ուսանողության մասնակցությամբ, խոունեքամ հավատացյալների ներկայությամբ:





ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈՅԱՆ

(Բանասիրական գիտությունների դոկտոր)

5—7-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԾԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԸ

Ծարականների աղբյուրների մասին խոսելիս նշել ենք, թե շարականագիրները որտեղից են վերցնում իրենց նյութն ու թեմաները: Այժմ տեսնենք՝ ինչ բնույթ են կրում այդ թեմաները և ինչպես են մշակվել ու դարձել շարական:

Ծարականների թեմաները բաժանվում են երեք հիմնական խմբի. առաջին՝ Բրիստոսի մարդեղության հետ կապված տոներին նվիրված շարականներ, որոնք կազմում են մեր Ծարակնոցի կեսից ավելին. երկրորդ՝ Տիրամոր տոներին նվիրված շարականներ (ավելի քան վաթսուն միայն «Մեծացուցե»), որոնց թիվը հասնում է մոտ հարյուրի: Վերջապես, երրորդ՝ ազգային և համաքրիստոնական հոգևոր հայրերին, հավատացյալ թագավորներին ու հավատի համար նահատակված սրբերին վերաբերող շարականներ:

Այդպիսին է մեր Ծարակնոցի բովանդակությունը: Ծարակնոցը եկեղեցական մատենագրության մեջ իր արվեստով համարվում է գերազանց մի գիրք: Այդ գերազանցության պատճառները հետևյալներն են:

ա. Հոգեպարար երաժշտությունը, որն ամենից զորեղ է ազդում հավատացյալ մարդու սրտի և հոգու վրա: «Ազդումն երաժշտական եղանակին,—գրում է Ն. Լամբրոնացին,—ընդոստուցեալ զարթոցանէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն շնորհին, քանզի չիք ինչ որ գկամս մեր յեղաշրջէ յուրախու-

թին կամ ի տրտմութիւն՝ որպէս զերգոցն, ձայն, յորժամ որպէս պարտն է լինիցի...» (Ն. Լամբրոնացի, «Պատարագի մեկնութիւն»):

բ. Ծարականները զորեղ են նաև իրենց վսեմ իմաստով, սրտահույզ խոսքերով, որոնք միացած եղանակների հետ, վեհացնում են մարդուն հոգով:

գ. Պակաս դեր չի խաղում շարականների նաև բովանդակությունը, որտեղ հեղինակները խոսացրել են Բրիստոսի Մարդեղության խորհուրդը, վարդապետական բանաձևերը, դավանաբանական և փառաբանական մոտիվները:

Բրիստոսի ծննդյանը նվիրված դավանաբանական բնույթ կրող շարականներում միաժամանակ երգի ու խոսքի ներդաշնակ ուժով պաշար է մղվում հերետիկոսների՝ Արիոսի, Մակեդոնի, Նեստորի, Եվտիմեայի և ուրիշների դեմ՝ փառաբանելով ս. Երրորդությունը՝ Հորը, Որդուն և ս. Հոգուն. «Երեք անձինք և մի բնութիւն, մի աստվածութիւն...» ինչպես երգվում է Արևագալի շարականում: Ուրեմն, վերոհիշյալ հատկությունների՝ երաժշտական արվեստի, իմաստների վսեմության և ուղղափառ դավանանքի պատճառով, շարականները հանդիսանում են քրիստոնեության վարդապետության մեր ազգային հոգևոր գանձարանը: Բազմաթիվ շարականներ թարգմանված են արևմտյան, ա-

րեպելյան բրիտանացի ժողովուրդների և ուսերեն լեզուներով¹:

Ծարականների արվեստն ունի մի քանի բնորոշ և առանձնահատուկ կողմեր. ամենից առաջ դրանց յուրահատուկ կառուցվածքն ու ձևն է: Ամեն մի շարական բաղկացած է երեք տնից՝ դարձերով ու կրկնակներով: Իհարկե կան և այնպիսիները, որոնք երեք տնից ալելի են: Սրանք այն շարականներն են, որոնք գրված են անվանակապով, հայոց այբուբենի կարգով և ունեն 5-ից մինչև 36 տուն: Անվանակապով ունենք «Ներսէս», «Գրիգորիս», «Ստեփաննոս», «Խաչատուր», «Կիրակոս», «Սարգիս», «Համան» և այլ անուններ հոդող շարականներ: Այբուբենի կարգով են գրված՝ «Առաօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Այսօր անճառ», «Արարչական», «Աստուած անեղ», «Արեգական արդարութեան», «Անձինք ևոխրեալք», «Արեւելք գիրարկին» և որիշ շարականներ: Ծարականների կառուցվածքի բնորոշ կողմերից մեկն էլ կարճ բառերի և նախադասությունների գործածությունն է. օրինակ՝

«Մեղք իմ բազում են յոժ, քան զառազ ծովու...»

«Բա՛ց, Տէ՛ր, գոռուն ողորմութեան» (Ծարակ. Երուսաղեմ, 1936, էջ 209):

«Փրկեա զիս Աստուած,
Ի բազում մեղաց ինոց» և այլն (Ծարակ. ցնգ՝ էջ 208):

Միշտ չէ, որ շարականի տները տողերով կամ ծավալով հավասար են լինում. կան մեծ և փոքր տներ: Սովորաբար բնորոշակ են լինում «Օրհնութիւն»-ների տները, իսկ «Ռդորմեա»-ներից և «Համարձի»-ներից՝ կարճ: «Հարց»-երն ու «Օրհնութիւն»-ներն էլ իրենց հերթին ունեն առանձին կառուցվածք: Հաճախ «Օրհնութիւն»-ները, քացի իրենց հիմնական երեք տնից, ունենում են մեկ, երբեմն էլ երկու-երեք լրացում, որոնք նույնպես բաղկացած են երեքական տներից: Այդ լրացումները բոլորն էլ երգվում են «Օրհնութեան»՝ ալիքներ օրվա բուն ձայնի եղանակով: Այդպիսիք են՝ Ծանոջան յոժ օրերի «Օրհնութիւն»-ները. օրինակ՝ «Խորհուրդ մեծ և սքանչելին» ունի երկու լրացում («Այսօր

ցնճան երկինք» և «Ի Հօրէ ծագեցար»)։ Երկրորդ օրվա «Այսօր Բանն ի Հօրէ» օրհնութիւնն ունի մեկ լրացում («Լոյս ի լուսոյ») և այլն (Ծարակցն՝ էջ 38—44):

Իսկ «Հարց»-երի մեծ մասն էլ ունեն իրենց լրացումը, որը կոչվում է գործածումը: Վերջինս, երբեմն երեք տնից պակաս է լինում: Թե «Օրհնութիւն»-ների և թե «Հարց»-երի լրացումները հիմնական շարականի խորացումը կամ հարստությունն են հանդիսանում: Դրանք ինքնուրույն, որոշակի իմաստ և եղանակ չունեն, այլ երգվում են «Օրհնութեան» և «Հարց»-ի եղանակով: Միշտ չէ, որ «Հարցն» ու «Օրհնութիւն»-ը երգվում են միատեսակ: Դրանք կարող են ունենալ նաև տարբեր ձայն, քաց օրվան եղանակը համարվում է «օրհնութեան» ձայնը:

Ծարականներն իրենց բովանդակությամբ ունեցել են նաև ուսուցողական նշանակություն: Սրանք միաժամանակ սովորեցրել են աստվածաբանություն և դավանաբանություն: Եվ քանի որ այդ շարականների հիմնական գաղափարը Քրիստոսի Մարդեղության շուրջն է պտտվում, ուստի, շարականագիրը, որքան էլ ինքնուրույն ու տաղանդավոր լինի, միևնույնն է, թեմաների ու նյութի միատեսակությունը, միակերպությունը և նույնիսկ նմանությունն ու կրկնությունը անխուսափելի են, որովհետև ուղղափառության պահանջը ու քարեպաշտությունը թույլ չեն տվել շարականների հեղինակներին շատ հեռանալու ս. Գրքից: Նրանք երկյուղածությամբ են օգտվել Աստվածաշնչից, աշխատելով միշտ հարազատ մնալ բնագրին: Այսպես հանգամանքն է միատեսակության գրախաղորդ պատճառներից մեկը: Իսկ ինչ վերաբերում է շարականների ձևին, պիտի ասել, որ այն քիչ է ուսումնասիրված և տակավին վերջնականապես որոշված չէ, թե դրանցից ո՞րն է արձակ, ո՞րը՝ արձակ քանադեղություն, ո՞րը՝ ազատ ոտանավոր և ո՞րը՝ իսկական ոտանավոր՝ չափածո:

1899 թվականին խոշոր վեճ քացվեց «Բազմավեպ» ամսագրի և «Մասիս» շաբաթաթերթի միջև՝ մեր շարականների ոտանավորի, տաղաչափության և կրած ազդեցությունների շուրջը: Վեճետիկյան հայր Աթոսա Տիրոջանը մի քանի հոդված գրեց «Բազմավեպ»-ում և ամեն կերպ ճգնում էր ցույց տալ, թե հայկական ոտանավորի ծագումը լինի այն գոյթան կամ հոգևոր երգ, միևնույնն է, դրանց բոլորի նախատիպը ասորականն է: Իր տեսակետն հաստատելու համար Տիրոջանը գուգահեռ էր անցկացնում հայկական և ասորական տաղաչափության մեջ, համեմատում և ցույց տալիս, որ հայկականի չափը, ուղիղը, անդամները, շեշտերը նույնն են համարյա, ինչպես ասորական-

¹ Գ. Les hymnes funebres de l'Eglise armenienne, L'Église armenienne, L'Église armenienne

Բ. Մ. Յան, Шарахан (Армянской восточной церкви), Моск. 1879 г.

Գ. Վեճետիկյան հայրերը լատիններեն թարգմանել են Աստվածամոր կանոնների շարականները:

Դ. Էռմեն Պոլե թարգմ. Կոստանդնուպոլիսի շարակ. 1840 թվին:

Ե. Կարիերը թարգ. Հոփիս. շարականները և այլն:

նինը: Տիրոջանի դեմ դուրս եկավ Եղիշե ե-
պիսկոպոս Դուրյանը և փաստերով ցույց
տվեց, որ որոշ նմանություններ բոլոր ազ-
գերի տաղաչափության մեջ էլ կարելի է այդ
նկով գտնել, բայց մի բանի նմանություննե-
րը դեռ բավական հիմք չեն տալիս մեր ազ-
գային տաղաչափությունը այդքան հեշտու-
թյամբ հայտարարել ասորական:

Հայոց հոգևոր երգի, առանձնապես շա-
րականների տաղաչափությունը դեռ ամբող-
ջապես ուսումնասիրված չէ: Մինչև պրոֆ.
Մ. Արեղյանի հետազոտությունը («Հայոց
լեզվի տաղաչափություն», Երևան, 1930 թ.),
մեր շարականների տաղաչափության ու-
սումնասիրության սկզբունքը հետևյալն էր:
Ոտանավորը կամ տաղաչափությունը, զա-
նազան կանոնների համեմատ, վանկերը
թվով կամ չափով շարելն է: Մխիթարյան
հայրերը, առանձնապես բանաստեղծ և բա-
նասեր Հ. Արսեն Բագրատունին, իրավա-
ցիորեն գտնում էր, որ տաղաչափությունը
բանաստեղծական լեզվով խոսել է սովորե-
ցնում և հանդիսանում է բանաստեղծու-
թյան քերականությունը...: Մեր հոգևոր և
աշխարհիկ ոտանավորների տաղաչափա-
կան արվեստը հիմնավորապես ուսումնա-
սիրել է Մ. Արեղյանը, ըստ որի շարական-
ներն ունեն երեք տեսակ տաղաչափություն՝
շեշտային, վանկային և չափական, այսպես.

Շեշտային ոտանավորի մեջ բառերի և
վանկերի շեշտը որոշ կանոն ունի. վանկային
ոտանավորը կազմվում է ըստ վանկերի թվի,
իսկ չափական ոտանավորներն առհասա-
րակ լինում են հանգավոր: Չափականը, ոչ
թե վանկը համարելով, այլ անկախ վանկե-
րի թվից, վանկերի երկարն ու կարճը չափե-
լով՝ ոտք է ձևացնում: Չափական ոտանա-
վորը բոլորովին անհանգ է: Հայկական շա-
րականները մեծ մասամբ չափական ոտա-
նավորներ են: Չափականի ոտքերից ոմանք
երկվանկ կարող են լինել, ոմանք էլ՝ եռա-
վանկ. երբեմն լինում են և բազմավանկ, սա-
կայն դրանք երկվանկավորների և եռավան-
կավորների բաղադրություններն են հանդի-
սանում: Չափականի երկվանկի ոտքերն են՝
մեծավերջ, մեծասար, համբույր և անգայտ:
Եռավանկ ոտքերն են՝ ստեղծ, վերջատանջ,
քողաղոտ, քողաթորք և այլն:

Ծարականների մեջ շատ գործածական է
վեցոտնեա կամ վեցաչափ տեսակը, որի է-
ական հատկությունները հետևյալներն են.

Օրինակ՝

Ով / պահապան՝ / որ ծագեցար՝ / չեղեմայ.
սխեման է՝
1—3—4—3

Նշան յաղթութեան / ընդդէմ / աներևոյթ
/ թշնամուն-

5—2—4—3

Դու փակելոյ / դրախտին բացող / և ա-
ռաջնորդ / աւագակին
4—4—4—4


Որ զրոցելէն / սուրըն կապտեաց / անե-
ղին / հրամանա-
4—4—3—3 (Ծար. 664):

Այս չափերից շատերը «Մշակականք»-ի
մեջ Հ. Արսեն Բագրատունին վերածել է
վեցաչափի: Ահա թե ինչու շատ դժվար է հին
չափական որևէ ոտանավոր անսխալ կար-
դալը կամ մանավանդ երգելը:

Այժմ տեսնենք ինչ աղերս ու նմանություն
կա մեր հեթանոսական շրջանի և հոգևոր
երգերի տաղաչափական արվեստի միջև:
Հեթանոսական շրջանի աշխարհիկ երգերի
տաղաչափության տարրերն էլ իրենց
նստվածքներն ունեն մեր հոգևոր երգերում:
Այս երևույթը նկատելի է դառնում, երբ հա-
մեմատում ենք Գողթան երգերի մնացորդ-
ները եկեղեցական շարականների տաղաչա-
փական կառուցվածքի հետ: Մի ուրիշ ան-
գամ, այլ առիթով, արդեն խոսվել է ժողո-
վրդական և հոգևոր երգերի կապի և հարա-
բերությունների մասին: Այստեղ նշենք մի-
այն, որ մեր հոգևոր երգերն իրենց կառուց-
վածքով, տաղաչափական տարրերով ու ե-
րածշտականությամբ, ամենայն հավանակա-
նությամբ, աշխարհիկ ծագում ունեն: Ան-
կասկած, մեր թե՛ հեթանոսական և թե՛
քրիստոնեական շրջանի հոգևոր երգերը
ստեղծվել ու եղանակավորվել են ժողովրդի
մեջ, ձև ու բովանդակություն են ստացել ժո-
ղովրդական երգերի օրինակով ու նմանու-
թյամբ: Սակայն այդ նորաստեղծ հոգևոր
երգերում որոշ երանգով պահպանվել են
աշխարհիկ երգերին հատուկ մի քանի բնո-
րոշ կողմեր՝ լեզվական, տաղաչափական,
երածշտականության և գեղարվեստական
պատկերավորման տեսակետից: Անշուշտ
հեթանոս հայերն ունեցել են իրենց ազգա-
յին հոգևոր երգերը, որոնք կատարվել են
հեթանոսական արարողությունների, ծիսա-
կատարությունների, հանդեսների, խրախ-
մանքների ու զոհագործությունների ժամա-
նակ: Անկասկած, դրանք երգվել են գլխա-
վորապես բամբուկների և երածշտական այլ
գործիքների նվագակցությամբ, ինչպես ա-
նում էին հին հրեաները²: Եվ քանի որ հե-

² «Մշակականք», էջ 18:

³ Հին հրեաներն օրհնություններն ու սաղմոսերգու-
թյունները տեսակ-տեսակ երածշտական գործիքնե-
րով ու նվագարաններով էին երգում. ինչպես օրի-
նակ՝ տավիղ, ընար, տանառաղի, ջութակ, վին, եղե-
րափող, շեփոր, սրինգ, թմբուկ, ծնծղա և այլն: Իսկ
մեր Գողթան երգիչների ու գուսանների երգերին ըն-



թանառ հայի աշխարհիկ և հոգևոր երգերը բոլորն էլ նվիրված են եղել հին աստվածներին, զոհագործություններին, ազգային հերոսների սիրագործություններին, թշնամու դեմ տարած հաղթանակներին, հանդիսավոր թաղումներին (լալեաց բազմաթիվ երգերով ու ծեսերով), ծնունդներին, հարսանիքներին և տարեկան տոնակատարություններին, ուստի, այդ բոլոր երգերը, այս կամ կողմից արտացոլել են ժամանակի ժողովրդի ողջ կյանքը, նրա բարքերն ու հոգեկան աշխարհը: Բրիտանությունը տիրական կրոն դառնալուց հետո, մեհյաններն ու բազմոցները վերածվել են վանքերի ու մատուռների, քրմերը դարձել են քրիստոնեական եկեղեցու սպասավորներ: Այսուհանդերձ, երկար դարեր, ժողովրդի մեջ արմատացած հեթանոսական հավատալիքները չեն մահացել, այլ այս կամ այն ձևով պահպանվել են ոչ միայն ժողովրդի, այլև նոր կրոնի եկեղեցական շատ տոների մեջ: Թաղման, հուղարկավորության թափոքները, ամուսնության հանդեսները, մեռելոցի հետ կապված որոշ ծեսերը, ուխտագնացության և մատուռի հետ կապված արարողությունները, ժողովրդական զանազան տոները (Կաղանդ, Տեսուհիներ, Համբարձում, Վարդավառ և այլն), թեև քրիստոնեական ձևակերպության են ենթարկվել, սակայն հեթանոսական տարրը երկար դարեր և նույնիսկ մինչև հիմա էլ ապրում է դրանց և քրիստոնեական տոների ու արարողությունների մեջ: Ահա հեթանոսական երգերի այդ հետքերն են, որոնք նկատվում են նաև մեր շարականների մեջ: Համեմատենք շարականներից մի քանիսը Գողթան երգերի հետ, որոնցից, դժբախտաբար, շատ քիչ բան է հասել մեզ: «Երկներ երկին և երկիր» հայտնի երգի մեջ կա թե՛ հանգալորում, թե՛ չափերի պահպանում և թե՛ իմաստի կանոնավոր շեշտադրում: Ահա այդ երգից մի հատված, որը տաղաչափական որոշ կանոններով ու տարրերով հորինված մի բանաստեղծություն է.

Երկներ երկին / երկներ երկիր,

Երկներ և ծով / ծիրանի.

Երկն ի ծովուն ունէր / և զկարմիրկն եղեգնիկ

Ընդ եղեգան փող / ծովս եղանէր,

Ընդ եղեգան փող / բոց եղանէր...⁴

Կերակցում էին՝ եղեգնա փող, եղեգնա փող, պղնձա փող, սրինգ, ծնծղա, բնար, թմբուկ, ջնար, տավիղ, վին և բամբուկ: Մեր եկեղեցական երաժշտության մեջ հնում գործածական են եղել միայն ծնծղա, թնոց և զանգակ:

⁴ Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմ. 1-ին հատոր, էջ 31:

Պարզ երևում է, որ այս երգի ամեն մի տողը մի նախադասություն է և արտահայտում է մի լրիվ միտք: Ամեն մի տողն ունի երկու անդամ, որոնցից ամեն մեկը պահպանում է իր շեշտը: Վերջինս դրվում է այն բաների վրա, որոնք խոսքի հիմնական միտքն են արտահայտում: Այս նույն երկվոյթը նկատելի է մեր Ծնունդյան կանոնի հետևյալ շարականի մեջ:

Խորհուրդ մեծ և սրանչեղի / որ յայս ա-

տոր յայտնեցա,

Հովիւք երգեն ընդ հրեշտակս / տան աւե-

տիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ / ի հեղեհեւմ քաղաքի,

Որդիք մարդկան օրհնեցէք / զի վասն մեր մարմնացա:

(Շարակնոց, 38):

Ինչպես տեսնում ենք, Գողթան երգի և շարականի կառուցվածքի մեջ կա նույնություն, այսինքն՝ ամեն մի տողը լրիվ միտք է դրսևորում, ունի երկու անդամ և իմաստալիս շեշտ, միայն այն տարբերությամբ, որ շարականի տողերի վանկերի թիվը շատ է, իսկ Գողթան երգիին՝ քիչ: Սա իհարկե նմանությունը չի նստեցնում: Այս կարգի նմանություն նկատում ենք և «Անձինք նուրեպ»-ի մեջ.

Բարբառք երկնաորք / լըցին զերկիր,

Քանզի հոտ անուշից / բուրեցայք ի Բրիստու... (Շարակնոց, 573):

Այսպիսի անդամներով ու չափով են գրված «Նորաստեղծեալ», «Այսօր անճառ», «Նայեաց սիրով», «Աստուած անեղ» և շատ ուրիշ շարականներ. օրինակ՝

Նորաստեղծեալ / Բանն յանձից,

Ի սկըզբանէ / զերկինս երկնից... (Շարակնոց, 772):

Այսօր անճառ / լուսոյն ծագումն,

Ի փըրկութեան / մեր կատարումն... (Շարակնոց, 346) և այլն:

Ինչպես երևում է, մեր հոգևոր երգերի մեծ մասն ունի Գողթան երգերի կառուցվածքն ու տաղաչափական տարրերը:

Շարականների բնագրերի, կառուցվածքի և տաղաչափության հետ սերտ կապ ունեն նաև եղանակները: Մեր շարականների երաժշտությունը ինչ-ինչ չափով պահպանել է արևելյան եղանակների հատուկ շեշտն ու շունչը, բայց ինքնուրույն, ազգային երանգով: Ինչպես տաղաչափության տարրերը, այնպես էլ շարականների որոշ եղանակներ գալիս են Գողթան երգերից: Իսկ արևելյան եղանակների կնիքն ու շեշտը շարականներում խորթ են և հետագա դարերի ազդեցու-

թյան արդյունք: Հայոց եկեղեցական մի շարք շարականների շեշտը մարտական է. օրինակ՝ Վարդանանց «Նորահրաշ»-ը, Ղեւոնդյանց բազմաթիվ շարականները, և Սարգսի «Ամենասուրբ Երրորդութիւն», և Գևորգ գորավարի շարականի և Հովհաննիսյանց «Անձինք»-ի եղանակներում այդ մարտական մոտիվները ակնհայտ են: Մի քանի շարականներ էլ կան, որոնց շեշտերը թեև վերոհիշյալների պես մարտաշունչ չեն, օրինակ՝ «Նալեաց սիրով», «Ի քէն հայցեմք», «Ծնորհեա մեզ տէր» շարականներն երգվում են համեմատաբար մեղմ, ոչ այնքան թափով, սակայն այստեղ էլ եղանակի մեջ կա հաղթական քայլերգի ոգի, աշխույժ ու թեթև ընթացք:

Մանրթանանք տաղաչափական այն հիմնական ձևերին, որոնք ըստ Մ. Աբեղյանի գործածվել են հայկական շարականներում:

1. Ազատ ոտքերով ոտանավոր՝

Թուլացան / կորովիք / հաստաձիգ / աղեղանց,—3333
Եւ տրկար / կանայքըն / վառեցան / գիւնու...—3332
(Ծարակնոց, 575):

Այստեղ հիմնական անապետայան ոտքերի հետ՝ կան նաև միավանկ, երկավանկ ու եռավանկ ոտքեր: «Անձինք»-ի մյուս տների մեջ կան նաև քառավանկ և հնգավանկ ոտքեր, որոնք փոխարինում են եռավանկ ոտքերին:

2. Յամբ-անապետայան միանդամ հինգ վանկանի ոտանավոր՝

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա ... («Ժամագիրք», 7):

3. Անապետայան ազատ քառատակտ ոտանավոր՝

Յաղթող և սուրբ / Հայրապետ,
Նրման մեծին / Մովսէսի ... (Ծարակնոց, 618):

4. Անապետայան ազատ եռատակտեր՝

Որ ի վերդ / ես քան. զմիտս / և զխորհուրդս,
Համագոյական / եղելոցս / արարող ...
(Ծարակնոց, 467):

5. Նույնանդամ և նույնոտնյան ազատ ոտանավորներ՝

Զուարթունք երկնից / հոգևոր երգով 5—5
Ի ձայն հնչման / զքեզ փառաւորեն 4—5
(Ծարակնոց, 255):

6. Յամբական պարզոտնյա ազատ ոտանավորներ՝

Յամենայնի բազումողորմ Աստուած,
Նայեա յիս գրթութեամբ և խընայեա,
Զի դու միայն ես մարդասէր... (Ծարակնոց, 441):

7. Խառն ոտանավոր, իշխող հնգավանկ անդամներով՝

Ո՛վ գերահրաշ ծաղիկ / բուրեալ լեղեմայ,
Հոտ անմահութեան / ծնընդոցս Եայի...
(Ծարակնոց, 84) և այլն:

Վերևում բերված «բազմազան չափերը վերածվում են երեք հիմնական ձևի՝ 1. յամբական, 2. անապետայան և 3. յամբ-անապետայան ոտանավորներ. բոլորն էլ բարձրացող ուղիով»⁵: Պրոֆ. Մ. Աբեղյանը այդ չափերն առանձին քննելուց և համապատասխան օրինակներով ցույց տալուց հետո, անում է հետևյալ ընդհանրացումը.

«Մեր բանաստեղծության մեջ գործածված այդ չափերը համապատասխան են մեր գրական լեզվի շեշտին ու վանկերի ամսականին... Վերևում հիշված երեք հիմնական ձևի չափերը, լինեն պարզ ոտքերով թե անդամներով, համապատասխան են հայերենի առողջամտությանը...»⁶:

Ծարականներում եղած տաղաչափական ձևերի արմատները հասնում են մինչև հինգերորդ դարը: Մեր գրականության մի հարուստ տեսակն են շարականները, որոնք հենց սկզբից ունեցել են իրենց ազգային եղանակները և տաղաչափական տարրերը: Որոշ բանասերներ և գիտնականներ գտնում էին, որ մեր ազգային մշակույթի որոշ ճյուղեր լույս ազդեցությունների արդյունք են, իսկ հայկական շարականներն էլ արձակ գործեր են, որտեղ տաղաչափական տարրեր չկան, և իբր 11-րդ դարից հետո է, որ ուրիշների ազդեցությամբ տաղաչափական ձևեր են մտնում մեր հոգևոր և աշխարհիկ բանաստեղծության մեջ: Փաստերը բացատում են այս կարծիքը: Իսկ ինչ վերաբերում է ոտանավորի հանգին ու հանգիստությանը, պիտի ասել, որ դրանք 5—6-րդ դարերում տակավին սաղմնային վիճակում են եղել: Հետագա դարերում է, որ դրանք (ստաշ հանգիստությունը ապա նոր հանգը) երևան են գալիս, և Նարեկացու ու Ներսես Ծնորհալու ժամանակներում հասնում զարգացման բարձր աստիճանի:

Հինգերորդ դարի շարականագիրների գործածած լեզվաձևերը հայկաբան են, և

⁵ Մ. Աբեղյան, Տաղաչափ., էջ 389—390;

⁶ Անդ, էջ 389—390:

պարզության կողմից էլ՝ անգերազանց: Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու և Հովհ. Մանդակունու գրած շարականները, չնայած իրենց վեհ իմաստին, միանգամայն մատչելի են հայ հավատացյալին:

Սահակ Պարթևի գրած Ծաղկազարդի կանոնի շարականների լեզուն իր պարզությանը նորություն էր.

Յորժամ եկն Յիսուս յերուսաղէմ ի քա-
հաքն,
Ընդառաջ ելին ծերքն՝ ուտովք և ձիթեն-
եօք.

Եւ գԱստուածորդին փառաորէին:
Ի լեռնէ ձիթենեաց տարածանէին ման-
կունքն զհանդերձս իրեանց.
Եւ ուտս ի ծառոց քերեալ մատուցանէին
Աստուածորդոյն սուրբ...
(Ծարակնոց, 314):

Իրենց պարզությամբ և քնարականու-
թյամբ աչքի են ընկնում Մեսրոպ Մաշտոցի
ապաշխարության շարականները.

Ի նեղութեան իմում օգնեա՛ ինձ Տէր,
Որպէս երբեմն Յովնանու և ողորմեա.
Ի յանցանաց իմոց մաքրեա՛ զիս Տէր,
Որպէս երբեմն զմաքաւաորն և ողորմեա.
(Ծարակնոց, 166):

Լեզվի պարզության տեսակետից հայտնի
են նաև Մ. Խորենացու և Հ. Մանդակունու
գրած շարականները: Մեր այդ հին շարա-
կանները լեզվի, ոճի, մտքի և պատկերների
պարզությամբ շատ մնան են սաղմոսներին:
Նոր կազմակերպվող հայ գրական լեզուն,
սոսիսը՝ գրաբարը, այդ դարում առհասա-
րակ պարզ էր և դասական: Առաջին շարա-
կանագիրների ժամանակներում հայոց լե-
զուն տակավին պարզ էր ու մաքուր: Թեև
մեր շարականներից մի քանիսի մեջ նկատ-
վում են քերականական զարտուղություն,
սակայն դա հայկաբանության տեսակետից
մեղանչում չէ, այլ բանաստեղծական սովո-
րական երևույթ, որը մինչև այսօր էլ նկա-
տելի է արդի մեր և աշխարհի շատ գրական
լեզուներում, որտեղ երբեմն խախտվում են
թեքման մի քանի կանոններ՝ հանուն բա-
նաստեղծության:

Ծարականների լեզվի մեջ աչքի է ընկնում
չրի հետ կապված պատկերավոր խոսքը,
մանավանդ փոխաբերաբար, որը գալիս է
գլխավորապես Հին ու Նոր Կտակարաննե-
րից՝ սկսած Ադամից, ջրհեղեղից, մինչև
Քրիստոսի Մարդեղությունը:

Ջրհեղեղի մասին «Արարչական» երգում
Շնորհալիքն գրում է.

...Իսկ ի յերրորդ դարում դարձեալ,
զՋորցուն հեղեղ ցամաքեցոյց.
զՆոյ տապանան իր սպրեցոյց,
զԿենդանեաց սեռս անեցոյց...

(Ծարակնոց, 776—777):

Իսկ Հովհաննես Մկրտչին նվիրված շա-
րականներում երգվում է Քրիստոսի մկրտու-
թյան խորհուրդը, որը նույնպես չրի հետ է
կապված և խորհրդանշական իմաստ ունի:
«Աստուած անեղ» շարականի մեջ երգվում է՝

...Ի փրկութեան մերոյ սկզբան,
Մկրտեցար ի Յորդանան.
Ջոր շնորհեցեր նոր սազան,
Ի մաքրութիւն մեղաց մարդկան...

(Ծարակնոց, 921—922):

Ջուրը, գետերն ու ծովը մեծ մասամբ շա-
րականներում գործածվում են ալլաբանա-
բար, խորհրդավոր իմաստով: Ջուրը դառ-
նում է ջրհեղեղ և ավերում մեղապարտ աշ-
խարհը. Հորդանան գետի մեջ մկրտվում է
Քրիստոսը. Հիսուսը ջուրը գինի է դարձնում,
աշակերտների ոտքը ջրով է լվանում. Եփ-
րատի մեջ մկրտվում են առաջին հայ քրիս-
տոնյաները, Փարավոնի գորքը Կարմիր ծո-
վում է խեղդվում, Հովնան մարգարեին Նին-
վե գնալու ժամանակ նալից նետում են ծո-
վը: Ծննդյան տոնին խաչը ջուրն են գցում
և այլն:

Տիրամորը նվիրված շարականներում
«Մանանա», «սափոր», «գերախրաշ ծաղիկ»,
«անթառամ ծաղիկ», «արևելք», «տունկ»,
«տաղաւար» և այսպիսի շատ բառեր ու կա-
պակցություններ նույնպես ալլաբանորեն են
գործածվում:

Ծննդյան Բ օրվա օրհնության մեջ Աստ-
վածածինը կոչված է «անհարսնացեալ», իսկ
Ծննդի Դ օրվա Մեծացուցեի մեջ՝ «պար-
ծանք կուսութեան մարդկան», նույն կանոնի
Ծաշու շարականի մեջ՝ «մայր աղախին»,
Ե օրվա Մեծացուցեի մեջ՝ «ստազաստ ան-
նառելի բնակողին», Ծաշու շարականի մեջ՝
«Համեղանաշակ պողոյն բանաւոր բարու-
նակ», և այլն:

«Ուրախ լեր» Մեծացուցեի մեջ դարձյալ
Տիրամայրը (բայց այլ կապակցությամբ) ո-
րակվում է «Դուռն փակեալ, աղբիւր կըն-
քեալ», իսկ «Տէր յերրկնիցի» մեջ «կոյս ա-
նապական», «վեհագոյն քրովբէ», «սիւն հրե-
ղէն», «լուսոյն աշտանակ», «ամպ թեթև»,
«գեղմն իմանալի», «անձրևն կենաց»,
«դուստր լուսոյ» և այլն: «Երգեցէք որդիք»
շարականի մեջ կույս Մարիամը համեմատ-
վում է Քորեբ լեռան վրա վառվող, բայց չալ-

⁷ Դուկասի Ավետարանի Ա գլխի 38 և 48 համաբ-
նություն (առաջին անգամ) ս. կույսն աղբախ է որակ-
ված:

ընկող մորենու հետ («մորենի անկիզելի»): Մրա խորհուրդն այն է, որ Տիրամայրը աստվածային հուրն իր մեջ կրելով հանդերձ, մնաց անկիզելի: Այս շարականն ունի նաև ուսուցողական նշանակություն: Ծարականների մեջ այլաբանությունը շատ հաճախ է հանդես գալիս: Այլաբանությունը ավելի շատ աչքի է ընկնում Կոմիտասի «Անձինք»-ի մեջ:

Խորհուրդք հոգևորք յղութեանցն յայտներ, Եւ երկունք փրկութեան աշխարհի ճեպէին. Բանգի կամք վերին հրամանին քաղցրացեալ, Իշուցին ի վերուստ զպարգևս փրկութեան... (Ծարակ. 576):

Ծատ շարականներ կան, որոնց հեղինակները գործածել են նաև դիմառական ձևեր և հակադրություն: Այդպիսիներից են Քրիստոսի թաղմանը նվիրված Սահակ Պարթևի շարականները: Բարսեղական, կամ դիմառական ձևերը ավելի են ուժեղացնում շարականի ազդեցությունը: Այստեղ հեղինակը անձնավորում է անշունչ առարկաները, շնչավորում բնությունը և դրանց բերանը լեզու դնում: Դիմառական ձևերն ավելի աչքի են ընկնում Խաչի, Ծննդյան և Զորհրհների շարականներում ու տաղերում:

Դիմառական ձևին շարականներում շատ մասն է բացադարձությունը, որտեղ խոսքն ուղղվում է մեռած կամ բացակա անձնավորություններին: Այստեղ հեղինակները մեծ մասամբ դիմում են մեղանշող Ադամին և Եվային: Ավագ շաբաթ օրվա մի քանի շարականներում էլ Տիրամայրը ողբում է իր Որդու մահը ու այդ ձևով խոսում նրա հետ:

Մեր առաջին շարականագիրներն ավելի շատ մտահոգված էին շարականի ոգով, գաղափարական-ուսուցողական կողմերով, քան թե պատկերավոր լեզվով, արվեստով: Հետագա դարերում Կոմիտաս կաթողիկոսի, Ստեփանոս Սյունեցու և Ներսես Շնորհալու օրով, շարականների արվեստը ավելի զարգացավ, ունեցավ կանոնավոր, տաղաչափական բազմազան ձևեր, հանգ և հանգիստություն: Հինգերորդ դարի շարականների մեծ մասն ունի ուսուցողական բնույթ: Այլ կերպ էլ չէր կարող լինել: Ազգային շարականները նոր էին հորինվում, գիրն ու գրականությունն էլ նոր էր: Այդ շարականների մեծ մասի թեմաները վերցվում էին գլխավորապես Ավետարանի պարզ կյոթերից: Բայց և այնպես այդ ժամանակների շարականներից շատերն են հագեցված քնարականությամբ և երաժշտականությամբ: Քնարական մոտիվն ավելի ուժեղ է Մ. Մաշտոցի ապաշխարության կարգի բազմաթիվ շարականներում, որոնք դրսևվորում են բանաստեղծի ներքին, ծանր ապ-

րումները: Այս շարականները փաստորեն սրտահույզ ողբեր են, հետևաբար՝ լի քնարականությամբ: Մեղքի զգացողության ծանրության տակ շարականագիրն իրեն հոգեվիճակը շատ ծանր է համարում, Աստի և աղերսանքով ու լալով է դիմում Սարգիսն և թողություն խնդրում: Այս կարգի շարականների քնարականությանը նպաստել են նաև սաղմոսները և մարգարեական օրհներգությունները, ուր երկյուղալի, սրտառույ և հուզումնալից եղանակներով արտահայտվել են սաղմոսների և մարգարեությունների հեղինակների անձնական ապրումները:

Ծով կենցաղոյս հանապազ գիս ալեկոծէ, Մրրկեալ ալիք թընամին ինձ յարուցանէ, Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւէն (Ծար. 180):

Քնարական բնույթի շարականներում աչքի է ընկնում նաև երաժշտականությունը: Երբ մեր հոգևոր երգի մեջ դեռևս վճռական դեր չէին խաղում տաղաչափական տեխնիկան ու հանգերգությունը, բայց երաժշտականությունը առկա էր:

...Տօղ քաղցրածաւալ, ցանկալի զուարթոնցն,

Նիպօեղէն սրովբէ, գեղ մարգարտափայլ, Հիմն եկեղեցւոյ, մաքուր աղանի,

Ամպ հովանաւոր, սուրբ կոյս Մարիամ... (Ծար. 892):

Ընդհանրապես շարականների քնարականությունն ուժեղացնում, աշխույժ տոն և սահուն ընթացք են տալիս նաև դարձերը կամ կրկնակները: Օրինակ՝

Մեղայ Տէ՛ր, բազումողորմ Աստուած,

Մեղայ, ողորմեա:

Մեղայ Տէ՛ր և անկանիմ առաջի քոյ,

Մեղայ, ողորմեա... (Ծարակնոց, 187):

Ծարականներում քնարական, ապաշխարական և այլ մոտիվների կողքին հնչել են նաև դավանաբանական, ուսուցողական, մեկնաբանական բնույթի երգեր:

Դավանաբանական շեշտերն ավելի շատ զգալի են Ծննդյան և Հայրապետաց կանոններում, ուր տեղ են գտել նաև մեկնաբանական մոտիվներ: Մեկնաբանական մոմենտներն աչքի են ընկնում Սահակ Զորափորեցու խաչին նվիրված կանոններում և Ներսես Շնորհալու բազմաթիվ շարականներում: «Կանոն վերացման սրբոյ խաչին» առաջին օրվա «Տէր յերկնիցի» մեջ, ահա թե ինչպես է շարականագիրը մեկնաբանում Քրիստոսի խաչելության խորհուրդն ու նպատակը:

Անուանեալ փայտ գիտութեան,

Զմեզ ի կենացն հանեալ արտաքսեցոյց.

Որով յանցեալ մայրն ելա,
Եւ պատրեաց զնախահայրն:
Իսկ փայտ խաշի քո կենսատու.
Գտագան զօրութեան կենաց մարդկան
Եւ յոյս հաստատութեան,
Առաջնորդ եղև մեզ ի կեանսն յախտե-
նից... (Ծար. 643):

Ծարականներում գործածվել են նաև ճարտասանական ձևեր: Թեև վերջինս գլխավորապես վերաբերում է պերճախոսական արձակին, որի «քերականությունն» ու «տաղաչափությունն» է համարվում, սակայն շարականագիրներն օգտագործել են և այդ ձևերը՝ մի կողմից խոսքը աշխույժ, հետաքրքիր դարձնելու համար, իսկ մյուս կողմից՝ դրանց միջոցով արտահայտելու նաև իրենց ներքին զգացմունքները: Ծարտասանական ձևերից շարականների մեջ կիրառվել են՝ դիմում, նորոգոր, բացականչություն և այլն: Ահա մի երկու օրինակ.

Դիմում—Հայր բազումողորմ, խոստովա-
նիմ առ քեզ...
Տէ՛ր, որ դարձուցեր զմաքսատրն ի

գիտութիւն ճշմարտութեան...

(Ծարակ. 162):

Դարձո՛ւ և զիս մոլորեալս և ողորմեա

(Ծար. 163):

Խնդիրք—Աստուած բազումողորմ, խնա-
յեա յարարածս քո...

Արեգակն արդարութեան ծագեա ի
հոգիս մեր... (Ծար. 164):

Բացականչություն—Մեղա՛յ Տէր, բազում-
ողորմ Աստուած, մեղա՛յ, ողորմեա՛,
Մեղա՛յ Տէր, անկանիմ սուաջք քո,
մեղա՛յ ողորմեա՛...
(Ծար. 187):


Հետագայում, երբ զարգանում է տաղաչափական արվեստը, շարականների մեծ մասը գրվում է արդեն որպես ոտանավոր: Ծարտասանական ձևերն իրենց տեղը զիջում են խոսքի գեղարվեստական արտահայտչական այլ ու նոր ձևերի, որտեղ արդեն տիրող են հույզերը, պատկերները, երաժշտականությունը և ավելի բարձր արվեստը:



ՄԱՍՈՒԱՆԿ
Ըստ ուրն ձայնից եղանակաց

Աձ

Չափաւոր



Օրհ-նես-ցուք ըզ-տէր.


զի փա - ոտք է փա - ռա - տըր-եալ:

Դարձուածք




փա-ռա - տըր - եալ:

Չափաւոր կամ միջակ



Օրհ-նեալ ես տէր Աստ-ուած հար - ցըն մե - ռոց.



օրհ- - նեալ փա-ռա - տըր - եալ ա - նուն քո յա - լի - տեան:

Միջակ



Մե - ծա - ցուս-ցէ աճճն իմ ըզ-տէր,

եւ ցըն-ծաս-ցէ հո - զի



իմ Աս-տու - ծով փըրկ-չաւ ի մով:

Միջակ



Ո - ղոր-մեա ինձ Աստ-ուած,

ըստ մե - ծի ո - ղոր - մու-թեան քում.



ըստ բա - զում զը - թու-թեան քում քա - լեա զա - նօ - թէ - նու-թիւնս իմ:




Չափաւոր կամ Միջակ







Օրհ-նե-ցէք ըզ-տէր յերկ-միջ.

օրհ-նե-ցէք ըզ-նա ի բար-ձանց:


* «Ութ-ձայնի սկավադքները» հոդվածը տես «Էջմիածին» ամսագրի 1972 թ. Բ համարում (էջ 28):




Ակ



Միջակ



n - դորմեա ինձ Աստուած ըստ մե - ծի n - դորմու-թեան քում, ըստ թա-գում




գը - թու - թեան քում քա-ւեա զա մօ - րե - նու - թիւնս իմ:

Միջակ կամ Չափաւոր




Օրհ-նե - ցէք ըզ-տէր յերկ-նից օրհ-նե - ցէք ըզ-նա ի բար-ձանց:

Միջակ կամ Չափաւոր




Համ-բար-ձի զաչս իմ ի լե - րիւնս ուս-տի ե-կես - ցէ ինձ օգ-նու-թիւն:

Միջակ



Տէր թա-գա - ւոր-եաց զվա - յել-շու - թիւն ըզ - գե - ցաւ:



Մի - րե - ցի զի լուի-ցէ տէր ըզ - ճայն ա - դօ - թից ի - մոց:

Ակ դարձուածք

Ծանր




Օրհ-նես - ցուք ըզ - տէր. - զի փա - ոք է



փա - ոա - ւոր - եալ: Փա - ւոր - եալ:

Չափաւոր կամ միջակ




Օրհ-նեալ ես տէր Աստուած հար-ցըմ մե - րոց օրհ-նեալ




փա-ռա-ւոր - եալ ա - նուն քո յա - լի - տեան:

Միջակ




Մե - ծա - ցուս-ցէ անձն իմ ըզ-տէր եւ ցըն-ծաս - ցէ հո - ցի




իմ Աս-տու-ծով փըրկ-շաւ ի - մով:

Միջակ




Ո - ղոր-մեա ինձ Աստ-ուած ըստ մե-ծի ո - ղոր մու-րեան քում




ըստ բա - զում զը-թու - բեան քում ցա-ւեա զա-նօ - րէ - ցու-րիւնս իմ:

2ափաւոր կամ Միջակ



Օրն-Յե-ցէք ըզ-տէր յերկ-նից օրն-Յե-ցէք ըզ-նա ի բար-ձանց:

2ափաւոր կամ միջակ



Օրն - Յե - ցէք ման - կունք ըզ - տէր եւ օրն-Յե - ցէք զա -



նու - ցըն տեառն:

2ափաւոր կամ միջակ



Համ-բար-ձի զաշս իմ ի լե - րիւնս ուս-տի ե - կես - ցէ



ինձ օգ-նու - րիւն:

Միջակ կամ Յորդոր



Սի - րե - ցի զի լուի-ցէ տէր ըզ-ձայն ա-ղօ-թից ի - մոց:

Բձ

2ափաւոր




Օրն - ցես-ցուք ըզ-տէր զի փա - ոօք է փա -



ռա - տր - եալ:

(Գարունակի)



ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

(Պատմական գիտությունների բեկնածու)

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ

(Հայ ժողովրդական Էպոսի հայտնաբերման և գրառման 100-ամյակի առթիվ)

1974 թ. համայն հայությունը մեծ շուքով կնշի իր ազգային դուցազնավեպի՝ հայ ժողովրդական Էպոսի՝ «Սասնա ծռեր»-ի առաջին պատումի հայտնաբերման և գրառման 100-ամյակը:

1874 թ. Կ. Պոլսում լույս տեսավ հայ բանահյուսության մեծ երախտավոր Գարեգին եպիսկոպոս Սրվանձությանցի «Գրոց-բրոց» ժողովածուն, որին իբրև հավելված կցված էր ժողովրդական Էպոսի մի տարբերակը՝ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» խորագրով: Պատումի հայտնագործությունը և հրատարակությունը ունեցավ բացառիկ նշանակություն մեր ժողովրդի հոգևոր մշակույթի ասպարեզում: Հսկայական էր պատումի ազդեցությունը ժամանակի բանասերների վրա: Դրանով է բացատրվում այն փաստը, որ Գրիգոր Խալաթյանը այդ տարբերակը թարգմանում է ռուսերեն, իսկ Ա. Բ. Գաբ Հովհաննիսյանը՝ գերմաներեն: Լեզվաբան Քերովբե Պատկանյանը հայ բարբառների ուսումնասիրությանը նվիրված իր աշխատության մեջ հրատարակում է պատումն ամբողջությամբ, Մշո բարբառի վերաբերյալ համառոտ քերականական ծանոթությունների հետ միասին, իսկ մանկավարժ Սեդրակ Մանդինյանը այն վերածում է արևելահայերենի և մտցնում դպրոցական դասագրքերի մեջ:

Ամեն մի հայտնագործություն կամ հայտնաբերում կատարվում է իր ժամանակի հրամայական պահանջներին ի պատասխան: 19-րդ դարի 2-րդ կեսին, ազգային զարթոնքի և միավորման, ազատագրական շարժումների ժամանակներում, ազգային ինքնորոշման նշանաբանի տակ մեծ աշխատանք էր ծավալվում ժողովրդական բանավոր ստեղծագործության հայտնաբերման, գրառման և հրատարակման ուղղությամբ: Այդ աշխատանքների թագն ու պսակը հանդիսացավ մեր ժողովրդական վեպի առաջին պատումի հայտնաբերումը, գրառումն ու հրատարակությունը: Պատումի մեջ իր արտացոլումն էր գտել մեր աննկուն ժողովրդի և մասնավորապես Սասունի հերոս լեռնականների մղած երկարատև պայքարը Թ դարում արաբական բռնակալների դեմ՝ իր ազատության և անկախության համար: 1886 թ. ականավոր բանասեր Մանուկ Աբեղյանը հայտնաբերեց Էպոսի այլ տարբերակը ևս: Դրանից հետո աշխույժ գործունեություն ծավալվեց մեր ազգային վեպի այլ տարբերակներ հայտնաբերելու և հրատարակելու ուղղությամբ: Եվ այժմ, երբ հայտնաբերված ու հրատարակված են Էպոսի 70-ից անցնող տարբերակները, Սրվանձությանցի հայտնաբերած տարբերակն աչքի է ընկնում գեղարվեստական կատարելությամբ և գրառման



հարազատությամբ: Նրա գրած սեղմ առաջաբանը բացահայտում է Սրվանձությանցի կարողությունները ժողովրդական դյուցազնավեպի ուսումնասիրության և արժեքավորման ասպարեզում: Այդ ժամանակից սկսվեց մեր ժողովրդական վեպի թարգմանությունը աշխարհի շատ լեզուներով և իր արժանի տեղը գրավեց համաշխարհային մշակույթի գանձարանում: Էպոսի համահավաք տեքստի հրատարակության, գիտական մեկնաբանման գործում իրենց արժանի ավանդն են ներդրել անվանի հայագետներ Մ. Աբեղյանը, Հ. Օրբելին, Կ. Մելիք-Օհանջանյանը: 1939 թ. հայ ժողովուրդը նշեց Էպոսի կազմավորման հազարամյակը: Էպոսի հերոսները ժողովրդի սիրած կերպարներն են. նրանց մեջ ժողովուրդը մարմնավորել է այն լավը, ազնիվը, մաքուրն ու շիտակը, քաջությունը և խիզախությունը, անվեհերությունը, հայրենասիրությունը, այն ամենը, ինչ ամբարել է ինքը հայ ժողովուրդը իր գոյության հազարամյակների ընթացքում: Էպոսը մեր ժողովրդի ոգու ազնվության վկայականն է, նրա հարատևության և անընկճելի ոգու խորհրդանիշը: Այդ պատճառով էլ հասկանալի է այն խորը սիրո, հարգանքի և գուրգուրանքի գգացումը, որ տաժում են երախտագետ հետևորդները իր ողջ կյանքը հարազատ ժողովրդին և նրա հոգեվոր արժեքների վերհանմանը բոլորանվեր ի սպաս դրած համեստ հոգևորականի՝ Գաբրիել Սրվանձությանցի նկատմամբ:

* * *

Գաբրիելն եպիսկոպոս Սրվանձությանցը (մկրտության անունը Օհաննես) ծնվել է 1840 թ. Վանի Այգեստան թաղամասում, Սանդեան տոհմում, բազմանդամ արհեստավորի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստանում է Վանի Հայնկույանների վարժարանում, ուր սովորում է տառաճանաչություն, կարդում սաղմոս և ժամագիրք: Դրանք բավարար համարելով ծնողները մանուկ Օհաննեսին տալիս են կոշկակարի արհեստ սովորելու, սակայն ուսումնաստենջ պատանին չի հրաժարվում ուսումը շարունակելու մտադրությունից: Որոշ ժամանակ անց նա սկսում է հաճախել Վանի նշանավոր մանկավարժներ Քոլոզ Օհաննեսի և Ավետիս Սահառունու դպրոցը: Սակայն այդ դպրոցը ևս չի բավարարում պատանի Օհաննեսի հոգեկան պահանջները, և 1857 թ. նա մեկնում է Վարազ, ընդունվում Մկրտիչ վարդապետ Խրիմյանի նորաբաց Ժառանգավորաց վարժարանը: Այդ ժամանակվանից նրա անունը անխազելիորեն միահյուսվեց իր ուսուցչի՝ Մ. Խրիմյանի անվանը:

Հենց այստեղ՝ Վարազում ծանոթանալով Եղիշեի պատմությանը, ոգևորվելով 5-րդ դարի հերոսական իրադարձություններով, պատանի Օհաննեսն իր անունը Եղիշեի հերոսներից մեկի անունով փոխում է Գաբրիել Սրվանձությանցի: (Հետագայում ևս բարձր գնահատելով Եղիշեի պատմությունը, նա այն համարում է «նա ավետարանին նոր ավետարան» հայոց):

«Արծուի Վասպուրական»-ում 1858 թ. սկսած, սկզբում երբեմն, այնուհետև հաճախակի, համարյա յուրաքանչյուր համարում, լույս են տեսնում նաև Սրվանձությանցի հոդվածները: «Տեսարանք հայրենի աշխարհաց», «Բուրաստան բարոյական առաքինությանց» ընդհանուր խորագիրը կրող, «Ծիրիմք նախնյաց», «Հայրենասիրություն և հայրենիք», «Սկսենք մեր գործ, նորեն սկսենք» հոդվածներում արտահայտված են երիտասարդ գործչի լուրջ խորհրդածությունները հայոց հայրենիքի և նրա ապագայի վերաբերյալ: Հոդվածներից մեկում Սրվանձությանցը ցույց է տալիս այն կապը, որ գոյություն ունի ժողովրդի կամ ազգի անցյալի և ներկայի միջև: Այն ազգը, որն ունի իր ինքնությունը հաստատող պատմական վկաներ, հետևությանը տեղի չի տալիս բռնակալների առջև, պայքարում է իր ապագայի համար. «Նախնյաց հիշատակներ այնչափ մեծ արդյունք ունեն, որ ազգությունն այնու հաստատ կմնա, ազգաց մեռելությունն այնու կկենդանանա, նահատակաց հոգիք այնու կգորանան և հայրենյաց վերանորոգությունն այն տեղեն կհառաջանա: Ասոր համար, շատ բարբարոս ու խորամանկ բռնավորներ երբոր ազգ մը բնաջինջ առնել կամ ազգությունն ուրանալ տալ ուզեին, նախ այն ազգի մեջ եղյալ գրքերը կարդեին, կարդացողներ կըսպանեին, նախնյաց շիրիմներ կքանդեին, և այդ ազգի դյուցազանց, նահապետաց, թագավորաց և քաջաց պատվական ոսկորներ կփշրեին կամ կվառեին»¹:

Հայրենասիրությունը համարելով «գերաբարձ առաքինություն» հայրենիքի գործին մարտադրված երիտասարդը հայկական բոլոր հորիզոններում հնչեցնում էր իր ձայնը, ոտքի կոչում հայրենակիցներին, պայքարի մարտահրավերներն ու հուսահատված հոգիներին, ներշնչում անպայման հաղթանակի հավատով: 1862 թ. Չեյթունի ապստամբությունից հետո գրված «Սկսենք մեր գործ, նորեն սկսենք» հոդվածը Վարազա բարձունքից թռչող մի կոչ էր ողջ հայությանը՝ չհուսահատվելու, չթուլանալու, գործը կիսատ չթողնելու համար: «Կոխե ու կոխիր,

¹ Արծուի Վասպուրական, 1861, № 2:

գարկ ու գարկվիր, ինկար, վեր կանգնիր, անշուշտ կհաղթես, մեռնիս էլ, կհաղթես, վերջապես կհաղթես, վասնզի նոր ես ու լուսավոր ես, բարի ես, ճշմարիտ ես»²։ Երբ երկնատաք մարգարե երիտասարդ Սրվանձըտյանցը միասնություն և միաբանություն էր քարոզում իր հայրենակիցներին, որա մեջ տեսնելով փրկության և հաղթության առաջին և վճռական գրավականը. «Կառավիրե (Աստված) մեզ միաբան լինել, միաբան խորհել, միաբան մեռնել, միաբան ապրել։ Միանանք մեք, ուրեմն, եղբարք, գորություն ի միություն և հաղթություն ի գորություն»։

1860 թ. Սրվանձտյանցը ավարտեց Ժառանգավորացը, սակայն չբաժանվեց ո՛չ իր ուսուցչից և ո՛չ էլ իրեն սնուցող գիշերօթիկից։ Արևելյան Հայաստանին սոսիկից ծանոթանալու, այնտեղի հանրային գործիչների հետ կապ հաստատելու, ինչպես նաև Ժառանգավորացի և «Արծուի» համար հանգանակություն կատարելու նպատակով 1860 թ. նոյեմբերի 10-ին Մ. Խրիմյանը իր մերձավորների՝ Երեմիա Տեկանցի, Գ. Սրբվանձտյանցի, Հ. Սևիկյանցի հետ մեկնում է Արևելյան Հայաստան։ Նրանք լինում են Երեվանում, Էջմիածնում, Թիֆլիսում, Ղարաբաղում, ապա Ագուլիսում և Պարսկաստանի վրայով վերադառնում են Վան 1861 թ. հունիսին։ «Մեղու»-ի 1862 թ. 176—179 համարներում տպվեց Սրվանձտյանցի ընդարձակ նկարագրությունը «Ուղևորություն Մկրտիչ վարդապետի Խրիմյան ի Ռուսահայք» խորագրով։

1862 թ. Խրիմյանը Էջմիածնում եպիսկոպոս ձեռնադրվեց Տարոնի առաջնորդության վրա։ Ամրապնդելով Վարազի Ժառանգավորացը ունակ ուսուցչներով, Խրիմյանն իր մերձավորագույն սանի, այժմ արդեն գինակցի հետ մեկնեց Տարոն։ Տարոնում հայրենամակեր երիտասարդի առաջ բացվեց գործունեության լայն առաքել։ Ս. Կարապետ վանքին կից բացված նոր Ժառանգավորացում նա տնօրեն-ուսուցիչ էր, միևնույն ժամանակ նույն վանքում հրատարակվող «Արծուիկ Տարոն» լրատարի խմբագիրը։ Թերթի վրա գրված էր. «Արծուիկ Տարոն-թոռուցյալ թերթ Վասպուրական Արծույն»։ Թերթը հրատարակվեց փոքր ժամանակահատվածում՝ 1863 թ. ապրիլից մինչև 1865 թ. հուլիսը։ Լույս տեսավ ընդամենը թերթի 43 համար։ Սակայն, չնայած դրան, թերթը խոր հետք թողեց արևմտահայ կյանքի ապսպրեզում։ Չորս Էջմիածնի փոքրիկ երկաթաբաթերթին իր էջերում հրատարակում էր հոդվածներ, որոնք վերաբերում էին ողջ հայ-

կական իրականությանը։ Այն բարձրացնում էր ժողովրդի լուսավորության հարցը։ Հատ երիտասարդ խմբագրի, ժողովրդի ուսումը, լուսավորությունը ինքնանպատակ չեն. նրանք հետապնդում են խիստ գործնական և հայրենասիրական նպատակներ։ «Կարդացողն գիտե, թե տերություն ինչքան տուրք սահմանեք է, այնքան կուտա, չկարդացողն ինչքան որ ուզեն կուտա։ Կարդացողն գիտե թողի կամ բարբարոսի համար տերության կառավարության բողոքել և դատ վաստկել. չկարդացողն բռնության և անիրավության գերի է. ինչ որ ուզեն կտանեն ու ինքը կրե։ Կարդացողն գիտե պզտիկ արտե մը շատ պտուղ քաղել, չկարդացողն շատ արտ ունենա և շատ ալ ցանե, բայց անթի կլմնա»³։

Լուսավորական հարցերից զատ թերթը շեփոխահարում է ազգային-ազատագրական գաղափարներ, կանգնում աշխատավոր գյուղացու շահերի պաշտպանության դիրքերում։ «Արծուիկ»-ի էջերում տպվեց Սրվանձտյանցի «Մշեցիների ողբախառն աղերսը ուղղված Պատրիարքարանին և Ազգային վարչությանը», որի մեջ ուժգին դրսևորվեց երիտասարդ գործչի դեմոկրատական դիրքորոշումը։ Համերաշխելով հողվածում շարադրված մտքերին, արևմտահայ դեմոկրատ Հարություն Սվանձյանն առ հողվածը արտատպեց իր «Մեղու»-ում։ 1865 թ. քաղաքական մատնությամբ փակվում է «Լրատար Արծուիկ Տարոն»-ն։ Խրիմյանն ու Սրվանձտյանցը մեկնում են Պոլիս արդարանալու։ 1867 թ. Սրվանձտյանցը ձեռնադրվում է վարդապետ։ Այդ հանգամանքը ավելի է դյուրացնում նրա ազգային-հայրենասիրական գործունեությունը, մեծացնում նրա ուղիղները։ Սրվանձտյանցը հայտնվում է մերթ Վարագում, որ Խրիմյանի արտահայտությամբ «Արծուիկյանների խումբը հոշոտվում է», օգնում է նրանց, «ազդու քարոզով խառնում Վանա ծով», մերթ գործում է Կարինում քաղաքային վարժարանների լիազոր-տեսչի պաշտոնով, մերթ էլ վարում է ար. Կարապետի վանքի վանահայրության փոխանորդի պաշտոնը։ Նշանակալից է մանավանդ Կարինում ծավալված նրա լուսավորական գործունեությունը։ 1867—1869 թթ. ընկած ժամանակամիջոցում որոշ ընդհատումներով նա եղել է Կարինի վարժարանների լիազոր-տեսուչ։ Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Սրվանձտյանցը փոփոխություններ է մտցրել դպրոցական ծրագրերի և դասավանդվող առարկաների մեջ։ Կարինի դպրոցներում դասավանդվել է ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, հողագործու-

² Արծուի Վասպուրական, 1862—1863, № 1։

³ Արծուիկ Տարոն, 1863, № 12։

թյուն, լեզուներ, ազգային պատմություն: «Կարնո ուսումնարանը հառաջադիմության քայլափոխին մեջ սքանչելի փոփոխություններ ունեցած է սա Սրվանձությանց Գարեգին վարդապետի շնորհիվ, որը ազգայնոցս անգուգական ուն է, տեղվույս ժողովրդյան թախանձանորը դպրոցին տեսուչ կարգված է. ինքը գրեթե առավոտեն մինչև երեկո մանկանց դաստիարակության համար քրտինք կթափե»⁴: Նշանակալից երևույթ է եղել մանավանդ Կարինում մեծահասակների համար Սրվանձությանցի բացած կիրակնօրյա դպրոցը. «Նոր գործ մը, որ Կարին մինչև այսօր չէր տեսել, այսինքն կիրակնօրյա դպրոց բանալը իր (Սրվանձությանցի—Է. Կ.) ժրագնաց աշխատությունն էր»⁵: Տարեց մարդիկ մեծ ոգևորությամբ ամեն կիրակի հաճախում էին դպրոց, որ Սրվանձությանցի ազգային պատմության ամեն մի դասը վերածվում էր հայրենասիրության ոգեշունչ բարոյի: Կարն ժամանակամիջոցում Կարինում շատ բան է արվում ժողովրդի ազգային գիտակցության արթնացման համար: Ժողովրդի լուսավորության գործը Սրվանձությանցի մոտ ձեռք է բերում քաղաքական հնչեղություն և նպատակապագություն: Սակայն երկար չի տևում այդ եռանդուն գործունեությունը: Հաղթում են հետադիմական ուժերը: 1870 թ. մայիսին «Մանգումեի էֆքիարը» գումում է. «Կիրակնօրյա դպրոցը խափանված է հոս, դասախոսություն չըլլար, ոչ դասառու կա և ոչ դասատու...»⁶: Կարինում գտնվելու ժամանակին է վերաբերում Սրվանձությանցի «Ծառ ազգային լուսավորության և դաստիարակության վրա»⁷, որ նա կարդացել է ուսումնական տարին փակվելու կապակցությամբ: «Ծառ»-ի մեջ արտահայտված են Սրվանձությանցի հայացքները լուսավորության, դպրոցի, ծնողների ունեցած դաստիարակիչ դերի մասին:

Կարինից Սրվանձությանցը մեկնում է Մուշ և Խրիմյանի կողմից նշանակվում ս. Կարապետ վանքի վանահայրության փոխանորդ: Այդտեղ էլ նա հանդես է գալիս իբրև ժողովրդի շահերի ջերմ պաշտպան, կազմակերպում նրա բողոքները, ընդվզումները, պայքարում է կառավարական պաշտոնյաների դեմ, Կ. Պոլսի ազգային լրագրերին հասցնում գալատում կատարվող իրադարձությունների ճշմարտացի պատկերը: «Մանգումեի էֆքիար»-ում հնչում են Սիլբանա եկեղեցու սրբապետության, Վարդոյի և Հով-

հաննավանքի կողոպտման ահագանգերը: Սրվանձությանցի այդ շրջանի ամենաաչքի ընկնող հոդվածներից է «Մշեցվոց վրա ընդհանուր տեսություն մը»⁸ ընդարձակ հոդվածաշարը, որը գրվել էր Խրիմյանի անմիջական պատվերով և «մեծ խորհուրդ մը ուներ»: Հոդվածաշարը նկարագրում էր Տարոնի հայության հարստահարությունները, մերկացնում Մշո մեջլիսի անդամների՝ այսինքն պետական պաշտոնյաների գործունեությունը: Հարցադրումների սրությամբ և փաստերի հավաստիությամբ հոդվածաշարը մեծ աղմուկ հանեց պոլսահայության մեջ և կառավարող շրջաններում⁹:

1869 թ. սեպտեմբերին Մկրտիչ Խրիմյանն ընտրվում է Պոլսի պատրիարք: Ուսուցիչը գավառից մայրաքաղաք է տանում արևմտահայության ցավերին դարման որոնելու իր անհուն ցանկությունը. աշակերտը՝ «մարտադիր զինվորը», մնում է գալատում գործի զիջեր գործելու մեծ եռանդով ու պատրաստակամությամբ: Լայն էր Սրվանձությանցի գործունեության ոլորտն այդ տարիներին: Նա մնացել էր իբրև Վարազա և ս. Կարապետ վանքերի վանահայրության փոխանորդ: Մեծ աշխատանք է կատարում Սրվանձությանցը Տարոնում 1869—1872 թթ.: Նրա անմիջական օգնությամբ դպրոցներ են բացվում Մշո դաշտի, Վերին Բուլանջիսի, Ներքին Բուլանջիսի, Մանազկերտի, Վարդոյի բազմաթիվ գյուղերում և Տարոնում գտնվող ս. Հովհաննա, Առաքելոց, ս. Դանիել, ս. Կարապետ վանքերում: Փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ թվերին Սրվանձությանցի կողմից բացված դպրոցներում սովորել են մոտավորապես 1000 աշակերտ: Այն ժամանակվա համար դա պատկառելի թիվ էր: Պատրիարքի վստահությունն իր մերձավորագույն սանի և զինակցի նկատմամբ այնքան մեծ էր, որ միաժամանակ պաշտոն էր տվել և՛ Վասպուրականում, և՛ Տարոնում. «Քանի որ մեք պատրիարք ենք, ձեր վիճակն այդ պիտի լինի, ամառն ի՞ Տարոն, ձմեռն ի՞ Վասպուրական»¹⁰: 1870-ի վերջում և 1871-ի սկզբում պատրիարքաբանի կողմից Սրվանձությանցը նշանակվում է Սահմանադրության գործադիրի վանում: Ահա թե ինչ էր հրահանգում Խրիմյանը Վան մեկնած իր «հեղափոխության զինվոր և նահապետակին»¹¹. «Քանի որ հող եք, քակեցեք այդ մեռածներուն ստրկության պատանքը. բնավ տիվ ու

⁴ «Մանգումեի էֆքիար», 1869, № 995:

⁵ Նույն տեղում, №№ 995, 997:

⁶ Նույն տեղում, 1870, № 1233:

⁷ Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ) Սրվանձությանցի ֆ., 2-րդ բ., գ. 65:

⁸ «Մանգումեի էֆքիար», 1869, №№ 892, 895, 898, 902, 918, 921, 923:

⁹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4179, էջ 51, 51ա:

¹⁰ ԳԱԹ, Սրվանձությանցի ֆ., 2-րդ բ., գ. 449:

դադար մի տաք ձեզ. հասեք ի վերա ժամու
և տարածամու. հոգի տուք, ոգևորեցեք այդ
անհոգի դիակները. վերցուցեք դոցա աչքի
թանձրապարար կեղևներ»¹¹: Սրվանձտյան-
ցի ներկայությամբ Վանում նոր ուժով բոր-
բոքվում է տասնամյակների հնություն ունե-
ցող Պողոսյան-ապողոսյան պայքարը: Սըր-
վանձտյանը դառնում է ապողոսյանների
պարագլուխը և Խրիմյանի աջ բազուկը Վա-
նում: Նրանց մղած եռանդուն պայքարի
շնորհիվ հաջողվում է Վանը ազատել Պողոս-
եպիսկոպոսի՝ այդ «հայաճուն շեյխի» ներկա-
յությունից: Այդ հաղթական և սկզբունքային
պայքարի համար Սրվանձտյանը գովեստ-
ներ է տալիս և՛ Խրիմյանից, և՛ Երեմիա-
եպս. Տեկանցից: Չնայած ծանրաբեռնվա-
ծության, Վանում ևս Սրվանձտյանցի աչքից
չի վրիպում ժողովրդի լուսավորության գոր-
ծը: Նա մեծ աշխատանքներ է տանում Վաս-
պուրականում նորանոր դպրոցներ բացելու
ուղղությամբ: Նշանակալից է մանավանդ
Վանի իգական վարժարան բացելու ուղղու-
թյամբ կատարած նրա աշխատանքները:
1870 թ. Սրվանձտյանցի նախաձեռնությամբ
Պոլսում վանեցի գաղթականներից կազմը-
վում է Սանդիստյան ընկերությունը, որի մի-
ջոցներով Վանում բացվում է Սանդիստյան
իգական վարժարանը¹²: Մինչև իր կյանքի
վերջը Սրվանձտյանը մեծ խնամք ու հոգա-
ծություն էր տալիս այդ դպրոցի նկատմամբ
(առանձնապես ոռոս-թուրքական պատե-
րազմի և նրան հաջորդող տարիներին) և
կարգավորում դպրոցի աշխատանքները¹³:

1873 թ. Խրիմյանը հրաժարական է տալիս

Պատրիարքությունից և մնում Պոլսում իբրև

բարոգիչ և Ազգային ժողովի անդամ: Համե-

մատաբար նշում ենք, որ Վան Սրվանձտյանցի

գործունեության ասպարեզը: Նա ևս մեկ-

նում է Պոլիս և նվիրվում գրական աշխա-

տանքի:

* * *

1866 թ. լույս էր տեսել Սրվանձտյանցի
«Նոր ընթերցարանը» և ժամանակի մանկա-
վարժների կողմից արժանացել ջերմ ընդու-
նելության: Ընթերցարանի սեղմ առաջաբա-
նում բացահայտված են Սրվանձտյանցի լու-
սավորական, մանկավարժական առաջադեմ
հայացքները: Դեռևս Վարագում ուսանելու
տարիներին նա գրում է «Անկումն Արշա-
կունյաց հարստության» և «Օռլան Օսկար-

շան» պատմական ողբերգությունները, ո-
րոնք ժամանակակիցների վկայությամբ հա-
ջողությամբ բեմադրվել են Վարագում և Տա-
րոնում: Չնայած գեղարվեստական թերու-
թյուններին, նրանք հաջողություն են ունե-
ցել, որովհետև պատմության օրինակով ու-
սուցանել են ժողովրդին «ապրիլ ուսանել,
ապրիլ հայաբար»: Պիեսներից առաջինը չի
հրատարակվել, իսկ երկրորդը լույս տեսավ
1875 թ. Կ. Պոլսում: Մեկ տարի առաջ, 1874
թ., լույս էր տեսել նրա առաջին ժողովածուն՝
«Գրոց-բրոցը» և արժանացել աննախադեպ
ընդունելության: Ժողովածուի առաջաբա-
նում հեղինակը բացահայտում է հասարա-
կական այն դրդապատճառները, որոնք թե-
լադրել են նրան այդ գործի կատարմանը:
Մագաղաթից տոկուն և անջինջ ժողովրդա-
կան բանավոր գրույցներն ու ավանդույուն-
ները իրենց մեջ կենդանի են պահել ժող-
վրդի պատմության դեպքերն ու անցքերը.
հայ ժողովրդի վաղնջական պատմությունը
ստեղծելու համար պետք է դիմել ժողովրդ-
ին, «վեպք ու գրույցք» համարված ավան-
դություններին: Ոգևորված առաջին ժողովա-
ծուի ջերմ ընդունելությունից, նույն 1874 թ.
Սրվանձտյանը հրատարակում է իր 2-րդ
ժողովածուն՝ «Հնոց-նորոց»-ը, որը հիմնա-
կանում կազմված է գրավոր աղբյուրներից:
Նյութերի առատության, բազմազանության
և գիտական մեկնաբանման տեսակետից
խիստ ուշագրավ է 1876 թ. նրա լույս ըն-
ծալի 3-րդ ժողովածուն՝ «Մանանան», որի
հեղինակը հետապնդում էր Հայաստանը
հային լավ ճանաչել տալու նպատակ. «Այո,
հայեր է, որ մենք գմեզ քաջ ճանաչենք, մեր
հայերը ճանաչենք, մեր հայրենիքը ճանա-
չենք»: Այդ հայրենիքը ճանաչելու ճանա-
պարհը «հողերու խավերը, ջրերու խորերը,
շենից փլատակները ու ավերակները, գրչով
ու բրչով» պեղելն է: Այդ պատճառով էլ ժո-
ղովածուի գլուխները կրում էին հետևյալ խո-
րագրերը՝ «Հայրենյաց համ ու հոտ», «Հայ-
րենյաց վեպք ու գրույցք», «Երգք և նվագք
հայրենյաց»: Առանձնապես հուզիչ է առա-
ջին գլուխը՝ «Հայրենյաց համ ու հոտ»-ը,
որը ընթերցողի առաջ բացում է Վանի, նրա
բոլոր թաղամասերի պատմական հուշար-
ձանների, ժողովրդի առունին աշխատանք-
ների պատկերները: Դժվար է գերազանհա-
տել ազգային գլուխ-գործոց ներկայացնող
այդ բաժնի նշանակությունը առավել ևս այն
պատճառով, որ այդ աշխատանքը, կենսու-
նակ և արգասավոր ժողովուրդը այլևս չի
գտնվում իր պատմական հայրենիքում: Իր
հրատարակած ժողովածուների և ծավալած
ազգային-հայրենասիրական գործունեու-
թյան շնորհիվ Սրվանձտյանը մեծ ժողովրդ-
ականություն, հարգանք ու սեր էր վայելում

¹¹ ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆ., 2-րդ բ., գ. 559:

¹² Հ. Երամյան, «Հուշարձան», հ. Ա, էջ 79:

¹³ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր
4182, էջ 221—222:

հայության երկու հատվածների մեջ: Նրա հետ նամակագրական կապ են պահպանում արևելահայ և արևմտահայ անվանի հանրային, գրական-լուսավորական գործիչներ: Դրա վառ ապացույցը հազարից անցնող այն նամակներն են, որ պահպանվում են ՀՍՄՀ Լուստորայի մինիստրության կից Եղիշե Չարենցի անվան Գրականության ու արվեստի թանգարանի արխիվի Գ. Սրվանձությանցի, Գ. Խալաթյանի, Պ. Սիմոնյանի, Թ. Ազատյանի և այլոց ֆոնդերում:

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի և նրան հաջորդող տարիներին Սրվանձությանց բանահավաքն ու բանագետը իր տեղը գիշում է Սրվանձությանց գործչին ու ճանապարհորդին: Գրիչն ու կաղամարը ժամանակավորապես փոխարինվում են ճանապարհորդի ցուպով, մաղախով ու մակաճով: Պոլսի պատրիարքարանի և անձնապես ժամանակի պատրիարք Ներսես Վարժապետյանի կոնդակով Գարեգին Սրվանձությանցը երկու անգամ ոտքով շրջել է Արևմտյան Հայաստանի հայաբնակ նահանգները: 1878 թ. ապրիլի 26-ին սկսվում է նրա ստաշին շրջագայությունը: Հեշտ չէր պատերազմի արհավիրքներից անմիջապես հետո կատարած այդ շրջագայությունը, երբ օդը լի էր պատերազմի մրրիկներով, և մոլեռանդ շեյխերի քարոզներով հրահրված մուսուլմանական ամբոխը դեռ չէր հանդարտվել: Պատրիարքի հրահանգով Սրվանձությանց վարդապետը տեղագրում էր իր շրջած վայրերի վանքերը, շենքերն ու փլատակները, կազմում այդ վանքերում եղած ձեռագրերի ցուցակը, երբեմն հատվածներ վերցնում նրանցից, բայց ամենագլխավորը նա կազմում է իր եղած վայրերի հայ բնակչության ճշգրիտ մարդահամարը: Արիստակես վարդապետ Տեր-Սարգսյանի, Վահան վարդապետ Մինասյանի (Պարտիզակցի) և Գարեգին վարդապետ Սրվանձությանցի հաղորդած տեղեկությունների համաձայն կազմվեց և հեռիցի վեհաժողով ուղարկվեց Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագիրը:

Այդ բոլորի հետ մեկտեղ Սրվանձությանցի ուշադրությունն է գրավում բուն Արևմտյան Հայաստանի դպրոցների վիճակը: Նա հանդես է գալիս առաջադիմական առաջարկություններով ուսման մեթոդի, միասնական դասագրքերի և իգական վարժարանների վերաբերյալ: «Ներկա վարժարանները բարեկարգելու մեծ պետք ունեն, որոնցում օգտակար աշակերտներ կրան ընծայել ազգին, մանավանդ աղջկանց դաստիարակության վրա ուղ դարձնելով. հոգ պետք է տանիլ ընտիր ուսուցիչներ և լավագույն մեթոդներ հաստատել. որոց պակասությամբ է միայն, որ մեր վարժարանները անպտուղ

կմնան թե գավառներ և թե Պոլիս»¹⁴: Դպրոցական խնդրից բացի Սրվանձությանցի ուշադրությունն իր վրա է քննում հայ կյանքի ամենազարգացած երևույթներից մեկը՝ Հայաստանը ամայացնող պանդխտությունն ու գաղթականությունը: Նա իր հոգու ողջ կարողությամբ պայքարել է պանդխտության և գաղթականության դեմ, այն համարելով հայ ժողովրդի հավաքականությանն սպառնացող ամենավտանգավոր երևույթը: Իր կարճատև կյանքի ընթացքում Սրվանձությանցը պայքարեց պանդխտության դեմ «քանիվ և գրչով»: Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը՝ քաջ ծանոթ լինելով նրա ընդունակություններին և խոսքի ազդեցությանը, ռուս-թուրքական պատերազմից հետո նրան ուղարկեց Կարին՝ կանխելու հարձր Հայքի ժողովրդի մեծ տեղաշարժը, համոզելու ժողովրդին հաստատ մնալու հայրենի շենքից և ավերակաց վրա: Իր շրջագայությունների ընթացքում Սրվանձությանցը քարոզում է ժողովրդին՝ չլքել հայրենի երկիրը և հեռանալ օտար երկրներ: «Հայաստանի մեջն է բուն հայկական խնդիրը և մեր Պետիկն մեջ կորոնենք զայն»:

Բեռլինի վեհաժողովից հետո Բ. Դուռը երկու կոմիտե ուղարկեց Ասիական Թուրքիա, բարենորոգումներ իրականացնելու համար: Մեկը Բեքիր բեյն էր, մյուսը՝ Աբեդին փաշան: Այդ խորամանկ քայլով Բ. Դուռը ցանկանում էր թող փչել եվրոպական պետությունների և բարենորոգումներ ակրնկալող հայ ժողովրդի աչքերին: Պատրիարքարանը կոմիտեների հետ դրեց իր ներկայացուցիչներին, որոնց հրահանգված էր մի կողմից գաղտնի հսկել նրանց գործողություններին, մյուս կողմից էլ աջակցություն ցույց տալ նրանց: Բեքիր բեյի հետ հարձր Հայք մեկնեց Վահան վարդապետ Մինասյանը, իսկ Աբեդին փաշայի հետ պատրիարքարանը ուղարկեց Գարեգին Սրվանձությանցին՝ Տիգրանակերտի և Խարբերդի ուղղությամբ: 1879 թ. սկսվեց Սրվանձությանցի երկրորդ շրջագայությունը Արևմտյան Հայաստանի հայաբնակ նահանգներում: Սրվանձությանցը երկրորդ անգամ մեկնեց հայ գավառները՝ իր հետ ունենալով որոշակի ծրագրեր բարենորոգումների համար, որոնք նա մտադիր էր ներկայացնել գավառական ժողովներին և տեղական կառավարության մարմիններին: Իր նամակ-հաշվետվություններում ուղղված պատրիարքարանին և պատրիարքական փոխանորդ Հովհաննես քահանա Մկրյանին Սրվանձությանցը ցույց է տալիս, որ կոմիտեի գաղութոր գավառներ

¹⁴ Գարեգին Սրվանձությանց, «Թորոս աղբար», 1-հ., էջ 280:

Հայ ժողովրդի ազատագրական շարժումները 80-ական թվականներին մտնում են մեր փուլի մեջ: Եվրոպական դիվանագիտությունից հիասթափված առաջացող գործիչները գգում են ժողովրդի իրավիճակի օրըստօրե վատթարացումը: Բեռլինի վեհաժողովից վերադարձած Խրիմյանը հայրենիք մեկնող պանդուխտների ականջին պատգամում էր «երկաթե շերտի» պատմությունը: Իսկ նրա կրտսեր զինակիցը և հակառակորդը սանը գավառից գրում էր. «Իմ սկզբունքն էր բարոգել, թե օտարեն պետք չէ բան հուսալ, ջանամք մենք զմեզ հոգալ, պատրաստվիլ և ցույց տալ ազգաց, թե մենք ալ ազգ մի ենք. մեր պատմության և մեր հայրենյաց արժանիքը մեր վրա ցուցանել... գիտությամբ զորանալ, միությանը դիմանալ, գործել և պահպանել մենք զմեզ, պատրաստել մայրեր, հասցունել այրեր, կազմել ընկերություններ, չխնայել ետին լուսնան, գրկել զիրենք և տալ այդ նպատակին համար: Այս է մեր միակ փրկության ճամբան և ահա այս էր իմ առաքելության ավետարանը»¹⁹: Գավառներում կատարած իր ազգային-հայրենասիրական գործերի շնորհիվ մեծ ժողովրդականություն վայելող Սրվանձրությանը 1878 թ. Ակնա ժողովրդի կողմից ընտրվել էր առաջնորդ և ձեռնամուխ եղել ազգօգուտ շատ գործերի կատարման: 1879 թ. Խրիմյանն ընտրվում է Վանի առաջնորդ: Նրա հրավեր-ճամակով և Ներսես պատրիարք Վարժապետյանի կոնդակով, առանց թողնելու Ակնի առաջնորդությունը, Սրվանձրությանը նշանակվում է Վանի առաջնորդական փոխանորդ: «Սրվանձրությանց, որ այնքան լավ կհանգնար գավառը իր վարած զանազան պաշտոններու շնորհիվ, ավելի քան երկու տարի մեծ ձեռնահատությամբ վարեց Վանա թեմի ազգային գործերը... կրթական գործին ևս մեծ մղում տվավ, մինչ Խրիմյան առաջնորդի հանգամանքով կմնար սոսկ իբրև վերին հսկող»²⁰,—գրում է Սրվանձրությանի ժամանակակից Հ. Երամյանը: Բաջատեղյակությունը նահանգին և վարչական ունակությունները հնարավորություն են տալիս Սրվանձրությանցին հմտորեն վարել Վասպուրականի ազգային գործերը. նրան հաջողվում է անկախ դիրք ձեռք բերել Վանի մեջլիսում, որի պատճառով էլ հաճախ նահանգապետ

փաշայի զայրույթն էր գրգռում²¹: 1881 թ. վերջում Սրվանձրությանը հրաժարական է տալիս առաջնորդական փոխանորդի պաշտոնից, հեռանում Բաղեշ, որտեղ, ապա նաև Խարբերդում վարում է առաջնորդի պաշտոնը: Մեծ են նրա ջանքերը Բաղեշի հայությանը բողոքականությունից և կաթոլիկությունից հեռ դարձնելու ուղղությամբ: 1884 թ. Սրվանձրությանցն ուղարկվում է Տրապիզոն իբրև Պոնտոսի թեմի առաջնորդ: 1886 թ. մայիսին նա Մադաքիս վարդապետ Օրմանյանի հետ մեկնում է Էջմիածին և օծվում եպիսկոպոս: Դրանից հետո էլ նա շարունակում է վարել Տրապիզոնի առաջնորդությունը: 1887 թ. Ազգային ժողովը և պատրիարքարանը միացնում են սր. Կարապետի վանահայրությունը Տարոնի առաջնորդության հետ և իբրև վանահայր ու առաջնորդ այնտեղ ուղարկում Սրվանձրությանցին: Այդ կապակցությամբ հետաքրքիր է Խրիմյանի ճամակը իր «հավատարիմ ձագիկն»։ «Ով պիտի երթա ի Մուշ և ով կհամարձակի. դու գիտես Վոսփորին եպիսկոպոսներ և վարդապետներ. այդ վոսիս թուլամորթ եղներ Հայաստանի կորդ երկրի վրա գութան մի՞թե կարող են քաշել: Ուստի պետք է այն եզն, որ հայրենի ջրով արոտով սնած է, այդ եզը դուր եր... Թերևս հաջողե քեզ Աստված երթաս տապալես այդ աշխարհի հին ու մոր տգիտության ամբարտակները»²²:

Տարոնում Սրվանձրությանը մնում է 8—9 ամիս: Նրա աշխատանքը Մուշում «կարի տաժանելի էր, և ծանր, և խառն»: Նրա եռանդուն գործունեությունը դարձյալ իր վրա է հրավիրում Օսմանյան կառավարության ուշադրությունը: Տարոնի պատմությունն ուսումնասիրողները նշում են, որ Սրվանձրությանցի վրա եղան քաղաքական մատնություններ: 1887 թ. վերջին Սրվանձրությանը դարձյալ Տրապիզոնում էր, ուր մնում է մինչև 1888 թ. վերջերը: Հետաքրքրություն է ներկայացնում այն օգնությունը, որ հայրենամարդ գործիչը ցույց է տալիս Օրդուի գավառի 2ավուշար գյուղի գյուղացիներին մյուլեթիզմի և տեղի զայնագամի դեմ նրանց մղած պայքարում²³: 1888 թ. Օսմանյան կառավարության պնդումով պատրիարքարանը Սրվանձրությանցին կանչում է Պոլիս և ալևս թույլ չի տալիս գործել գավառում: Գավառներից ետ էին կանչված այն հոգևորականները, որոնք աչքի էին ընկնում իրենց ժողովրդավեր գործունեությամբ: Պոլսում էին Մկրտիչ Խրիմյանը, Գրիգորիս եպիսկոպոս

¹⁹ «Փորձ», 1879, № 4, էջ 165:

²⁰ Հ. Երամյան, «Հուշարձան», Բ. Ա., Ալեքսանդրիա, 1929, էջ 125, 127: Այդ տարիների Սրվանձրությանցի գործունեության մասին խոսվում է նաև Ա. Թերզիպաշյանի «Արծիվը իր բույնին մեջ» աշխատության մեջ:

²¹ «Տարազ», 1892, № 47 (Տ. Փիրումյանի հիշողությունները):

²² ԳԱԹ, Սրվանձրությանցի ֆ., 2-րդ ք., գ. 532ա:

²³ Նույն տեղում, գ. 128, 588, 589, 590:

Ալեքսանդր, Մադաթիա եպիսկոպոս Օրմանյանը: Նրանց միացավ նաև Սրվանձրությանցը: Սակայն Պոլսում ևս չի դադարում Սրվանձությանցի ազգագոյոս գործունեությունը: Նա ընտրվում է կրոնական ժողովի փոխ-ատենապետ, Բերայի սուրբ Երրորդություն եկեղեցու քարոզիչ և ուսուցիչ՝ Հալաթիո Կենտրոնական վարժարանում: Ազգայանի պատրիարքության տեմոդոս օրերին նա այն սակավաթիվ բարձրատիման եկեղեցականներից էր (Խրիմյանի, Իզմիրլյանի և Ալեքսանդրյանի հետ միասին), որ Բարձրագույն Դուռ ներկայացրեց համագումար ժողովի տեղեկագիրը՝ պահանջելով Պոլիս կանչված բանիմաց առաջնորդների վերադարձը գավառներ²⁴: Այդ հանդգնության համար հայրենասեր հոգևորականները պատրվում են Բարձրագույն Դուռն կոչմից կառավարությունը Խրիմյանին ստիպում է «ուխտի գնալ» Երուսաղեմ, ուր «Արծիվը փակվում է ճնճողուկի վանդակի մեջ», Սըրվանձությանցն այլևս չի ընտրվում Ազգային ժողովի անդամ, իսկ Ալեքսանդրյանի և Իզմիրլյանի ընտրությունը Բարձրագույն Դուռը չի վավերացնում:

Կյանքի վերջին տարում կառավարությունն ավելի է խտացնում իր հսկողությունը Սըրվանձությանցի նկատմամբ: 1891 թ. հոկտեմբերին նա գրում է. «Մեր միշտ կկասկածիմք, թե բռնաբարվին մեր նամակները թե այստեղ և թե այդ տեղը (ակնարկում է Արեւիկյան Հայաստանը), զի մեր գործոց և գրվածոց վրա խիստ հսկողություններ կան»²⁵: Հենց այդ ժամանակ էլ նրա առողջությունը գտնվում էր անմխիթար վիճակում: Մշտական ճանապարհորդությունները ձմեռվա ստուգամանքին կամ ամառվա տապին, ոտքով կամ ջորով կոնակին, Արևմտյան Հայաստանի վտանգավոր երթևեկության պայմաններում դեռևս ճանապարհորդու-

թյան օրերին կարող էին եղերական վախճան ունենալ նրա համար: Նա երբեք չձրգտեց հարմարավետ կյանքի, չնայած «բոլորովն ուսուցիչ մըն էր, սիրված եպիսկոպոս մը, ազդեցիկ ազգային մը Պոլսո մեջ բոլոր քաղաքներուն և վալեպներուն արդար իրավունքով»²⁶, բայց իր ողջ կյանքն անկացրեց բուն հայ գավառում: Իր կյանքի 52-րդ տարում նա անբուժելի հիվանդ էր շաքարախտով, աղիքների և երիկամների բորբոքումով:

1892 թ. նոյեմբերի 13-ին մեռնում է Գալեգին եպիսկոպոս Սրվանձությանցը, Խրիմյանի արտահայտությամբ «Արծիվո ընտրելագույն ճեղք» տարածամ մասեն կորուսալ»: Մահվան առթիվ գրված մահախոսականում Արփիար Արփիարյանը գրում է. «Այդ վարդապետը գրեթե դպրոց չէր տեսած և սակայն գտնվեցան հնախոսներ, որք տեղեկանալով անոր գրքերու պարունակությանը, կարծեցին թե գիտե բանի մը հին ու նոր լեզու որոց առաջնորդությամբ գիտուն ելած է: Իբրև եկեղեցական՝ թե վարդապետ և թե եպիսկոպոս եղած ատեն օրինակելի պաշտոնյա հանդիսացավ, միշտ պարտաճանաչ եղավ իրեն տրված ամեն հրամաններուն. գնաց ուր որ հրամայեցավ իրեն պատրիարքաբանեն»²⁷:

Սրվանձությանցի կյանքի և գործի սեղմ շարադրանքը ցույց է տալիս, որ նրա ողջ կյանքը եղավ իր ժողովրդին ծառայելու մի գեղեցիկ օրինակ: Եվ բոլոր անգամ իրավացի էր Ա. Այադյանյանը, երբ գրում էր. «Քիչերու համար կրնանք քսիլ.— Իր ազգին կյանքը ապրեցավ լիովին: Սակայն սակավաթիվ են անոնք, որոնց համար ըսեինք.— Իր կյանքը եղավ հայտնաբերումը իր ազգի կյանքի: Սրվանձությանցի կյանքը եղավ հայտնաբերումը իր ազգի կյանքի»:


²⁴ Ատենագրությունը Ազգային ժողովո, 1890, էջ 72—74, 97:

²⁵ ԳԱԹ, Պ. Միմունյանի ֆ., գ. 68ա:

²⁶ Լ. Օջակյան, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 4, Երուսաղեմ, 1956, էջ 310—327:

²⁷ «Հայրենիք», Կ. Պոլիս, 1892, № 306:





ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻՆ ԵՎ «ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

(Գրախոսության փոխարեն)

Վեցնեղիկում լույս տեսավ Հայաստանի ավագագույն պատմաբաններից մեկի՝ բազմավաստակ հայագետ և ներհուն մատենագետ Հ. Ս. Անասյանի «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ» աշխատությունը¹, որը արժեքավոր ներդրում է հայ միջնադարյան մատենագրության պատմության համար։ Սույն գործը արդյունք է հեղինակի կատարած երկարամյա ձեռագրագիտական տրնաշան աշխատանքների։ Այն խիստ կարևոր նպաստ է բերում Վարդան Այգեկցու ժառանգության ամբողջացման, ինչպես նաև մեծ մասամբ անհայտ մնացած նրա կենսագրության լրացման ուղղությամբ։ Միաժամանակ նոր նյութեր է տալիս հայ դավանաբանական գրականության պատմության համար։

Անասյանը հայտնաբերում է Վարդան վարդապետ Այգեկցու գրչին պատկանող երեք երկեր։ Դրանցից առաջինը, որն ամբողջական մի աշխատություն է և կրում է «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ» խորագիրը, ավարտվել է 1205 թվականին։ Այն բաղկացած է 16 գլուխներից և ընդգրկում է երկու հիմնական մասեր, որոնք նվիրված են դավանաբանական և ծիսական հարցերին։ Թեև այս գործը իր ժամանակին հայտնի է եղել ներհուն բանասեր Կարապետ եպիսկ. Տեր-Մկրտչյանին, սա-

կայն նա պատկերացում չէր ունեցել, որ այդ երկը Վարդան Այգեկցու հեղինակությունն է։ Այնինչ Անասյանը սույն աշխատության տարբեր գրչագրերի հայտնաբերման և համեմատման շնորհիվ և նորահայտ հիշատակարանների լույսի տակ անվիճելիորեն կարողացել է ապացուցել, որ «Արմատ հաւատոյ» երկի հեղինակը Վարդան Այգեկցին է։ Եթե Երևանի Մաշտոցյան Մատենադարանի № 3295 ձեռագրից (Էջ 338ա) կամ նրան նմանվող գրչագրերից հայտնի էր, որ առանց մականվան մի ոմն Վարդան էր հիշվում իբր նրա հեղինակ,—մի անորոշ տվյալ, որի պատճառով, ինչպես նշեցինք, Կ. եպիսկ. Տեր-Մկրտչյանին անծանոթ էր մնացել այդ գրքի հեղինակային պատկանելիությունը,—այսպես Անասյանը Մատենադարանի № 8356 նորահայտ ձեռագրի օգնությամբ, որը Վարդան Այգեկցու գործերի մի ժողովածու է և արտագրվել է նրա ինքնագիր օրինակից 1322 թ. Կամրիկ անապատում, կարողացավ պարզել, որ այդ ձեռագրում եղող §§ 14—20 բնագրերը նույնն են «Արմատ հաւատոյ»-ի Ժ—ԺԶ գլուխների հետ, հետևաբար Այգեկցին է նաև «Արմատ հաւատոյ»-ի հեղինակը։ № 8356 թանկագին գրչագրի նույնքան թանկագին հիշատակա-

* Հակոբ Ս. Անասյան, «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ»։ Բնագիրներ. Վասն անհրաւր քաղաքական ակնկէցոյս Հայաստանեայց, Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն»։ Արտատպւած «Բազմավէպ»-ի 1968, թ. 7—12 բացառիկէն, Վեցնեղիկ—Ս. Ղազար, 1969:

¹ «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցոյ յողորմիստ և սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքաւ: Հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի», Էջմիածին, 1914, տես առաջարկը Էջ CX—CXIX:

² Հակոբ Ս. Անասյան, գրախոսվող աշխատությունը, Էջ 14:

րաններում երեք տեղ նշվում է Վարդան անունը իր ծննդավայր Մարաթայի անունով՝ իբրև Մարաթացի³, մի մականուն, որով հայտնի է եղել նա մինչև իր Այգեկում հաստատվելը։ Նշենք, որ սույն աշխատության հեղինակի պատկանելության հարցում, Անասյանը դեռևս վաղուց է, որ միշտ կողմնորոշում է ունեցել։ Իր «Հայկական Մատենագիտություն» հոյակապ աշխատության Ա հատորի զանազան էջերում նա արդեն հայտնել էր այն կարծիքը, թե հիշյալ երկը Վարդան Այգեկցու հեղինակությունն է՝ Որպես մեկը հայ հակաբաղկեղոնական պայքարի ուսումնասիրության աղբյուրներից՝ Վարդան Այգեկցու նորահայտ այս ծավալուն աշխատության արժեքը շատ մեծ է։ Միջնադարում հակաբաղկեղոնական պայքարը հայերի համար դարձել է մաքսովան և ավելի միշտ՝ լինել թե չլինելու պայքար։ Ինչպես իրենց հայրենիքում, այնպես էլ հայկական գաղթավայրերում դարեր շարունակ հայերը ձգտել են կյանքի գնով կաշաճ մնալ հայրենական հնավանդ սովորույթներին և հերոսաբար, մեծ զոհողություններով գնով, նրանք կարողացել են հակահարված տալ բյուզանդական խարդավանքներին, որոնց նպատակն է եղել հայերին դավանափոխ անելու միջոցով ձուլման ենթարկել նրանց։ Ավելի քան հազարամյա իրենց այս գոտեմարտի քննադրում բազմամյա ու լուսամիտ հայ վարդապետները բյուզանդական բաղկեղոնական ոտնձգությունների և հայերի մասին տարածվող զրպարությունների դեմ կարողացել են տեղեկել իրենց գաղափարական գեներքը։ Ահա և հայերի այդ գոյամարտը ծնունդ է տվել դավանաբանական չափազանց հարուստ մի գրականության, որը, սակայն, դժբախտաբար, ցարդ անհրաժեշտ չափով չի ուսումնասիրված հայ բանասիրության կողմից, իսկ բազմաթիվ արհամարհանքներից մազապուրծ ազատված մի շարք կարևոր երկեր դեռևս չարունակվում են մնալ անտիպ և անձանոթ։

³ Տես Մաշտոցյան Մատենադարանի № 8356 նեղագրի 110ա, 130բ—131ա, և 142ա էջերը։

⁴ Լ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե—ԺԸ դդ., Երևան, 1959, էջեր 78. (տող 27—35), 353 (տող 14), 487 (տող 18), 490 (տող 42), 782 (տող 7), 1034, (տող 27), 1043, (տող 25), և այլն։ «Հայկական մատենագիտություն»-ից հետո 1960 թ. Նորայր եպիսկոպոս Մովսիսյանը («Պողոսյան») ևս գրել է, որ «Արմատ հաստոց» ժողովածուի հեղինակը Վարդան Այգեկցին է, թեև բնագրական-համեմատական ապացույցներ չի բերել (Նորայր եպիսկոպոս Մովսիսյան, Վարդան վարդապետի «Հատարմատ»-ը, «Սիփն», Երուսաղեմ, 1960, էջ 104—106։

ՅԱԿՈԲ Ս. ԱՆԱՍԻԱՆ

(Հայաստանի Գիտ. Ակադեմիայի Պատմության Հիմնադրից)

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻՆ

ԻՐ ՀՈՐԱՅԱՅՏ ԵՐԿԵՐԻ ԼՈՅՍԻ ՏԱԿ

ԲԱՆԳՐԱՆԵՐ

ՎԱՆԵ ԱՆԻՐԱՆ ԲԱՐԲԱՍՈՂԱՅ ԵՆԵՂԵՑԻՈՅՍ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՍ.

ՎԱՆԵ ՇԱՏԱՀԱՋ ԲՆԱԴԱՅՍ ԵՆԵՂԵՑԻՈՅՍ

Արտատպում

«Բաղմովեղ»-ի 1968, ք. 7—12 քաղաղիկէն

ՎԵՆԵՏԻԱ — Ս. ՂԱՋԱՐ

1969

ԺԲ—ԺԳ դդ. Կիլիկյան Հայաստանի պատմական միջավայրում, որ գործում էր նաև Վարդան Այգեկցին, թեև ներքին և քաղաքական պայմանները տարբեր էին՝ կենտրոնական Հայաստանից, սակայն հայերի դեմ ուղղված դավանաբանական պայքարը շարունակվում էր բուն կերպով, միայն այն տարբերությամբ որ այդ պայքարի գլուխն էր անցել բյուզանդականին փոխարինելու և կամ՝ հոռմեական եկեղեցին։ Տիրող այդ իրադրության պայմաններում է, որ Վարդանը ստանձնում է խիստ պատասխանատու մի պարտականություն՝ գրել իր «Հատարմատ»-ը։ Նա այդ առթիվ երկարորեն ուսումնասիրում է հայ և օտար մատենագիրների դավանաբանական ժառանգությունը, հայ հեղինակների կողմից զանազան առիթներով գրված թղթերը և այլն։ Վարդանը իր հիշատակարանում հետևյալ կերպ է նկարագրում իր կատարած աշխատանքները.

«Անճկությունը և մեծ սիրով հաւատոյ, յուսանիլն մեր զատուածաշունչ կտակարանս, հաւաքեցի զայս ատուածաբնակ տառս ընդդէմ երկաթնակաց և ամենայն հերձուածողաց, ուր և գտանէի վկայութիւն ի նորք գիրս եւ մեկնիչս կամ ի թուխտ գիրս և կամ ի հաւաքման սրբոց հայրապետաց և բարեփառ հարցն մերոց, զոր արարեալ են ընդդէմ ամենայն հերձուածողացն»⁵:

Վարդանը իր հետագոտությունների ընթացքում հատկապես պրպտել է Հոռմկլայի կաթողիկոսարանի մատենադարանը. «Ուր գտաք,—գրում է նա,—ծողովեալ զհաւաքման գիրս և թուխտս սրբոց հայրապետաց և մաքրափալ վարդապետացն Հայոց զոր արարեալ են ընդդէմ հերձուածողացն»⁶: Վարդանը իր որոնումների ընթացքում ձեռագրերից ծաղկաբաղ է արել օտար և հայ մատենագիրների ասույթները՝ «առանց աւելորդ բանի», ինչպես գրում է նա: Ի վերջո ավարտին հասցնելով իր «Հաւատարմատ»-ը, նա լավագույն կերպով գիտակցում էր, թե ի՞նչ նշանակություն կարող է ունենալ իր այդ երկը տվյալ ժամանակաշրջանի պատմական բարդ իրադրության պայմաններում: Վարդանը այդ մասին գրել է հետևյալ նշանակալից տողերը՝ ուղղված ընթերցողին. «Եւ արարի քեզ առ ձեռն պատրաստ զէն, ո՛վ սիրելի, ընդդէմ թերավարժ՝ երկմիտ քննողաց, քանզի խոցիր հոգիս յորժամ սիրողք բաժանման տգիտաբար խօսելին վասն երկու բնութեան և կամ վասն ալլոց խորհրդոց, և այս ետ ձեռնարկել մեզ յայս բան, որ ի վեր է քան զկար մեր»⁷:

Վարդանի կանխատեսումները իր աշխատության կատարելիք դերի մասին՝ ի զուր չանցան: Նրա երկը հզոր զենք դարձավ հայ եկեղեցու և հայ ժողովրդի ձեռքին ընդդէմ օտարոտի թշնամական ապրանքների և լուսաբանող ուղեցույց՝ վերջիններիս ազդեցության տակ ընկած որոշ թվով հայերի համար: Դրա լավագույն ապացույցն է հանդիսանում այն մեծ ընդունելությունը, որին «Հաւատարմատ»-ը արժանացել է իր ժամանակին: Վարդանը, գոհացում տալու համար իր երկասիրության նկատմամբ ցուցաբերվող մեծ հետաքրքրությանը, ստիպվել է կարճ ժամանակում 12 անգամ այն ընդօրինակել և տարածել, մի բան, որը խիստ ուշագրավ երևույթ է նաև հայ գրչության պատմության մեջ: Վարդանը միաժամանակ թելադրել է որիշներին ևս՝ տարածել այն: Հիշյալ գործի

գտած ընդունելության լավագույն ապացույցներն են նաև այժմ «Հաւատարմատ»-ի տարբեր օրինակների առկայությունը ինչպես Հայաստանի, այնպես էլ արտասահմանի ձեռագրատներում: Անասյանը նշում է մոտ մեկուկես տասնյակ լրիվ և կամ թերի օրինակներ:

Վարդանի հիշյալ աշխատության ունեցած պատմական նշանակությունը և արժեքը լավագույն կերպով է բնորոշել հեղինակի ժամանակակից և նրա հովանավոր Պաղտին իշխանը, որը Վարդանին ուղղած իր թղթում գրել է. «Եւ ես ուրախացաք վասն գրոցս՝ զոր ստաքեցեր առ մեզ. զի արմատ է սա հաւատոյ եւ գործարան ամենատարբերորդութեանն որով լուսաորեցաք հոգով և մարմնով, և պայծառագուն իմացաք ի ամսն է մեծ և աստուածային խորհրդածությունս»⁸: Վարդանի սույն գործը իր թարմությունը և նշանակությունը չի կորցնում նաև հետագա ժամանակներում, անգամ հայերի հայրենի սովորույթների դեմ ծառացող օտար ուժերի համար: Ավելորդ չի լինի նշել այս առթիվ, որ քաղկեդոնականների կողմից հայերի դեմ ուղղված ամբաստանությունների շարքում, որպես «մոլորություններ» պարունակող, հայերեն 18 գրքերի ցուցակի երկրորդ տեղում հիշվում է «Հաւատարմատ»-ը⁹: Հայ եկեղեցու և հայ ժողովրդի հակառակորդների կողմից դեռևս 14-րդ դարի կեսին Վարդանի այդ աշխատության հիշատակությունը առաջնակարգ տեղում ցույց է տալիս, թե այն ինչպիսի՜ հզոր զենք էր դարձել հայերի ձեռքում՝ քաղկեդոնական քարոզչության դեմ:

Վարդանի սույն գործի նշանակությունը փաստող մի կարևոր տվյալ է նաև երկաթնակների կողմից գրված մի այլ «Արմատ հաւատոյ»-ի գոյության ապացուցումը Անասյանի կողմից¹⁰: Այդ մասին խոսվում է 1306 թ. Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի կողմից Հեթում Բ-ին ուղղված հայտնի թղթում, որ հրատարակել է լատին քարոզիչ Կդեմես Գալանոսը¹¹: Անասյանը փաստարկում է, որ այն գրված պետք է լինի ԺԳ դարի երկրորդ կեսին, այսինքն Վարդանի «Արմատ հաւատոյ»-ից շուրջ կես դար հետո: Երկաթնա «Արմատ հաւատոյ»-ի երևումը մի անգամ ևս ապացուցում է, թե ինչպիսի՜ խոշոր նշանակություն է ունեցել այդ ժամանակաշրջանում Վարդանի գրած ուղղափառ «Հաւատարմատ»-ը, որ նրա հակառակորդ-

⁵ Տե՛ս Հ. Ա. Անասյանի գրախոսվող աշխատությունը, էջ 9—10 (Մաշտոցյան Մատենադարանի ձեռագիր № 3295, էջ 338ա):

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 10:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 10:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 36, ծանոթ. 153:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 37:

¹⁰ Կ. Գալանոս, Միաբանություն Հայոց սուրբ եկեղեցուն ընդ մեծի սուրբ եկեղեցուն Հռոմմայ, հտ. Ա, Հոռմ, 1650, էջ 435—440:

ները ստիպվել են նույն անունով աշխատություններ տեղեկել միաբնակ հայերի դեմ պաշարելու և կամ անտեղյակ մարդկանց մոտ շփոթություն տեղեկելու համար:

Նորահայտ աշխատությունը, օտար և հայ բազմաթիվ հեղինակների մատենագրական վկայություններով, նաև աղբյուրագրական մեծ արժեք է ներկայացնում: Այնտեղ ի հայտ են գալիս մի շարք հեղինակներ, որոնց ինքնությունը մեզ անծանոթ է, կամ այնպիսիներ, որոնց գործերը մեզ չեն հասել: Այնտեղ վկայություններ կան անծանոթ մատենագիրներ Տեղեայրենոսից, Դակեղից, Ապլիսեսից և ուրիշներից: Նշենք նաև, որ Ապեղես Քերտանցու գործերից կատարված հայերեն թարգմանությունների մասին հայագիտությանը դարձյալ ոչինչ հայտնի չէր, մինչև Անասյանի կողմից Վարդանի հիշյալ աշխատության հայտնաբերումը¹²:

Վարդանն իր այս երկում մի շարք վկայություններ է բերել նաև քաղվածաբար և ոչ բառացի: Աղափսիներից է, օրինակ, Աբրահամ կաթողիկոս Աղբաթանեցու «Ի հաւատոյ թղթէն Աբրահամու եպիսկոպոսի» խորագրի տակ բերված հատվածը, որն ամբողջությամբ պահպանվել է «Գիրք թղթոց»-ում¹³ և համատուտ՝ Ուխտանեսն պատմչի մոտ¹⁴, «Թուղթ շրջագայական» վերնագրով:

Վարդանն իր սույն աշխատության մեջ բազմաթիվ անգամներ վկայակոչումներ է բերել ոմն Անանիա վարդապետից: Անասյանը կարծում է, որ այդ քաղվածքները կատարված են Անանիա Սանահնեցու¹⁵: Հարցը մեզ համար հետաքննելի է մնում, քանի որ Նարեկա վանքի և դպրանոցի հիմնադիր Անանիա Նարեկացին առաջինն էր, որ, ըստ իր աշակերտ՝ Ուխտանեսն պատմչի հաւատալի վկայության, գրեց երկաթնակների դեմ մի աշխատություն՝ «Հաւատարմատ» անունով, և այն ներկայացրեց Խաչիկ Ա. կաթողիկոսին¹⁶, ամենայն հավանականությամբ 973 թ. և որը սակայն այժմ կորած է: Վերջերս քաղմատիստական ձեռագրագետ Տ. Նորայր եպիսկ. Պողարյանն իր «Հայ գրողներ Ե—ԺԷ դդ.» արժեքավոր հատորում նշում է Երուսաղեմում պահվող մի ձեռագրի մասին, որը Անանիա Նարեկացու «Ընդդէմ երկաթնակաց» ծավալուն գործն է և թվում է, որ

Անանիա Սանահնեցին օգտված լինի նրանից, քանի որ վերջինիս «Հակաճառություն» մեջ կան համանման շատ հատվածներ¹⁷: Հետագայում Վարդանի սույն նորահայտ գործում գտնվող ոմն Անանիա վարդապետի վկայությունների համեմատությունը մի կողմից Անանիա Սանահնեցու և մյուս կողմից Երուսաղեմի հիշյալ գրչագրի հետ կարող է կարևոր նշանակություն ունենալ Անանիա Նարեկացու կորած աշխատությունը ի հայտ բերելու գործում: Անհրաժեշտ է նշել, որ Վարդանի «Արմատ հաւատոյ»-ի աղբյուրների հետագա առուգման հարցը թեև շատ աշխատատար և մաշեցնող գործ է, սակայն արժեքավոր գյուտեր կարող է բնօրինակ հայ մատենագիտության և առհասարակ հայ աղբյուրագիտության համար:

Անասյանը իր նորահայտ նյութերը ներկայացրել է Մաշտոցյան Մատենադարանի № 3295 և № 8356 ձեռագրերի հիման վրա: Տրված են նաև այդ գրչագրերի նկարագրությունները: Հեղինակին ցարդ հաջողվել է գտնել «Արմատ հաւատոյ»-ից 7 ձեռագիր օրինակներ (Մաշտոցյան Մատենադարանի №№ 3295, 512, 1982, 4425, 6567, 7255 ձեռագրերը և Մարսեղում մի գրչագիր), որոնցից սակայն ցարդ հայտնի՝ ամենակրիվ միակ օրինակը 3295 համարը կրող ձեռագիրն է: Ձեռագրերի այս խումբը Անասյանը ճշտում է որպես ընդարձակ խմբագրություն, քանի որ նրան հայտնի է նաև մի երկրորդ խումբ ևս, որ նա անվանում է համատուտ խմբագրություն և որից մի շարք օրինակներ են գտնվում Երևանի, Վիեննայի, Արմաշի (այժմ անհայտ կորած), Վենետիկի և Հռոմի մատենադարաններում: Հիշյալ երկու տարբեր խմբագրությունների մասին անցյալում Կարապետ եպիսկ. Տեր-Մկրտչյանը այն կարծիքն է հայտնել, որ դրանք դավանաբանական տարբեր ժողովածուներ են. այնինչ, ինչպես այժմ ապացուցվում է, դրանք միևնույն ժողովածուի տարբեր խմբագրություններն են:

Ոչ պակաս ուշադրության արժանի է նաև Անասյանի կողմից Մաշտոցյան Մատենադարանում № 8356 ձեռագրի հայտնաբերումը, որպես Վարդան Այգեկցու երկերը պարունակող ժողովածու: Սույն գրչագրի արժեքը շատ ավելի է մեծանում, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ, ինչպես արդեն ասվեց, այն ուղղակի ընդօրինակված է Այգեկցու ինքնագիր օրինակից և միաժամանակ պարունակում է հեղինակի հիմնականում անհայտ մի շարք գործերը: Դարձյալ վերոհիշյալ այդ ձեռագրում եղող նյութ-

¹² Հ. Ս. Անասյան, Հայկական Մատենագիտություն, Ա, էջ 1039:

¹³ Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 192—193:

¹⁴ Ուխտանեսն եպիսկոպոս, Պատմություն Հայոց, հատված Բ, Վաղարշապատ, 1871, էջ 132—136:

¹⁵ Տես Անասյանի գրախոսվող աշխատությունը, էջ 33, Վարդանի սույն աշխատության մեջ վկայակոչվող հեղինակների ցուցակը:

¹⁶ Ուխտանեսն եպիսկոպոս, Ա, էջ 11:

¹⁷ Նորայր եպիսկ. Պողարյան, Հայ գրողներ Ե—ԺԷ դար, Երուսաղեմ, 1971, էջ 151:

թերից են գրախոսվող աշխատության մեջ հրատարակված՝ Այգեկցու երկու փոքրածավալ գործերը: Դրանցից առաջինը կրում է «Վասն անիրա բամբաստողաց եկեղեցույն Հայաստանեայց» խորագիրը և համարվում է «Արմատ հաւատոյ»-ի ավարտման ժամանակակից: Անասյանը գտնում է, որ սույն գրվածքը կոչված է ավելի լուսաբանելու այն խնդիրները, որոնք ծնունդ են տվել «Արմատ հաւատոյ» գրքին և վերաբերում են մոտավորապես ԺԲ դարի վերջերին և կամ ԺԳ-ի սկզբներին: Սույն բնագիրը ևս գրված է հայերենի ավանդությունները պահպանելու ջերմ ձգտումով և հիմնականում նվիրված է Հայաստանյայց եկեղեցու առաքելական ծագմանը և նրա հիմքերի պաշտպանությանը: Այն ուղղված էր քաղկեդոնականությանը հարող հայերին, որոնք, գաղափար իսկ չունենալով հայ ժողովրդի և նրա եկեղեցու դավանության մասին, բամբասում էին, թե «Հայք տգետ և վերջին ազգ են»:

Հրատարակվող երկրորդ բնագիրը մի ընդարձակ թուղթ է՝ «Վասն շատահաջ քննողացն յանդիմանութիւն» խորագրով, որը գրված է Դոսիս (Տաւիս) ձորից, ուր գտնվում էր Այգեկի վանքը և ուղղված էր հեղինակի ծննդավայր Մարաթայի և նրա շրջակաների, այսինքն բովանդակ Դյուք (Տյուք) գավառի հայ, հույն և ասորի բնակիչներին: Իր այս թղթով Վարդանը հանդես է գալիս նաև իբրև ժողովուրդների բարեկամության ջերմ ջատագով, խաղաղության ազնիվ պաշտպան և անկողմնակալ հաշտարար ոգի: Նա բոլորովին հավասարապես հորդորում է վերջ տալ կրոնական վեճերին, այսինքն ժողովուրդների միջև եղող դավաճաբանական երկպառակություններին: Անասյանը սրանից առաջ իր «Վարդան Այգեկցին որպես համերաշխության գաղափարախոս» հոդվածում առանձինն անդրադարձել է այս կարևոր բնագրի նշանակությանը և նրա ներկայացրած արժեքին¹⁸:

Ինչպես նշեցինք, Անասյանը իր սույն աշխատությանը ոչ միայն երևան է բերել Վարդանի ցարդ անհայտ մնացած աշխատությունները, այլև թանկագին լրացումներ է կատարել հեղինակի կենսագրության վերաբերյալ: Մխիթարյան բազմալատակ հայագետ Հ. Գ. Զարպիանայանին, որն անցյալ դարի երկրորդ կեսին գրել էր իր «Պատմութիւն հայ հին դպրութեան» երկը, դեռևս անձանոթ էր մնացել Վարդան Այգեկցու ինքնությունը: Զարպիանայանին ծանոթ է եղել միայն Վարդան վարդապետ Մեծը, որը Վարդան Արևելցին է: Իսկ ինչ վերաբերում է Վարդան Այգեկցու առակներ-

ին և նրա այլ ստեղծագործություններին, դրանք դրված են Վարդան Մեծի անվան ներքո, իբրև «մանր կամ անհարազատ գլրվածքներ»¹⁹:

Այգեկցին հայագիտությանը հայտնի դարձավ շնորհիվ ակադ. Ն. Մառի ջանքերի²⁰: Սակայն վերջինս հիմնականում իր ուսումնասիրության նյութ դարձրեց Վարդանի առակները և միայն անցողակի կերպով անդրադարձավ նրա մի քանի այլ անտիպ գործերին: Ականավոր ու մեծավաստակ հայագետներ Մանուկ Աբեղյան²¹ ու Հրաչյա Աճառյանը²² իրենց աշխատություններում նորահայտ նյութերի բացակայության պատճառով հարևանցիորեն միայն կարողացան ուրվագծել Վարդան Այգեկցու կյանքն ու գործունեությունը: Աճառյանը Վարդան Այգեկցու անվան ներքո նշել է նաև՝ «Տես և Վարդան Տյուքեցի» (№ 70), որի տակ անշուշտ դարձյալ նույնինքն Այգեկցին պետք է հասկանալ:

Այսպիսով հայագիտության մեջ նախ Այգեկցին շփոթվել էր Վարդան Արևելցու հետ և ապա հիմնականում խոսվել էր նրա առակների, ինչպես նաև նրա այգեկյան գործունեության շրջանի մասին (1210-ից հետո): Այժմ Անասյանի աշխատության շնորհիվ առաջին անգամ հայ բանասիրությանը հայտնի է դառնում Վարդանի կյանքի և գործունեության նաև նախայգեկյան շրջանը, որը, ինչպես ցույց են տալիս փաստական տվյալները, եղել է շատ ավելի բեղուն և հարուստ: Այս ժամանակահատվածում է, որ Այգեկցին ի հայտ է գալիս իբրև եկեղեցական, հասարակական մեծ գործիչ, որը կարելի էր դնել կատարել Կիլիկյան Հայաստանի կյանքում:

Նախ նշենք, որ Անասյանը առաջին հերթին կանգ է առել Այգեկցու հայածման հարցի վրա, որը դեռևս անլուծելի էր մնացել հայ բանասիրության մեջ: Անասյանը ճշտում է, որ հիշյալ հայածանքը տեղի է ունեցել 1205—1209 թթ. ընթացքում և ամենայն հավանականությամբ այն կարող էր արդյունք լինել Վարդանի «Արմատ հաւատոյ»-ով ծա-

¹⁹ Հ. Գ. Զարպիանայան, Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ—ԺԳ դար), չորրորդ տպագրութիւն, յաւելածովք և փոփոխութեամբ, Վենետիկ, 1932, էջ 735—745:

²⁰ Н. Марр, Сборник притч Вардана; материалы для истории средневековой армянской литературы, ч. I—III, С.-Петербург, 1894—1899.

²¹ Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 158—169:

²² Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ե, Երևան, 1962, էջ 83—84:

¹⁸ «Էջմիածին», 1969, № 1—Ը, էջ 52—58:

վալած պաշարի, որն իր շատ կողմերով վերաբերում էր նաև հայ-ատրական միջավայրին և ըստ ինքնան ուղղված էր նաև այն տեղ տիրող ատրական ազդեցության դեմ, հետևաբար նաև՝ այդ միջավայրում դիրքեր ունեցող հայ տարրերի շահերի դեմ²⁵։

Վարդանի վաղ շրջանի գործունեության մասին նորություն է նաև Անապանի կողմից ի հայտ բերված այն ուշագրավ տվյալը, ըստ որի նա 1198 թ. ներկա է եղել Կոնստանդնուպոլսի հանդեսին, տվյալ, որն ի հայտ է գալիս վերոհիշյալ «Վասն անիրա բամբաստողաց եկեղեցույն Հալաստանեայց» նորահայտ գրվածքում։ Անապանը սույն նորագյուտ տվյալից ելնելով գտնում է, որ դարձյալ Այգեկցիին պետք է լինի Սմբատ Սպարապետի տարեգրության մեջ նույն թագադրության հանդեսին պաշտոնական ներկայների մեջ հիշատակվող «Տէր Վարդան»՝ արքայիսկոյոս Լամբրոնին և առաջնորդ Սկևոտ» կոչված անձը²⁶։ Մեզ թվում է, որ այս փաստն անստարկելի է և Վարդանը իր նախադեկլան շրջանում եղել է նաև Լամբրոնի արքայիսկոյոս և Սկևոսի առաջնորդ։

Կենսագրական հաջորդ ուշագրավ հայտնաբերումը վերաբերում է Վարդանի մինչ-այգեկյան շրջանում կրած մականուններին, քանի որ, ինչպես ճիշտ նկատում է Անապանը, Վարդանը Այգեկցի կոչվեց Այգեկում հաստատվելուց հետո միայն։ Նա Մատենադարանի № 728 և 1838 ձեռագրերի հիման վրա ապացուցում է, որ Վարդանը նախապես հայտնի է եղել նաև **Ֆենիկ** և **Կիլիկեցի** մականուններով²⁷։

Սակայն հարգելի, վաստակաշատ բանասերը իր հիշյալ բազմազան հայտնաբերումներով բավարարվողը չէ։ Ինչպես իր կոթողական գործի՝ «Հայկական մատենագիտության», այնպես էլ իր նոր ուսումնասիրության մեջ կատարում է իր նյութի հետ առնչվող՝ մի շարք աղավաղված կամ ցարդ անհիմանալի մնացած բառերի կամ անունների բանասիրական նրբին և խիստ արժեքավոր ճշգրտումներ։ Այդ շարքից առաջին հերթին արժանի է հիշատակության Վարդանի նորագյուտ «Հալաստարմատ»-ում օգտագործված «Ջել» և «ուրբաթագել» բառերի հարցը և նրանց ստուգաբանությունը, որոնց

Անապանը նվիրել էր հատուկ հոդված²⁸։ Այդ բառերից առաջինը՝ «գել»-ը, որը երկրորդի բաղադրիչ մասն է, բոլորովին անձանոթ է եղել հայերեն լեզվի անգամ ամենահին հնդեվրոպական բառարաններին (Նոր Հայկազյան, Առնոն և Արմատական), իսկ երկրորդը, որը տեղ է գտել Վենետիկյան բառարաններում, աղավաղված էր «ուրբաթագել» կամ «ուրբաթագել» ձևերով և ճիշտ չէր բացատրվում։ Ի վերջո կողմնակի աղբյուրների միջոցով Անապանին հաջողվում է ճշտել այդ բառերի ուղիղ ձևերը։ Անապանի ստուգաբանությանը «գել»-ը կապ ունի գելալանի բառի հետ և նշանակում է «խախտում»։ Հեղինակը այն բացատրում է նաև պատմականորեն։ Այգեկցու ժամանակաշրջանում հայ և ատրի եկեղեցիների միջև եղող Հական վեճերից մեկը վերաբերում էր պահքի ժամերի խախտման հարցին, ուստի և հայերի կարծիքով «ուրբաթագել»-ը պատմականորեն նշանակում էր «ուրբաթ օրվա պահքի ժամերի խախտում», որը կատարվում էր ատրիների կողմից։

Ծառ ալեկի բազմազան և հարուստ են Անապանի ճշգրտումները 1341 թ. Ներսես Պալենցի կողմից Ալիմոնում կազմված գրացուցակի վերաբերյալ։ Այս գրացուցակում թվարկված են 18 անուն հայերեն գրքեր, որոնք «մոլորական» էին համարվել Պալենցի և լատինների կողմից։ Հայերեն գրքերի՝ լատինական տառերով գրված և մեծ մասամբ աղավաղված անունների ուղղման աշխատանքներով առաջինը գրավել է Մաղաթիա արքայիսկ. Օրմանյանը։ Ինչպես նշեցինք, սույն ցուցակի երկրորդ տեղում հիշվում է «Հալաստարմատ»-ը աղավաղված՝ Hanadoarmat, որը Անապանի կողմից ճշտվում է իրեն Վարդանի կազմած «Հալաստոյ արմատ»-ը։ Հեղինակը բանասիրական դիպուկ կոսմոսներով կարողանում է ճշգրտել մի շարք գրքերի անուններ ևս, որ Օրմանյանը իր ժամանակին չէր կարողացել պարզել։ Իրեն 8-րդ դարից սույն գրացուցակում լատինական տառերով գրված էր աղավաղված ձևերով՝ Octavensis, Tactanensis, Occenensis²⁹. որը Օրմանյանի կողմից ընթերցվել էր իրեն Ոկտաենցի կամ Տոկտաենցի կամ Ոկկենցի և որ նա անլուծելի էր համարել, ի վերջո գրելով՝ «Նմանությունը ճշտելն ալ դժվար»³⁰։ Այնինչ Ա-

²⁵ Հ. Ս. Անապանի գրախոսվող աշխատությունը, էջ 39—40։

²⁶ Սմբատ Սպարապետի տարեգրություն, Վենետիկ, 1865, էջ 110—111։

²⁷ Հ. Ս. Անապանի գրախոսվող աշխատությունը, էջ 41։

²⁸ Տե՛ս «Լրաբեր հասարակ. գիտ.-ի», Երևան, 1969, № 3, էջ 78—81։ Այդ մասին տես նաև Անապանի գրախոսվող աշխատությունը, էջ 29—31։

²⁹ Տե՛ս Հ. Ս. Անապանի գրախոսվող աշխատությունը, էջ 36։

³⁰ Մաղաթիա արք. Օրմանյան, «Ազգապատում», հտ. Բ, Կ. Պոլիս, 1914, § 1306։

Անայանը այն ճշգրտում է իբրև **Ուխտանեսն**²⁹: Անհրաժեշտ է նշել, որ Ժ դարի հայ պատմիչ Ուխտանեսի պատմության «մերժված» գրքերի շարքում հիշատակվելն իսկապես, որ տեղին է, բանի որ ինչպես միջնադարում, այնպես էլ նոր ժամանակներում այդ աշխատությունը քաղկեդոնականների կողմից մերժված է եղել: Պատահական չէ, որ Հովհաննես Դամասկացու միջնադարյան հայ քաղկեդոնական խմբագրողը նախատական տողեր ունի ուղղված Ուխտանեսի հասցեին³⁰: Նույն լատիներեն ցուցակում իբրև 13-րդ գիրք նշված է *Nanam, Ranam, Vsanam*³¹ ձևերով մի աշխատություն, որ Օրմանյանը հակված է ուղղելու իբր «Վանամի մեկնություն» Հովհաննես, որ **Վանական** կամ **Վարդան** վարդապետը պիտի ըլլա, թեպետ Հովհաննես մեկնություն գրած ըլլալին հայտնի չէ³²: Անայանը այս ևս մեծ հաջողությամբ ճշգրտում է իբրև **Նանա**, այսինքն Նանա Ասորու «Մեկնություն Յովհաննես անտարա-նին»³³: Նույնպես գրացուցակի 17-րդ գիրքը, որի լատինատառ աղավաղված հայերենը կարդացվում է իբրև *Textorqure, Teytor-gunt*³⁴ և որը Օրմանյանի կողմից ընթերցվում է իբրև **Տեքստորկեր** կամ **Տէտորգունտ** նրա մասին անորոշ կերպով գրում է Օրմանյանը՝ «Գիրք խնջոյից թարգմանված, ճշդելը դժվար»³⁵. այս ևս դարձյալ հաջողությամբ ճշգրտվում է Անայանի կողմից հետևյալ ձևով: Նկատի ունենալով, որ այն թարգմանված է իբրև *Liber epistolaram* և ստուգելով նաև լատինատառ հայերենով գրված աղավաղումները, ճիշտ կերպով գտնում է, որ այն «Թղթոց գիրք»-ն է³⁶: Հիշյալ ճշտումները կարևոր նշանակություն ունեն ինչպես ընդհանուր հայ մատենագրության, այնպես էլ հիշյալ գրքերի պատմության համար:

²⁹ Հ. Ս. Անայան, նշված աշխատությունը, էջ 36:

³⁰ «Լույս», Կ. Պոլիս, 1906, էջ 357, 475:

³¹ Հ. Ս. Անայան, էջ 36:

³² Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», նույն տեղում:

³³ Հ. Ս. Անայան, էջ 36:

³⁴ Հ. Ս. Անայան, էջ 36:

³⁵ Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», նույն տեղում:

³⁶ Հ. Ս. Անայան, էջ 37:

Ուշագրավ են նաև Վարդանի կյանքի ու գործունեության հետ կապված մի շարք տեղանունների մասին կատարված ճշտումները: Նախ ճշտվում է Այգեկի տեղը. հիշատակարանների օգնությամբ ապացուցվում է, որ այն օտնվել է Դոսիս (Տաւիս) կոչված ձորում, իսկ Այգեկն ու Դոսիսը գտնվում էին Սուրբ լեռներում, որոնք այժմ են հայտնի Սյավ լեռներ անունով³⁷: Ճշտվում են նաև Մարաթան և Դուրքը, նոր է հայտնվում Վերին Մարաթա տեղանունը³⁸:

Եզրակացություն: Ներհուն բանասեր Հ. Ս. Անայանի սույն աշխատությունը կարևոր ներդրում է հայ մատենագրության պատմության համար: Դրա շնորհիվ այժմ Վարդան Այգեկցին, իր ամբողջ հասակով կանգնած, ի հայտ է գալիս մեր միջնադարի երախտավորների շարքում. նա այժմ արդեն ունենում է իր կենսագրությունը և իր արժանի տեղն է գրավում հայ գրականության պատմության մեջ: Նա խոշոր առակագիր լինելուց բացի այժմ հայտնի է դառնում նաև իբրև իր ժամանակի մեծագույն հայ եկեղեցական, հասարակական և մշակութային գործիչներից մեկը: Վարդանը կարևոր նպաստ է բերել իր ժամանակին հուզվող դավանաբանական հարցերին և, պայքարելով լատինատու հոսանքի դեմ, դարձել ազգային ինքնությունության համար պայքարող հայ կարևոր դեմքերից մեկը: Այժմ մեզ մնում է ցանկանալ, որ բազմալատասկ հայագետ Հ. Ս. Անայանը իր խոստման համաձայն լույս ընծայի նորահայտ «Հաստարմառ»-ի բնական բնագիրը՝ ուսումնասիրությամբ հանդերձ, այսպիսով հայագիտությանը վերջստին ընծայելով կորստյան մատնված արժեքավոր երկերից մեկը: Այս նշանավոր շորժը իր հասուկ տեղն է ունենալու «Իիրք թղթոց»-ի, «Կնիք հաստոյ»-ի, Տիմոթեոս Կուզի «Հակաճատություն» երկի և մնացորդի շարքում: Հաջողության ջերմագին մաղթանքներ հայագիտության վաստակավորին սույն ծանր աշխատանքը ևս իր անմասն «Հայկական մատենագիտության» հետ միասին սպարտին հասցնելու համար:

ՍՈՒՐԵՆ ԲՈՒԱՆԶՅԱՆ

³⁷ Նույն տեղում, էջ 5—6:

³⁸ Նույն տեղում, էջ 15, ծանոթ. 28:





Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Զ Ա Տ Ի Կ Ի Հ Ա Ր Ց Ը

1969 թվականի հունվար 27 և մարտ 15 թվակիր պաշտոնագրով Ամենայն Հայոց Հայրապետը պարտականություն էր դնում Խոսիկայի հայոց հոգևոր վերատեսուչ տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանի վրա, նույն տարվա աշնանը Մայր Աթոռում, սեպտեմբերի 27—հոկտեմբերի 2-ը գումարվելիք եպիսկոպոսաց ժողովի օրակարգի «Զատիկը անշարժ օր մը տոնելու հարց»-ի մասին պատրաստել ուսումնասիրված գեկուցագիր և բերել ժողովին՝ եզրակացություններով և առաջարկներով:

Տ. Զգոն եպիսկոպոսը, «տեսունական հրաման»-ի համաձայն (էջ 86) Զատիկի հարցի շուրջ պատրաստում էր բովանդակալից մի ուսումնասիրություն, պատմական ու տոմարագիտական տվյալներով ամբողջացած, և բերում ժողովին:

Եպիսկոպոսաց ժողովի Դ նիստում տ. Զգոն եպիսկոպոսը ընթերցում էր իր գրավոր գեկուցագրի այն մասը միայն, որը նշվիլոված էր օրակարգի «Ս. Զատիկը անշարժ և հաստատուն օր մը տոնելու հարց»-ին:

Եպիսկոպոսաց ժողովը նկատի առնելով այն հանգամանքը, որ սույն հարցի լուծումը կապված է նաև բույր եկեղեցիների դիրքի և որոշման հետ, միաձայն ընդունում էր հետևելիք բանաձևը՝ տ. Զգոն եպիսկոպոսի գեկուցագրի առիթով.

«Երբ քրիստոնյա եկեղեցիները համաձայնին ու Հարության տոնը կատարել անշարժ և հաստատուն օր մը, Հայաստանյայց եկեղեցին ևս միանա որոշումին, և ու. Զատիկը տոնե տարվան անշարժ օր մը, ապրիլի Բ կամ Գ կիրակին» («Էջմիածին» ամսագիր, 1969, №№ ԺԱ.—ԺԲ, էջ 24):

Տ. Զգոն եպիսկոպոսը, եպիսկոպոսաց ժողովից հետո, գովելի գաղափարն է ունենում Զատիկի հարցի մասին իր բովանդակալից

ուսումնասիրությունը հրատարակել ամբողջությամբ:

Եվ ահա այսօր ընթերցողի սեղանի վրա է ծավալով փոքրիկ, բայց բովանդակությամբ արժեքավոր այդ գրքույկը:

Տ. Զգոն եպիսկոպոսն իր ուսումնասիրությունը ձոնել է Հայոց Հայրապետին.

«Առ Ն. Ս. Օ. Վեհափառ Տ. Տ. Վազգեն Առաջին Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց, նախագահ եպիսկոպոսաց ժողովոյն Հայաստանեայց եկեղեցւոյ,

յամի Տեսուն 1969 ի 27 սեպտ.—2 հոկտեմբերի

ի Մայր Աթոռ ու. Էջմիածին»:

Սույն ուսումնասիրությունը բաղկանում է Ա.—Ժ մասերից. ունի նաև «Մատենագրութիւն», որը կազմում է ԺԱ մասը:

Սրբազան հեղինակը բարեխիղճ աշխատանքով, օտար և հայ աղբյուրների լայն օգտագործումով, ամբողջական կերպով ներկայացնում է «Զատիկի հարց»-ը իր պատմական զարգացման ընթացքում, Բ դարից մինչև մեր օրերը:

Ա մասում (9—12 էջ) հեղինակը բացատրում է հունարեն **պասքա**, հրեական **պասեք** և հայերեն **գատիկ** բառերի ծագումն ու իմաստը:

Բ մասում (13—19 էջ) խոսում է ըստ հնագույն և տարբեր աղանդությունների արեվելյան և արևմտյան եկեղեցիների մեջ Զատիկի տոնը կատարելու թվականի մասին՝ նշելով, որ «Զատիկը քրիստոնեական եկեղեցվո առեւնեն կարևոր, առեւնեն մեծ և առեւնեն հին տոնն է» (էջ 13)՝ կապված պատմականորեն Քրիստոսի հարության հետ, և որը կատարվում էր միշտ կիրակի օրը:

Ինչպես հայտնի է, քրիստոնեական եկեղեցու ընդհանուր պատմությունից, Բ դարից

ԶԳՕՆ ԵՊՍ. ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆ

ԶԱՏԻԿԻ ՀԱՐՅԸ

ՊԵՐՈՒՐ
1971

սկսած, արդեն ծագել էր վեճը Արևելքի և Արևմուտքի եկեղեցիների միջև, Ջատկի միջոց օրվա շուրջ («Հայոց եկեղեցական իրաւունքը», Ա գիրք, Ծուշի, 1903, էջ 38—40):

Գ մասը (20—27 էջ) ներկայացնում է Ջատկի տոմարական շրջաններն ու ցուցակները: Բրիտանական Ջատկի կրթական միջոց զատորոշելու, այն «անկախաբար և բուն օրին տոնելու համար», եկեղեցական տոմարագիտության հմուտ հայրերը ստեղծել են «Ջատկի տոմարական շրջաններ»՝ ա. գրական և աստղաբաշխական հիմունքներով (էջ 20) և, Ջատկի թվականը հիմք ընդունելով, կազմել եկեղեցական տոնացույցն ու օրացույցը:

Պետք է արձանագրել, որ Ջատկի օրը որոշելու մասին Բ դարից սկսած արևելյան և արևմտյան եկեղեցիների և աստվածաբանների միջև ծագել են սուր տարակարծություններ և հակամարտություններ՝ Ջատկի թվականը արեգակնային տոմարի համաձայն ճշտելու մտահոգությամբ:

Գրքույկի Դ մասը (28—40 էջ) նվիրված

է հայկական երեք տոմարների՝ «Հայկա շրջանի», «Բուն կամ Մեծ թվականի հայոց» և «Տոմարական կամ Փոքր թվականի հայոց» տոմարների համատուտ պատմության և ուսումնասիրության: Հայկական երեք տոմարներից «միայն վերջին երկուքը կապ ունին Ջատկի թվականի որոշման հարցին հետ» (էջ 28): Այս մասի մեջ խոսվում է նաև Հովհաննես Սարկավազ վարդապետի հաստատած անշարժ տոմարի և ապա «Ծուգատիկ»-ի մասին (էջ 38—40), որը մեծ վեճեր է ստեղծել մանավանդ հայ և հույն օրթոդոքս եկեղեցիների միջև:

Նիկիայի ժողովը իր որոշումով, այն է՝ «Բոլոր քրիստոնյաները պարտին Ջատկի տոնել մի կիրակի օր և Ջատկի տոնելն գարնան գիշերահավասարի լուսնի լրման հաջորդող առաջին կիրակին», հրահանգում էր Ջատկի միասնական տոնախմբությունը արևելյան և արևմտյան եկեղեցիներում: Բայց, դժբախտաբար, մինչև Թ դարը «հագիվ թե լիովին կիրառության մեջ կմտնե Ջատկի մասին տրված նիկիական որոշումը» (էջ 49):

Նիկիայի ժողովի որոշումի գործադրության ընթացքում են նվիրվել գրքույկի 41—49 էջերը, Արևելքի և Արևմուտքի եկեղեցիների միջև, Ջատկի թվականի շուրջ շարունակվող վեճերի մասին:

Բրիտանական ընդհանրական եկեղեցին առանց բացառության Ջատկի թվականը որոշում է՝ հիմնվելով Նիկիայի ժողովի վերոհիշյալ որոշումի վրա, այսինքն՝ Ջատկի տոնելն գարնան գիշերահավասարին հետևելով լուսնի լրման հաջորդ կիրակին:

Այս հարցում, սակայն, դեռևս տարբերություն կա արևելյան և արևմտյան եկեղեցիների միջև: Մինչև այսօր էլ արևելյան եկեղեցիների մեծամասնությունը Ջատկի չի տոնում միևնույն կիրակի օրը՝ արևմտյան եկեղեցիների հետ: Դա բացատրվում է արևելյանների գործածած «Յուլեան» և արևմտյանների՝ «Գրիգորեան» տոմարների տարբերությամբ:

Գրքույկի Զ մասը (50—56 էջ) ընկնում է առնում պատմության ընթացքում «Յուլեան» և «Գրիգորեան» տոմարների տարբերությամբ ստեղծված անբաղձալի կացությունը:

Այսօր, Էկումենիկ այս ժամանակաշրջանում, քրիստոնյա ողջ աշխարհի առաջ դրված հիմնական հարցը՝ «Ջատկի ամեն տեղ, միասին, միևնույն կիրակին տոնելն է» (էջ 51):

Նույն հարցի ընկնողն է նվիրված նաև է մասը (57—65 էջ), ուր խոսվում է ի մասնավորի արևելյան օրթոդոքս եկեղեցու մեջ

Զատիկի և նրա հետ կապված տոմարական հարցերի շուրջ:

1920-ական թվականներից սկսած մի շարք օրթոդոքս եկեղեցիներ, հենվելով Նիկիայի ժողովի մարտ 22-ը զարման գիշերահավասար ընդունելու «Գրիգորեան» տոմարի իրողության վրա, որդեգրեցին «Գրիգորեան» տոմարը, որով միության ամուր կույան ստեղծվեց արևմտյան եկեղեցիների հետ: Օրթոդոքս եկեղեցիներից Երուսաղեմի պատրիարքությունը, ռուսական, վրացական, լեհական և սերբական եկեղեցիները դեռևս հետևում են «Յուլեան» տոմարին: Օրթոդոքս եկեղեցիները այնուհետև էլ զբաղվել են ողջ օրթոդոքս աշխարհի համար Զատիկը միևնույն և անշարժ մի օրում տոնելու հարցով, ինչպես 1948 թվականի հուլիսին Մոսկվայում ռուս պապիոսլավ եկեղեցու ինքնագլխության հռչակման 500-ամյակին նվիրված հանդիսությանը:

Այսօր կաթոլիկ եկեղեցու համար էլ միջեկեղեցական կարևոր հարցերից մեկն է՝ մյուս եկեղեցիների հետ Զատիկը միևնույն օրը նշելու կամ «Զատիկի միացման» խնդիրը: Այս հարցի համատու ընկալման է նվիրված գրքույկի Ը մասը (66—73 էջ):

ԺՊ դարի վերջին տասնամյակից սկսած կաթոլիկ եկեղեցին մեծ ջանքեր է թափում «Գրիգորյան տոմարի բարեփոխության և ի հարկին մշտնջենական կատարյալ նոր տոմարի մը ստեղծման համար: Համաշխարհային և միակ մշտական կատարյալ տոմարի մը կարիքը ակելի բան 200 տարիներն է վեր կգրադեցնե միտքերը» (էջ 67, 69):

Նման «Համաշխարհային» տոմարի ստեղծման հարցով լրջորեն զբաղվել են Ազգերի լիգայի հաղորդակցությանց հանձնաժողովը, 1922—1937 և ՄԱԿ-ի տնտեսական ու բնակարային ժողովը 1947 թվականին:

Վատիկանի Բ ժողովը նույնպես զբաղվում է այս հարցով, ինչպես նաև ընդհանրապես «Գրիգորեան» տոմարի ինչ-ինչ փոփոխության խնդիրներով:

Կաթոլիկ եկեղեցին և «Գրիգորեան» տոմարի բարեկարգությանը զբաղվող մասնագետները Զատիկի տոնի «Կայունացումը» կամ «Հաստատուն դարձնելը» համարում են լույ կարգապահական մի հարց և ոչ դավանաբանական կամ ծիսական լուրջ խնդիր, որով և ենթակա՝ որոշ լուծման, կարգավորման, եթե այդ է պահանջում «ընդհանուրի բարիքը, պայմանով որ հարգվին Զատիկը

կիրակը մը—ապրիլ 9—25-ի միջև տոնելու նիկիական կանոնը» (էջ 71):

Զատիկը հաստատուն մի կիրակի օր տոնելու հարցը, նշում է տ. Զգոն սրբազանը, զբաղեցրել է քրիստոնեական եկեղեցուն Բ դարից սկսած: Այնուհետև նա հանգամանորեն իր «Ընդհանուր ակնարկ» Թ մասում (74—85 էջ) մի անգամ ևս կանգ է առնում 1921 թվականից Ազգերի լիգայի և ապա ՄԱԿ-ի պն «նախաձեռնություններին» վրա, որոնց նպատակն էր՝ Զատիկի թվականը հաստատուն դարձնելը և որդեգրում՝ մշտնջենական մի տոմարի, ընդունելի բոլորի կողմից:

1967 թվականից սկսած Զատիկի «կայունացման» հարցով զբաղվում է նաև եկեղեցիների համաշխարհային խորհուրդը:

Այս հարցի շուրջ եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ եկեղեցիների միջև շարունակվում է հարցի քննարկումը:


Տ. Զգոն եպիսկոպոսի «Զատիկի հարցը» արժեքավոր ուսումնասիրության ժ մասը կրում է «Վերջաբան և եզրակացություն» վերնագիրը:

Տ. Զգոն եպիսկոպոսը «Զատիկի հարցի շուրջը» իր ուսումնասիրության արդյունքը մի վերջնական եզրակացության քերելով (էջ 86—89) նշում է, որ Զատիկի հարցը Բ դարից սկսած «Գորդյան հանգույց մը դարձած է» (էջ 86) եկեղեցիների միջև, բայց հույս է հայտնում, որ էկումենիկ մեր ժամանակաշրջանում եկեղեցիների միջև փոխադարձ զիջումներով և իրարհասկացողությամբ, քրիստոնեական ոգով, կարելի կլինի հաղթահարել բոլոր շփոթություններն ու դժվարությունները և կարելի կլինի հասնել դրական և գործնական մի լուծման, «Զատիկը հաստատուն կիրակի մը տոնելու հարց»-ում, «վերջ դնելու համար քրիստոնեական միակ, մեկ Զատիկը երկիցս, առանձինն առանձինն տարբեր կիրակիներ տոնելու անպատեհության» (էջ 89):

Տ. Զգոն եպիսկոպոսի այս ուսումնասիրությունը արժեքավոր մի ներդրում է Զատիկի հարցի շուրջ ցարդ կատարված հայագիտական պրպտումների մեջ:

Ազգոն սահման է, ոճը՝ պատկերավոր և արտահայտիչ: Ավելորդաբանություններ չկան: Համատու է շարադրանքը, բայց կոտ ու ամբողջական:

Ա. Հ.



ԱՐԴՅՈՒՔ ՎԱՐԴԱՆՆ Է ՅԱԾԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ

Այն մեծ նմանությունը, որն ունեն Մոլդավիայի Յաշ և Քիշնև քաղաքների հայկական եկեղեցիների հատակազծային և ծավալա-կառուցվածքային առանձնահատկությունները և այն, որ եկեղեցիների վերակառուցման աշխատանքները կատարվել են համարյա միաժամանակ, այսինքն առաջինը 1803 թվականին¹, իսկ երկրորդը՝ 1804 թվականին, մեզ համար հիմք է հանդիսանում ենթադրելու, որ այդ եկեղեցիների վերակառուցող ճարտարապետը հանդիսացել է մի վարպետ, ըստ մեզ՝ Վարդանը, որի անունը հիշված է Քիշնևի հայկական եկեղեցու 1804 թվականի արձանագրության մեջ: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ Վարդանը եղել է, ըստ արձանագրության, Յաշ քաղաքի բնակիչ, փաստ, որն ավելի հստակեցնում է դարձնում մեր այս ենթադրությունը: Ահա այդ արձանագրությունը (նկար 1ա և 1բ):

Այսպիսով և՛ մեկի, և՛ մյուսի կազմի մեջ մտնում են բուն դահլիճները, որոնց արևելյան մասը վերջանում է մեծ, կիսակլոր խորաններով (ապսիդներով), զանգակատները, նրանց արևմտյան մասում, քառակուսի հատակազծերով հարավային այն զավիթները և նույնանման սեղյակները, հյուսիսային պատերին կից (նկար 2 և 3)²: Հետաքրքրական է այն, որ բացի

կոմպոզիցիոն նմանությունից այս եկեղեցիները կրում են նաև այն առանձնահատկությունները, որ շենքերի մասերը ունեն համարյա նույն մակերեսներն ու կազմերը: Այս տեսակետից հարավային զավիթները կարծես թե չեն տարբերվում մեկը մյուսից: Չնայած որ հյուսիսային սեղյակների մակերեսները տարբեր են, այնուամենայնիվ աչքի են ընկնում նրանով, որ իրենց պատերի մեջ կան նույն քանակությամբ և տեղադրությամբ խորշեր:

Եկեղեցիների այսպիսի մասերի տեղադրումը որոշ չափով բացատրում է նույնանման կառուցվածքային լուծումները: Այսպես օրինակ, հարավային զավիթները ծածկված են խաչաձև թաղերով: Այստեղ անհրաժեշտ է նշել այն, որ թաղերի չորս կողմերի ծանրությունը հավասարաչափ տարածվելու համար անհրաժեշտություն է եղավ զավիթների չորրորդ պատը չկառուցել եկեղեցու հարավային պատին կից՝ սահմանափակելով այն մի բարակ շերտի քարապատումով, որի վրա է հենված այդ թաղերի չորրորդ կողմերը:

Եթե ընդունենք մեր այս ենթադրությունը, որ Յաշի և Քիշնևի հայկական եկեղեցիների վերակառուցման աշխատանքների հեղինակը եղել է Վարդանը, ապա իրավացի կլինենք եզրակացնելու, որ Վարդանը հանդիսացել է Յաշի երևելի վարպետներից մեկը և, հավանաբար, նաև ողջ Մոլդավիայի, ԺՇ դարի վերջի և ԺԺ դարի սկզբի: Սա մեզ տալիս է հիմք ենթադրելու, որ անկասկած այսպիսի շինարար վարպետի գործունեությունը չէր կարող սահմանափակվել միայն այս երկու եկեղեցիների վերակառուցումներով: Ծառ հավանական է, որ Վարդանին պատկա-

¹ Լևոն Պապայան, Հայերը Մոլդավիայում և Բուզովինայում, Թիֆլիս, 1911, էջ 222:

² G. Balș, Bisericile moldovenești din veacurile al XVII-lea și al XVIII-lea, București, 1933, էջ 60; А. Тораманян, Строительные надписи и архитектура армянской церкви в Кишиневе, Кишинев, 1971.

ՀԱՅ ՀԱՄԱԲԱՐՐԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐՐԱՌԸ*

Հայ հին գրականության ինքնուրույն երկերի ամբողջական քարտարանի ծավալը նախատեսվում է 25 միլիոն քարտով: Մշակման ընթացքում գտնվող շուրջ չորս տասնյակ մատենագիրների քարտարանը կազմում է 5 միլիոն քարտ: Առանկալ է՝ մնացած 20 միլիոնը պատկանում է ապագայի հաշվին: Իսկ թարգմանական գրականությունը նախատեսվում է 30 միլիոն քարտով, բայց այդ ուղղությամբ հիմնական աշխատանքները դեռ չեն սկսվել՝ աշխատողների պակասության պատճառով:

Այժմ արդեն գոյություն ունեցող 5 միլիոնանոց քարտարանի հիման վրա կազմվում են ըստ բնույթի երկու տարբեր տեսակի համաքարքառներ, որոնցից մեկն անվանվում է **քերականական**, իսկ մյուսը՝ **բնագրային**: Երկուսն էլ կառուցված են բառային կազմի հիման վրա:

Քերականական համաքարքառում բառային կազմը (քառերն ու կապակցությունները) բերվում է բնագրից կտրված, այսինքն՝ առանց բնագրային զանգվածի, բայց՝ պահելով բնագրի միջավայրում իր ունեցած քերականական կերպարանքը: Այս տիպի համաքարքառը հիմնականում ծառայում է հետազոտելու լեզվի օրինաչափությունները:

Քերականական համաքարքառի առաջին նմուշն արդեն հրատարակվել է 1969 թվականին: Դա Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ի համաքարքառն է՝ Թիֆլիսի 1913 թվականի քննական հրատարակության հիման վրա¹¹⁵:

Այս հատորը թերթելով կարելի է լրիվ գաղափար կազմել քերականական համաքարքառների բնույթի մասին: Այստեղ տվյալները դիտվում են միմիայն քերականական առումով և բառային կազմի հետ կապված լեզվական բոլոր երևույթները ներկայացվում են գիտականորեն համակարգված ձևով:

Բառահոդվածները կազմվում են հետևյալ կերպ: Նախ գրվում է բառը, հետո բերվում են նրա քերականական գործածության տարբեր ձևերը և յուրաքանչյուր ձևի կողքին նշվում է, թե հեղինակի ո՞ր էջում է գործածված դա: Իբրև նմուշ բերենք ա՞ծ բայարմատի հետ կապված ձևերը.

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1971 թ. ԺԱ.—ԺԲ և 1972 թ. Ա.—Բ համարներից:

¹¹⁵ Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիա—Հայկական քարտարան: Հայկական համաքարքառ: Կազմվում է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ս. Ղարիբյանի ընդհանուր ղեկավարությամբ: 7. Մովսիսի Խորենացու «Պատմություն Հայոց», Տիֆլիս, 1913: (Քերականական համաքարքառ): Երևան, 1969: Հրատարակվել է գլխավորով: Լրացուցիչ տեղեկություններ (ըստ ներքին անվանաթերթի). «Կազմվել է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ս. Ղարիբյանի ընդհանուր ղեկավարությամբ: Վերակազմել են՝ Օ. Մ. Խաչատրյան և Բ. Ա. Եզանյան: Վերակազմելում մասնակցել են՝ Հ. Վ. Սարգսյան, Լ. Ա. Ղուլ-դազարյան, Ա. Գ. Բաղդասարյան, Հ. Ա. Հովհաննիսյան, Է. Հ. Դեմիրճյան, Հ. Գ. Արսենյան, Վ. Գ. Գևորգյան: Մասնագիտական կոնսուլտանտներ՝ պրոֆ. Ա. Ա. Աբրահամյան, դոց. Պ. Ս. Բեդիրյան: Վերամշակել և մասնագիտական խմբագրումը կատարել է՝ դոց. Պ. Ս. Բեդիրյան: Բաժնի վարիչ՝ Մ. Ա. Թավադայան: Բազմագնող՝ Ս. Տ. Սարգսյան: Երեւան, 1969»:

Ածեալ—68, 76, 203, 297, 339

ածեալ Աղեքսանդրի—114

նորա ածեալ—331.—ծն. ածել

ածեալ էր—300

ածեալ էր Բարզափրանայ Ռըշտունոյ—300

էր ածեալ—194

ածեալ լինէին—52

ակն ածեալ—321.—ծն. ածելով

գմտա ածեալ—259, 305, 311

Երուանդայ գմտա ածեալ—163

նախարարացն գմտա ածեալ—347

քրմացն... գմտա ածեալ—127

ընդ ինքեան ածեալ—334

ի հաշտութիւն ածեալ—133

Ածեալ ընդ ինքեան—349

Ածել—28, 44, 52, 110, 125, 180, 225, 346

ածելով—186, 268

տուր ածել—156

ակն ածելով—277

գրոսմք ածել—49

գմտա ածելով—272.—ծն. ածեալ

գմտա ... ածելով—362

ընդ իւր ածելով—236, 330

վասն ի բուռն ածելոյ—163.—ծն. առնլոյ, արկանելոյ, առնելոյ

ի ներքս ածել—6, 198

Ածել գմտա—

ոչ ածելով գմտա—272

Ածել ի կատարումն—6

Ածել սուսերա—230

Ածեմ—

ածե—44.—ծն. ածէր, 274.—ծն. ածէր, ածեր, 302.—ծն. ածել, 340

ոչ ածե—305

ածեն—135.—ծն. ածին, 177.—ծն. ածին, 184, 212, 214

ածէր—152

էած—114

ածից—67

ածցէ—169, 228.—ծն. ածէ

գերի ածէ—183

գմտա ածէր—81

գմտան ածէր—221.—ծն. ածեալ, ածէին, գմտա առին

թեկն ածէ—121

ի բաց ածցեն—278

ի մոռացումն ածէր—15

ի ներքս ածէ—198.—ծն. ածցէ

կին ածէ—281

յուղղութիւն ածէ—340

Այստեղ **ած** բայարմատի հետ կապված քերականական բոլոր ձևերն ի մի են ամփոփված՝ համակարգված եղանակով, երևույթների հետազոտության համար տալով լայն հնարավորություններ։ Բայց դրանով չի վերջանում։ Համաբարբառի հորինվածքն այնպիսին է, որ **ած** բայարմատի հետ միացած կապակցություններն իրենց հերթին նույնպես տեղավորված են ընդհանուր բառաշարում՝ ըստ առաջին տառերի կամ բառերի։ Այսպես՝ բառաշարի համապատասխան տեղերում դարձյալ գտնում ենք **Ակն ածեալ, Ակն ածելով, Գերի ածէ, Երուանդայ [գմտաւ ածեալ], Զմտաւ ածեալ, Զմտաւ ածելով, Զմտաւ ածէր, Ընդ ինքեան ածեալ, Ընդ իւր ածելով, Թեկն ածէ, Ի բաց ածցեն, Ի հաշտութիւն ածեալ, Ի ներքս ածել, Ի ներքս ածէ, Յուղղութիւն ածէ, Նախարարացն [գմտաւ ածեալ], Քրմացն [...գմտաւ ածեալ]։** Այսպես նաև Բոռն բառի տակ գտնում ենք՝ **Վասն ի բոռն ածելոյ. Կատարումն բառի տակ՝ Ածել ի կատարումն. Մոռացումն բառի տակ՝ Ի մոռացումն ածէր. Նա բառի տակ՝ Նորա [ածեալ]. Սուեր բառի տակ՝ Ածել սուերաւ. Տամ բառի տակ՝ Տոր ածել։**

Այսպիսի համակողմանիություն կա համաբարբառի հորինվածքում։

Բերենք նաև մի օրինակ դերանունների շարքից՝ ցույց տալու համար համակարգի կառուցվածքի այլ նրբությունները.

Դու—17, 22, 149, 149, 149, 149, 150, 151, 156, 191, 192, 298, 298, 299, 330, 331, 352, 352, 359, 360

դուդ—154.—ծն. **դու**

դուք—287

քո—6, 11, 28.—ծն. **քեզ**, 29, 29, 34, 40, 78, 79, 80, 80, 150.—ծն. **զքո**, 153, 156, 156, 156.—ծն. **քոյ**, 164, 168, 168, 209, 209, 222, 261, 261, 276, 278, 298, 310, 319, 323.—ծն. **ի քէն**, 326, 331, 331, 334, 336, 348, 348, 353, 359

զքո...—6, 30, 87, 274, 324, 334

զկնի քո—6.—ծն. **քոյինքն, քոյ**, 331

ի ձեռս քո—149

ի վերայ քո—5, 34, 298

վասն քո—90, 149.—ծն. **քոյ**, 149, 169, 335

փոխանակ քո—282

ձեր—247, 282, 293, 311, 311, 311, 318, 318, 318, 333, 333, 334, 336, 348

զձեր—203, 248.—ծն. **զձերդ**

ի ձերդ—324

քեզ—5, 6.—ծն. **զքեզ**, 12, 27, 28, 28, 30, 34, 57, 57, 80.—ծն. **քեզ** այժմ, 85, 87, 88, 88, 88, 89, 89, 90, 90, 101, 115, 120, 120, 150, 154, 155, 155, 155, 156, 158, 176, 176, 178, 198, 212, 214, 214, 219, 221, 222, 227, 234, 248, 257, 261, 278, 283, 299, 310, 318, 336, 347, 347.—ծն. **զքեզ**, 358.—ծն. **զքեզ**

առ քեզ—149, 150, 185, 209, 311

զառ քեզ...—27

զքեզ—5, 6, 149, 149, 192, 198, 203, 222, 274, 276, 282, 294, 305, 305, 310, 319, 319, 331, 331, 334, 335, 351, 353, 358, 358, 359

ընդ քեզ—150, 192, 222, 229, 289, 318

ի քեզ—5, 12, 299

մինչև ցքեզ—87, 278
 բան գքեզ—6.—ծն. զմեզ
 ձեզ—25, 247, 261, 261, 261, 311, 311.—ծն. ձիր 335
 առ ձեզ—293, 324
 զձեզ—156, 247, 261, 288, 290, 293, 319, 346
 ընդ ձեզ—278, 293
 ի ձեզ—156, 203, 311, 318, 336
 ի քեզ—12, 29, 30, 102, 140, 276, 283, 336
 առ ի քեզ—335
 գքեզ—149, 294
 ի ձեզ—77, 248, 248, 287, 288, 311.—ծն. մեզ, 348
 ձեռք—76

Քերականական համադասարանը ընդգրկում է խոսքի բոլոր մասերը՝ ամենայն մանրամասնությամբ, նույնիսկ, ինչպես կարելի էր տեսնել վերևում բերված օրինակներից, այնպիսի մանրութներ, ինչպիսին նախդիրներն են՝ իրենց հոլովական գործածություններով։ Ուշագրավ է, օրինակ, ի (կամ չ) նախդրի գործածության հետևյալ պատկերը¹¹⁶։

ի՝ տրականի հետ—336 անգամ
 չ՝ տրականի հետ—192 անգամ
 ի չ՝ տրականի հետ—1 անգամ
 ի՝ հայցականի հետ—1038 անգամ
 ի՝ ուղղականաձև հայցականի հետ—3 անգամ
 չ՝ հայցականի հետ—575 անգամ
 առ ի՝ հայցականի հետ—17 անգամ
 առ ի չ՝ հայցականի հետ—1 անգամ
 ի չ՝ հայցականի հետ—6 անգամ
 հույ ի՝ հայցականի հետ—3 անգամ
 հույ չ՝ հայցականի հետ—2 անգամ
 մերձ ի՝ հայցականի հետ—6 անգամ
 մերձ ի չ՝ հայցականի հետ—1 անգամ
 մինչև ի՝ հայցականի հետ—17 անգամ
 մինչև ի չ՝ հայցականի հետ—1 անգամ
 մինչև չ՝ հայցականի հետ—4 անգամ
 մինչ ի՝ հայցականի հետ—2 անգամ
 մօտ չ՝ հայցականի հետ—1 անգամ
 ի՝ բացառականի հետ—931 անգամ
 չ՝ բացառականի հետ—302 անգամ
 առ ի՝ բացառականի հետ—7 անգամ
 առ ի չ՝ բացառականի հետ—2 անգամ
 բայց ի՝ բացառականի հետ—6 անգամ
 բայց չ՝ բացառականի հետ—4 անգամ
 ի չ՝ բացառականի հետ—12 անգամ
 զառ ի՝ բացառականի հետ—2 անգամ

¹¹⁶ Մենք պատկերը տալիս ենք համընդհանուր թվերով, բայց համադասարանում այդ թվերի տեղ ճշված են նույնքան էջեր։ Օրինակ՝ առաջին տողում տրական հոլովի հետ ի նախդրի գործածությունը ցույց տալու համար համադասարանը իրար կտևից նշում է 336 էջեր։

որպես զան ի ՚ բացառականի հետ—2 անգամ

քան զան ի ՚ բացառականի հետ—1 անգամ

Այս թվից դուրս բառաշարում կան դարձյալ ի (կամ յ) նախորդով կազմըված բազմաթիվ կապակցություններ (մակբայներ, նախադրություններ, դարձվածքներ), որոնք այբբենական կարգով նույնպես դասավորված են ընդհանուր բառաշարում: Այդպիսիներից ընտրողաբար նշենք՝ **ի բաց ածեն**, **ի բաց դառնամ**, **ի բացեալ**, **ի բուռն ածել**, **ի գաղտնիս**, **ի գերութիւն վարեն**, **ի գինիս պարծիմ**, **ի գինոջ գեղխեալ**, **ի գործ արկեալ**, **ի դէպ** («ոչ է ի դէպ»), **ի դէպ ելանեն**, **ի դիմի հարկանել**, **ի դուրս**, **ի թիկունս հասանեն**, **ի թոխս**, **ի լայն**, **ի լուղ**, **ի լրոյ**, **ի խնդիր են**, **ի ծածուկ**, **ի կամաց**, **ի կամս թողեալ**, **ի կատարումն աւարտեն**, **ի հասակ հասեալ**, **ի հաւանութիւն եկեալ**, **ի հետի**, **ի ձեռաց**, **ի ձեռն** (նախադր.) **ի ձեռն տալ**, **ի ձեռս անկեալ**, **ի ճահ**, **ի մէջ** (նախադր.), **ի մէջ արկանեն**, **ի միասին**, **ի միջի** (մկր.), **ի միջի** (նախադր.), **ի միջոյ** (մկր.), **ի միջոյ** (նախադր.), **ի միջոց**, **ի միջոցի**, **ի միտ առնում**, **ի մոռացումն գամ**, **ի մտի դնեն**, **ի մօտ հասանել**, **ի մօտոյ**, **ի լանգ ելեալ**, **ի ներքոյ** (մկր.), **ի ներքոյ** (նախադր.), **ի ներքուստ**, **ի ներքս**, **ի նքնին**, **ի չափ հասեալ**, **ի չու անկեալ**, **ի չքմեղս եղեալ**, **ի պատճառս**, **ի պատշաճէն**, **ի պէտս**, **ի սկզբանէ**, **ի սուր հանել**, **ի սպառ**, **ի վաղնջոց**, **ի վայր**, **ի վերայ** (մկր.), **ի վերայ** (նախադր.), **ի վերոյ**, **ի վերուստ**, **ի տարապարտոց**, **ի տեղի**, **ի քթել ական**, **Յաղագս**, **Յաղերս անկեալ**, **Յայնժամ**, **Յայնմ հետէ**, **Յայն սակս**, **Յանխնայ**, **Յանկագոյն**, **Յանկարծ**, **Յանձին ունիմ**, **Յանձն առնում**, **Յանուն**, **Յապուշ դառնամ** և ուրիշ շատեր:

Այս համաբարբառով պարզվում է, որ Խորենացու «Պատմութիւն Հայոց» գրքում օգտագործված բառերի ընդհանուր քանակը 70.043 է, իսկ բառարանային բառերի քանակը՝ 4.539: Բառային այս կազմի հետ միասին պարզվում են նաև Խորենացու երկի պարունակած լեզվական բոլոր երևույթները: Կատարված աշխատանքը, որը վեր է ամեն ակնկալությունից, ներկայացնում է լեզվաբանության ժամանակակից պահանջներին համապատասխանող մակարդակ, աչքի է ընկնում գիտականորեն կառուցված և խստորեն կիրառված սկզբունքներով: Քերականական այս համաբարբառի մասին մասնագետները կարող են խոսել միայն անվերապահ գնահատանքով: Որոշ դիտողություններ կարող են արվել, բայց նրանք կունենան մասնակի բնույթ:

Ինչպես ասվեց արդեն՝ Խորենացու այս համաբարբառն առաջին նմուշն է հայ հին մատենագրության քերականական տիպի համաբարբառների, որոնք ներկայումս պատրաստության ընթացքում են: Շուտով լույս կտեսնեն նաև մի քանի ուրիշ մատենագիրների քերականական համաբարբառները:

Քերականական համաբարբառը, իբրև համաբարբառի տեսակ, աննախընթաց երևույթ է հայ համաբարբառային գրականության մեջ: Դա, կառուցվածքի արմատապես քերականական բնույթով, ի մի է բերում այն ճշգրիտ տվյալները, որոնք փաստական հիմք են հանդիսանում գրաբարի քերականական հետազոտության համար: Քերականական համաբարբառը կբացահայտի թե՛ բառի գործածման ձևերի ընդհանրությունները հայ միջնադարյան ամբողջ մատենագրության մեջ և թե՛ նրա շեղումները՝ ըստ հեղինակային նախաաիրությունների: Միևնույն բառի քերականական ձևերի համեմատական ուսումնասիրությունը, որը կկատարվի տարբեր հեղինակների երկերի համաբարբառների օգնությամբ, կդրսևորի ու կճշտի ձևի գործածության կանոնավորությունը կամ շեղումները, վրիպումները, սխալները և այլն. ցույց կտա

ձևերի զարգացման կամ անկման ուղին, նրանց փոխանցումները, հաջորդումները և այլն. ի հայտ կբերի նաև բարբառային թափանցումները գրաբարի մեջ, հազվագյուտ ձևերի գործածության շրջապատը և պատճառաբանումները, գրաբարի որոշ ձևերի մահացման ընթացքը, նոր ձևերի երևան գալու ժամանակը և պատճառները, մի խոսքով՝ հայերենի պատմական քերականության հիմնավորումներն ու փաստերը:

Քերականական համաբարբառը հիմնականում ծառայելով հայերեն լեզվի օրինաչափությունների ուսումնասիրմանը, միաժամանակ որոշ չափով կօգնի նաև աղբյուրագիտությանը՝ քերականական ձևերի համեմատությամբ ցույց տալով այս կամ այն երկի կամ հեղինակի լեզվական աղերսը մի ուրիշի հետ:

Ակադեմիայում պատրաստվող համաբարբառների մյուս տեսակը բնագրայինն է: Այս տիպի համաբարբառում բառը բերվում է ոչ թե բնագրից կտրված վիճակում, ինչպես է քերականական համաբարբառում, այլ քերականորեն և իմաստային առումով անհրաժեշտ կապակցությունների հետ միասին: Այս հանգամանքն արդեն, ինչպես գիտենք, եղել է բառարանային եղանակով կառուցված հայերեն համաբարբառների հիմնական բնույթը՝ սկսած ԺԸ դարից (Անանիա Այլահվերդյան, Բաղդասար Կ. Պոլսեցի, Հակոբ Նալյան և այլն):

Համաբարբառային քարտարանի բաժինը, որպես բնագրային համաբարբառի մոտ, ծանոթացման համար մեզ տրամադրեց Եզնիկ Կողբացու անտիպ համաբարբառը, որի վրա այժմ խմբագրական վերջին աշխատանքներն են կատարվում: Այդ համաբարբառն ընդգրկում է Եզնիկի հայտնի «Եղծ աղանդոց»-ը և նրան վերագրված «Խրատը»-ը՝ վեներիկյան 1826 թվականի հրատարակության հիման վրա¹¹⁷:

Մեթոդական առումով՝ հայերեն բնագրային համաբարբառների միջև եղած տարբերակումների մասին մենք բավարար մանրամասնություններով խոսեցինք՝ սուրբգրական համաբարբառները նկարագրելիս: Այժմ ասենք, որ դրանց շարքում ամենից ավելի Թադեոս վ. Աստվածատուրյանի համաբարբառն է, որ կառուցվածքով մեզն է Եզնիկի այս բնագրային համաբարբառին՝ շատ հեռու լինելով, ի հարկե, վերջինիս կատարելությունից:

Ամենագլխավորն այն է, որ Եզնիկի այս համաբարբառում, որը տիպար մոտ է Ակադեմիայում պատրաստվող բնագրային համաբարբառների, ըսկըզբունքով ոչ մի բառ դուրս չի մնացել. ընդգրկված են Եզնիկի բոլոր բառերը: Բավական է նշել, որ ընդհանուր բառաշարում նույնիսկ չ և ոչ ժխտական մասնիկները, որպես առանձին բառեր, ունեն իրենց սեփական տեղերը. նրանցից առաջինի տակ բերված է 272 վկայություն («Քանզի չգոյր ուրեք տեղի ամփոփելոյ», «Բայց արուեստն չէ՝ եթե ոչ նախ մարդն իցէ» և այլն), իսկ երկրորդի տակ՝ 832 («Փրկութիւն ինչ ոչ գործեցաւ», «Որ ոչ բարոյ գործ է՝ այլ սպիրատի» և այլն): Սա՝ համաբարբառի լիակատարության ու լիարժեքության անառարկելի ապացույցներից է:

Գիտական օգտագործման համար սույն համաբարբառի առավելություններից է նաև այն, որ, ի տարբերություն Թ. վ. Աստվածատուրյանի համաբարբառի և նրան նախորդող հայկական բնագրային բոլոր համաբարբառնե-

¹¹⁷ Եզնիկին վերագրվող խրատները տպագրված են «Եղծ աղանդոց»-ի վերջում:

րի, այստեղ բառը բերվում է ոչ թե կցկտուր և սահմանափակ կապակցություններով, այլ բնագրային իր լայն շրջապատով:

Որպես նմուշ բերենք **Ածել** բառը, որը նպատակահարմար է նաև համաբարբառների բնագրային և քերականական տեսակների տարբերությունները տեսանելի դարձնելու առումով, քանի որ վերևում խորենացու քերականական համաբարբառի նկարագրության մեջ ևս որպես նմուշ բերել ենք նույն բառի հետ կապված ձևերը: Տողերի սկզբին դրված թվանշանները ցույց են տալիս օգտագործված հրատարակության էջերը:

ԱԾԵԼ

7 Որ բաականն է ... յիրոց արարածոցն ի հաստումն ըստ իրաքանչիւր բնութեանց **ածել**

7 Զի **ածն** ի չգոյէ ի գոյ զչգոյսն

24 Յորժամ գնա ի զարդ և ի յարդ և ի կերպարանս **ածէր**

24 Մի՛ թէ և զի՛նքն ընդ հիւղին ի զարդս ի յարդս և ի կերպարանս **ածէր**

29 Եւ Աստուած **ած** գնա ի զարդ և ի կերպարանս և յարգասիս

31 Այնու տկարութիւն **ածեն** զԱստուծով

32 Զի ազգի ազգի գործուածք իրացն յայսպիսի քննութիւնս **ածեն** զմեզ

36 Եւ պատիծս պատուհասից ի վերայ գործելեացն **ածէ**

37 Պատուհաս ի վերայ **ածեալ** վասն յանդգնութեանն

57 Ապա եթէ զմարտուոյցն զմտաւ ոչ **ածիցեն** ... կործանին

59 Ոչ պարտի ... իշխանն պատիծս ի վերայ չարագործին **ածել**

62 Յորժամ զխիստ ոք իշխան կամիցի ի քաղցրութիւն **ածել**

62 Կարէ ... խոնարհեցուցանել **ածել** յիրան և յարժան

68 Մինչև **ածեալ** զնորարարսն առ նորաստեղծն՝ նմա նոցա անուանս հրամայէր դնել

69 Եւ միւսն ... **ածէ** ի համբոյր և ի քծինս

69 Յընտելութիւն մարդկան **ածեն**

83 Այլ չարիք մարդկան **ածեն** զԱստուած այնպիսի տանջանօք խրատել զմարդիկ՝

83 Այլոց սակաւոց տանջանօք՝ **ածէ** յերկիւղ և ի խրատ զբազումս

94 Զի յառաջագոյն կրթեցէ զմարդիկ **ածել** ի գիտութիւն

94 Ի մարդկեղէն բարբառ **ածեալ**, տայր ընդ նախընծայացելոյ առն Աստուծոյ ընդ Մովսէսի խօսել

96 Անդէն զնովիմբ **ածեալ** ասէ՝ թէ այլ փառք արեգական են

113 Սկսաւ **ածել** զմտաւ

148 Եւ զխնամն եւս Աստուծոյ զմտաւ **ածել**

162 Որք զպատուհասն ի վերայ **ածելով** յայտ առնեն

164 Այլ անարժան խառնիցն ազգին յանդգնութիւնն **ած** գնա յայն

164 Կամեցաւ **ածել** ջրհեղեղ

166 Զի **ածի** ի պատիւ զանարժանն

167 Զոր **ած** բազում երկայնմտութեամբ ի վերայ ամանոցն կազմելոց ի կորուստ

167 Այնու զի զվերջին հարուածսն յառաջնումն ոչ **ած** ի վերայ նորա

169 Նոցա ամպարշտութիւնն **ած** գնա յայն՝ որ ոչն կամէր

178 Է ինչ՝ զոր ցերեկ ընդ բերան **ածիցէ** մարդն

- 178 Եւ է ինչ՝ գոր բնաւ չիցէ ածեալ զմտաւ
 178 Եւ ածեալ կերպարանս կերպարանս ստաշի նկարէ
 187 Զիս՝րդ զարեւն ատուր ատուր ի նոյն արեւելս ածիցեն
 224 Եւ ի կերպարանս եւեթ կարաց ածել զհիւղն
 224 Եւ ոչ ի չգոյէ ի գոյ ածել զհասակս ամենայնի
 227 Ոչ ինքեանք զիմանալի ինչ զմտաւ կարացին ածել
 238 Յիւր գիտութիւն ածել կամեցաւ
 238 Վասն պնդողիկ առ յայտնելոյ զկամսն և զխորհուրդս՝ ած յայտ զա-
 րարածս
 239 Եւ ոչ ի չգոյէ ի գոյ ածել զհասակս ամենայնի
 254 Ընդ վայրս զբանսն ածէ
 262 Վասն որոյ ածէ զնորին զկնի, թէ յառիշտակեցաւ պնդիսին ի
 դրախտն
 285 Եւ զնովիմք ածեալ զպատճառսն
 295 Որպէս և ածէ իսկ զնովիմք
 305 Եւ ած զմտաւ զօրն դատաստանին
 308 Զմտաւ ած զօր դատաստանին

Ինչպէս քերականական համաբարբառում, այստեղ ևս կա բառաձևերի դասավորման համակողմանիություն: Ածել բառի վերաբերյալ շարքից դուրս, և նրանից հետո, առանձին-առանձին նորից են տեղավորված Ածել զմտաւ, Ածել ի համբոյր, Ածել յերկիւղ եւ ի խրատ հարադրությունները, որոնք գտնու-
 վում են նաև Զմտաւ ածել, Համբոյր և Երկիւղ բառերի տակ:

Մենք այստեղ ևս, ինչպէս քերականական համաբարբառում, իբրև նմուշ քերութ ենք Դու անձնական դերանունը, որպէսզի ավելի պարզ երևա համա-
 բարբառի երկու տեսակների հօրինվածքի տարբերությունը.

ԴՈՒ

- 15 Զի քեզ զյարութեան օրինակն նկարիցէ
 15 Որում եւ զքեզ իսկ երկրորդ արարիչ կազմեաց յօրինիչն
 54 Եթէ ոչ էր անարար, ասեն, ըստ ձեզ սատանայ
 60 Բայց աղէ՝ դու զկարին իսկ զոր շռայլեալ ցանկութեամբ՝ պրկեա
 62 Զկարէ յայտ երթալ ասել՝ թէ դու խիստ ես
 62 Քաղցրախառն բանիւք մատուցեալ ողորէ՝ թէ դու, Տէր, քաղցր
 ես... ամենեքին գոհ են զքէն
 72 Ասաց ...ցայրն՝ թէ աշխատութեամբ եւ քրտամբք երեսաց քոց կե-
 րիցես զհաց քո, մինչեւ լիցի քեզ դարձ անդրէն յերկիր
 76 Եւ զձեզ անմահս արարի
 76 Դուք իբրեւ զմարդիկ մեռանիք
 76 Եւ ոչ ընդ ձեր մահ կամէի
 78 Եւ տագնապեալ աղաղակէր, թէ գիտեմ զքեզ ով ես սուրբդ Աստու-
 ծոյ
 80 Թողեալ լիցին քեզ մեղք քո
 89 Տէրն ասաց ցիր աշակերտսն՝ եթէ անա ետու ձեզ իշխանութիւն
 93 Աստուած քո հոր ծախիչ է
 103 Դու ջախջախեցեր զգլուխ վիշապացն ի վերայ շուրց
 114 Դու խաւարին եւ ժանդարմոս ես
 114 Ո՞վ ես դու

- 114 Ես եմ որդին **քո**
 115 Ես վասն **քո** լաշտ առնի, լալսմ հետե **դու** վասն իմ առնիցես
 115 Տուեալ լիցի **քեզ** թագաւորութիւնն... եւ զՈրմիզդ ի վերայ **քո** ար-
 քայ կացուցեալ
 129 Ցայժմ ես վասն **քո** լաշտ առնի, լալսմ հետե **դու** վասն իմ առնիցես
 129 Չասաց սա՛ թէ **դու** ինձ լաշտ առնիցես
 136 **Դու** խաւարին եւ ժանդաճոտ ես
 136 Ձմմանէ յուրաստ էր՝ թէ չես **դու** իմ որդի
 152 Սաստեցէ **ի քեզ** Տէր, սատանայ
 152 Զի՞ կայ մեր եւ **քո**, ասէ, որդի Աստուծոյ
 168 **Դու** ո՛վ ես, ո՛վ մարդ
 168 **Դու** ո՛վ էիր
 168 Որում կամիք՝ ընծայեցուցանէք զանձինս **ձեր** ի հնազանդութիւն
 170 ծանեալ **զքեզ**
 170 Սրբեցի **զքեզ**, եւ մարգարէ ազգաց ետու **զքեզ**
 173 Ես տնկեցի **զքեզ** որթ վայելուչ
 181 Ասէ՛ թէ բազում անգամ կամեցայ գալ առ **ձեզ**
 181 Խնորեաց սատանայ խարբալել **զքեզ** իբրեւ ցորեան
 182 Առաքեալ ասէ՛ թէ հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկցէ **զձեզ** ի
 փորձութիւն՝ առաւել քան զկար **ձեր**
 185 **Դու** ես որդին Աստուծոյ
 229 Յիշեա՛ զեկեղեցի **քո**
 245 Բայց լինէն այլ աստուած **քեզ** մի՛ լիցի
 247 Մինչ զի տեսանիցէ **զքեզ** Տէրն արարածոց ... եւ հանիցէ **զքեզ** ի
 խաչ
 247 Բացցէ դժոխականն զքերանն իւր՝ ընդունել **զքեզ**
 248 Դատաստան կայ իմ ընդ **քեզ**, եւ մի՛ ոք լիցի դատաւոր ի միշի
 մերում, այլ **քո** իսկ օրէնքն
 248 Ո՞չ **դու** գրեցեր յօրէնդ քում
 249 Արդ տուր **զքեզ** ի ձեռս իմ՝ զի սպանից եւ հեղից զարին **քո**, որպէս
 սպաներն **դու** զիս ... զի արդար եմ իրաւամբք քան **զքեզ**
 249 Աղաչէր գնա թէ փոխանակ զի մեղայ եւ սպանի **զքեզ** յանգէտու...
 մարդ համարէի **զքեզ**, տուեալ **քեզ** ընդ այնր վրիժուց՝ զամենեւեան որ կա-
 միցին հաւատալ ի **քեզ**՝ տանել յո՛ւ և կամիցիս
 257 Զի՞ խորհելո՞ զիս **քեզ** կամիս միայն, որ **դու** միայն իցես աստուած
 270 Նա է Տէր աշխարհի, եւ ոչ գորմէ **դուքն** կարծեցէք՝ որ չէր իսկ
 273 Որպէս եւ **դուք** իսկ ձեզէն վկայեցէք
 273 Եթէ **դուք** ո՞չ գիտիցէք յԱռաքելոյ՝ զի Քրիստոս խաւիանէ զիշխանու-
 թիւնս
 273 Եւ ոչ այն՝ գորմէ **դուքն** ասէք
 276 Հատուցիր Տեառն զերդմունս **քո**
 277 Անդ ասէ, սիրեցես զընկեր **քո** իբրեւ զանձն **քո**
 277 Աստ ասէ, սիրեցես զՏէր Աստուած **քո** յամենայն սրտէ **քումմէ**, եւ
 սիրեցես զընկեր **քո** իբրեւ զանձն **քո**
 278 Հատուցիր Տեառն զերդմունս **քո**
 279 Եղիցի **ձեր** այոն այո, եւ ոչն ոչ
 280 Ասէր ցաշակերտսն՝ թէ ցանկանալով ցանկացայ ուտել զգատիկս
 զայս ընդ **ձեզ**

- 283 Ետու ուտել **ձեզ** զանասունս եւ զթռչունս
 283 Եւ առաքեալքն ի թղթին՝ ... զնոյն հաստատեցին՝ թէ պահել **ձեզ**
 յարեմէ
 284 Յորժամ կոչիցէ որ **զձեզ** յանհաւատից եւ երթայցէք, զամենայն ինչ
 զոր դնիցեն առաջի **ձեր**, կերիշիք
 286 Ոչ պարտի անգոսնել **զքեզ** իբրեւ զտկար
 286 Իսկ **ձեր** ուխտաւորքն, ասեն, ընդէ՞ր եմ մասնատր
 293 **Դուք**, ասէ, ասէք՝ թէ մարմինք ... ոչ յառնեն
 295 **Դուք** ոչ էք մարմնով
 299 Զսէր եւ զերկիւղ բնութիւն արա **քեզ**
 300 Որչափ զրկիս եւ աշխատիս ... անապական զանձ պատրաստես
քեզ յերկինս
 300 Զոր ինչ Աստուած **քեզ** շնորհ տայ, ի պէտս կարօտելոցն սպասա-
 տրեալ. զի ... **դու** փառաւորեսցիս
 302 Մանկագոյն կրօնատրի մի՛ ասեր զծածուկսն **քո**
 304 Թէ թշնամոյն չաղօթես որպէս **քեզ**, ապա լաւ է չաղօթել
 305 Բեւեռնեա **զքեզ** ընդ երկիւղն Աստուծոյ
 305 Եթէ խնդրէ որ **ի քէն** եւ տաս, գոհացիր զԱստուծոյ՝ զի **դու** առաւել
 շահեցար քան զնա
 306 Զհաց աւորն քրտամբք հրամայեաց **քեզ** ուտել, եւ **դու** զկեանսն
 յաւիտենից բնով կամիս ժառանգել
 306 **Դու** զհազարամեայ օրն առանց ցաւոց կամիս ժառանգել
 306 Ուտ՝ եւ զսիրտ **քո՝** սիրել զեղբայրն
 306 Այնպէս սիրես զմարմին **քո**, որպէս զնեզատր եղբայր
 307 Յորժամ աղօթես ... զխորհուրդդ **ի քեզ** հաւաքես
 307 Յորժամ առաքէ **քեզ** Աստուած փափուկ կերակուր ... զՔրիստոսի
 մասն կարօտեալ եղբօրն տուր նախ քան **զքո** ճաշակելն, զի Քրիստոս **քեզ**
 սեղանակից լինի
 307 Յորժամ նստիս ի սեղանն ... մի՛ այլ ինչ տեսաներ, քաց միայն
զքեզ
 308 Հանդերձ **քո** մի՛ լիցի առ ի պննել
 308 Եթէ առնեն **քեզ** սէր, գոհացիր զԱստուծոյ
 308 Այլ նեղեա՛ **զքեզ** սակաւ մի լրութեամբ
 311 Եթէ թերի ես յառաջնորդն, մի՛ կար ընդ նմա. զի կորուսանես
 զոգիդ **քո**
 313 Եթէ ամենայն եղբարցն հիւանդութիւնն **քեզ** ոչ ցաւէ, մի՛ լինիր
 առաջնորդ

Բերված նմուշները բավական են ցույց տալու համար Եզնիկի այս հա-
 մաբարբառի կառուցվածքն ու էությունը։ Բայց քանի դեռ չի ավարտվել հա-
 մաբարբառի խմբագրումը, դժվար է ասել, թե ո՞րքան է Եզնիկի օգտագործած
 բառերի ընդհանուր քանակը։ Բաժնի աշխատակիցների գնահատմամբ այդ
 թիվը կլինի մոտավորապես 40.000, իսկ բառարանային բառերինը՝ մոտա-
 վորապես 3.500։

Եզնիկի այս համաբարբառով կարելի է լրիվ գաղափար կազմել Ակա-
 դեմիայում պատրաստվող բնագրային համաբարբառների մակարդակի և
 տեսակարար կշռի մասին։ Դրանք այս ստումով համեմատելի չեն անցյալում
 մեզ մոտ հրապարակ եկած նմանօրինակ համաբարբառների հետ։

Հայագիտական աշխատանքներում բնագրային համաբարբառի ծառայության շրջանակն ավելի մեծ է, քան քերականականին՝ եթե նույնիսկ միայն լեզվական առումով մոտենանք նրա գնահատմանը, որովհետև քերականական համաբարբառը, լեզվական երևույթների հաստատումն ու համադրումը կատարելուց հետո, բառի կամ բառաձևերի իմաստն ու նշանակությունը նշգրտորեն սահմանելու համար կարիք ունի դիմելու նաև բառի գործածության միջավայրին՝ բուն բնագրին, մինչդեռ բնագրային համաբարբառը տալիս է բուն բնագիրը և մեծ մասամբ անմիջականորեն լուծում հարցերը: Սրինակ՝ նա կարող է տեղնուտեղը կողմնորոշել հետազոտողին, թե այս կամ այն բայի խնդրառությունը կամ թե այս կամ այն նախադրությունը ի՞նչ հոլով է պահանջում և ո՞ր դեպքերում, և այլն: Բայց բնագրային համաբարբառի նշանակությունը հատկապես մեծ է պատմա-բանասիրական և մատենագրական հետազոտությունների ասպարեզում, որովհետև բառի հետ քերած բնագրական վկայություններով նա բազմակողմանի հնարավորություններ է տալիս տեսնելու տարբեր հեղինակների կամ տարբեր երկերի բնագրային առնչակցությունները, պարզելու, թե ո՞ր մեկից է ծագումը նրանց միջև եղած պատմական կամ այլ կարգի ընդհանրությունների, ցույց տալու, թե նրանցից որո՞նք են աղբյուր հանդիսացողները շարադրանքի, գրական ոճի և արտահայտական ձևերի ընդհանուր նմանությունների կամ նույնությունների համար և որո՞նք են կախման մեջ եղողները, և այլն: Մի խոսքով՝ բնագրային համաբարբառն աղբյուրագիտական հարցերի լուծման համար կհանդիսանա անգերազանցելի բանալի: Միաժամանակ բառային պաշարի և բնագրական վկայությունների միջոցով նա կհայտնի, թե հայ մատենագրության զանազան ուղիներում ինչպիսի՞նչ նյութեր կան գիտությունների պատմության համար:

Ինչպես ասվեց՝ Ակադեմիայի քարտարանային բաժնում ներկայումս մշակման ընթացքի մեջ են գտնվում շուրջ 40 հայ մատենագիրների գործեր: Դրանցից մի քանիսն արդեն գրեթե պատրաստ են տպագրության համար: Քարտարանների մշակումը գնում է միաժամանակ երկու ուղղությամբ, այնպես որ ամեն մի երկ կունենա երկու տեսակի համաբարբառ՝ թե՛ քերականական և թե՛ բնագրային, ըստ օրինակի այն նմուշների, որ ներկայացրինք վերևում: Ըստ այսմ՝ Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը կունենա նաև բնագրային համաբարբառ, իսկ Եզնիկի «Եղծ աղանդոց»-ը (և «Խրատք»-ը)՝ նաև քերականական համաբարբառ:

Խորենացուց և Եզնիկից հետո հերթականորեն գալիս են հետևյալ հեղինակները: Փակագծերում նշում ենք այն հրատարակությունները, որոնք հիմք են ընդունվել քարտարանների համար:

Ագաթանգեղոս («Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», հրատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանցի, Թիֆլիս, 1909):

Փավստոս Բուզանդ («Փավստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց», հրատ. Բ. Պատկանյանի, Պետերբուրգ, 1883):

Կորյուն («Կորին. Վարք Մաշտոցի», հրատ. և աշխ. թարգմ. Մ. Աբելյանի, Երևան, 1941):

Եղիշե («Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», հրատ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957):

Ղազար Փարպեցի («Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան», հրատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մախասյանի, Թիֆլիս, 1904):

Հովհաննես Մամիկոնյան: Քարտարանում այս անվան տակ ընդգրկված ու միաձուլված են, հետևողությամբ Մ. Աբեղյանի և Աշ. Աբրահամյանի եզրակացությունների, նախկինում «Պատմություն Տարօնոյ» երկի երկու մասերի որպէս տարբեր հեղինակներ համարված Զենոբ Գլակը և Հովհան Մամիկոնյանը («Յովհան Մամիկոնեան. Պատմություն Տարօնոյ», հրատ. Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941):

Անանուն «Աշխարհացոյց», է դար (Ակադ. Ս. Տ. Երեմյանի կազմած բնագիրը, անտիպ)¹¹⁸:

Սեբեոս («Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն», հրատ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1939):

Մովսէս Կաղանկատվացի («Մովսէսի Կաղանկատուացոյ Պատմություն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912):

Հովհաննես Օճնցի. 1. «Ատենաբանություն». 2. «Կանոնք». 3. «Ընդդէմ Պատրիկեանց». 4. «Ընդդէմ երեսութեանաց». 5. «Յաղագս կարգաց եկեղեցոյ». 6. «[Դարձեալ] Յաղագս կարգաց եկեղեցոյ». 7. «Վասն մեծի ատուր միաշաբաթին». 8. «Սակս գիշերային ժամու». 9. «Յիշատակարան» («Յովհաննես իմաստասիրի Աճնցոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833):

Ղևոնդ Երեց Պատմագիր («Պատմություն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», հրատ. Կ. Եզանցի, Պետերբուրգ, 1887):

Շապուհ Բագրատունի («Պատմություն Շապուհ Բագրատունոյ», հրատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Մեսր. եպս. Տեր-Մովսիսյանի, Էջմիածին, 1921):

Հովհաննես Դրասխանակերտցի («Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1912):

Թովմա Արծրունի («Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմություն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917):

Գրիգոր Նարեկացի. «Նարեկ» և տաղեր («Նարեկ. Մատենան ողբերգութեան», հրատ. և աշխ. թարգմ. Գարեգին եպս. Տրապիզոնցոյ, Բուենոս Այրես, 1948:—«Գրիգոր Նարեկացի. Տաղեր», հրատ. և աշխ. թարգմ. Արշակի Մխիթարյանի, Երևան, 1957):

Ստեփանոս Ասողիկ («Ստեփանոսի Տարօնցոյ Ասողկան Պատմություն տիեզերական», հրատ. Ստ. Մալխասյանցի, Պետերբուրգ, 1885):

Ուխտանէս. 1. «Պատմություն հայրապետաց եւ թագաւորաց Հայոց». 2. «Պատմություն բաժանման Վրաց ի Հայոց» («Ուխտանէս եպիսկոպոս», հտ. Ա.—Բ, Վաղարշապատ, 1871):

Արիստակէս Լաստիվերտցի («Պատմություն Արիստակիսի Լաստիվերտցոյ», հրատ. Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963):

Ներսէս Շնորհալի, չափածո երկեր («Տեառն Ներսէսի Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի բանք չափաւ», Վենետիկ, 1830):

Մատթէոս Ուռհայեցի («Մատթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898):

Սամուէլ Անցի («Սամուէլի քահանայի Անցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...», հրատ. Արշակ Տեր-Միքէլյանի, Վաղարշապատ, 1893):

¹¹⁸ Անտիպ բնագիր օգտագործելը նպատակամարմար չէ՝ համարաբար համար: Լավ կլիներ ընտրել Հ. Ա. Սուքրյանի կատարած հրատարակությունը՝ «Աշխարհացոյց Մովսէսի Կաղանկատուացոյ, յանդիմանով ճախնեաց», Վենետիկ, 1881: Եվ կամ պետք է սպասել մինչև որ հրատարակվի ակադ. Երեմյանի պատրաստած բնագիրը:

Մխիթար Հերացի («Մխիթարայ բժշկապետի Հերացույ Ջերմանց մխիթարութիւն», Վենետիկ, 1832):

Մխիթար Գոշ («Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց», հրատ. Վահան վրդ. Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880):

Մխիթար Անեցի («Մխիթարայ Անեցույ Պատմութիւն», հրատ. Բ. Պատկանյանի, Պետերբուրգ, 1879):

Վարդան Արևելցի, որի պատմական հայտնի երկը վայրապար վերագրվել է Վարդան Բարձրբերդեցուն («Մեծին Վարդանայ Բարձրբերդեցույ Պատմութիւն տիեզերական», հրատ. Մկ. Էմինի, Մոսկվա, 1861):

Կիրակոս Գանձակեցի («Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց», հրատ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961):

Սմբատ Սպարապետ. 1. «Պատմութիւն». 2. «Դատաստանագիրք» («Սմբատայ Սպարապետի եղբոր Հեթումյ Առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս եւ Հայոց Մեծաց ըստ կարգի ժամանակաց», Մոսկվա, 1856:—Դատաստանագրքի հայերեն բնագիրը՝ ռուսերեն հեղինակը հրատարակության մեջ. «Смбат Спарамет. Судебник. Составление текста, перевод с древнеарм., предисловие и примечания А. Г. Галстяна», Ереван, 1958).

Մաղաքիա Աբեղա կամ **Վարդան Պատմիչ Թաթարաց**: Հեղինակային այս անուններով երկու անգամ տպագրված պատմական միևնույն երկը,— «Պատմութիւն վասն ազգին Նետողաց» կամ «Պատմութիւն Թաթարաց»,— երկու անգամ էլ մշակվել է քարտարանում («Մաղաքիայ աբեղայի Պատմութիւն վասն ազգին Նետողաց», հրատ. Բ. Պատկանյանի, Պետերբուրգ, 1870:—«Պատմութիւն Թաթարաց Վարդանայ պատմչի, հանգալ ի ձեռագիր օրինակաց թանգարանի Սրբոց Յակովբեանց», Երուսաղեմ, 1870)¹¹⁹:

Ֆրիկ («Ֆրիկ. Բանաստեղծություններ», հրատ. Մ. Մկրյանի և Ե. Թոռոյանի, Երևան, 1941):

Ստեփանոս Օրբելյան («Պատմութիւն ճահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910):

Հեթում Պատմիչ, «Ժամանակագրությունը երեք հարիւր եւ մէկ ամաց» (տպագրվել է հետևյալ հրատարակության վերջում. «Հեթում պատմիչ Թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտիչ արթուակալ վարդապետի Ազերեան», Վենետիկ, 1842):

Մխիթար Այրիվանեցի («Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն Հայոց», հրատ. Մկ. Էմինի, Մոսկվա, 1860):

Թովմա Մեծոփեցի («Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա վարդապետի Մեծոփեցույ», հրատ. Կար. վրդ. Շահնազարյանի, Փարիզ, 1860):

Ամիրդովլաթ Ամասիացի («Ամիրտովլաթ Ամասիացի. Օգոստ բժշկութեան», հրատ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940):

Առաքել Դավրիժեցի («Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցույ», Վաղարշապատ, 1884):

¹¹⁹ Այժմ ապացուցված է, որ այս երկի հեղինակը Գրիգոր Ակնեղցին է (ըստ ոմանց՝ Ականեցի). հմտ. Հ. Ս. Անապան, «Հայկական մատենագիտութիւն», հտ. Ա, էջ XX—XXI: Այս անունով են գնում բնագրի մոր հրատարակություններն ու թարգմանությունները. հայերեն-անգլերենը՝ հրատ. Ռ. Բլեյկի և Ռ. Ն. Ֆրայի (Կեմբրիջ, ԱՄՆ, 1949 թ.), հայերեն-վրացերենը՝ հրատ. Նոդար Շոշիաշվիլու (Թիֆլիս, 1961 թ.), թուրքերենը՝ հրատ. Հ. Անդրեասյանի (Կ. Պոլիս, 1954 թ.):

Զաքարիա Քանաքեղի («Զաքարեայ Սարկաազի Պատմագրութիւն», հտ. Ա—Բ, Վաղարշապատ, 1870):

Սիմեոն Երևանցի («Զամբո գիրք, որ կոչի յիշատակարան արձանացոցիչ...», համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմեոնէ ցառահար եւ վշտակոծ կաթողիկոսէ Երևանցոյ», Վաղարշապատ, 1873):

Ինչպէս կարելի է դատել այս ցուցակից՝ քարտարանում ընդգրկված են մատենագրական կարևոր երկեր, բայց, անշուշտ, հենց այս ցուցակի սահմաններում էլ կարիք կա մի շարք լրացումների:

Այստեղ կան հեղինակներ, որոնք ունեն մեկից ավելի երկեր, բայց դրանք բոլորը չէ, որ ընդգրկված են և, ի հարկե, կընդգրկվեն հետագայում: Այսպես՝ Եղիշեից կընդգրկվեն նաև նրա «Յաղագս միանձանց»-ը, «Մեկնութիւն Յեսուայ եւ Դատաւորաց»-ը, նրան վերագրվող ճառերը՝ «Վասն դատաստանին եւ միսանգամ գալստեանն», «Վասն յիշատակաց մեռելոց», «Վասն հոգեց մարդկան» և ուրիշներ: Կամ ասենք՝ Գրիգոր Նարեկացին ունի նաև «Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի», «Պատմութիւն Ապարանից Ս. Նշանին», «Ներքող Աստուածածնին», «Ներքող Առաքելոց», «Ներքող Ս. Յակոբայ Մծբնացոյն», ինչպէս նաև գանձեր: Ծնորհալին ներկայացված է միայն չափածո երկերով, բայց հնարավոր չէ անտեսել չափածո «Ողբ Եդեսիոյ»-ն, իսկ նրա արձակ երկերից՝ «Թուղթ ընդհանրական»-ը, «Գիր հաասոյ խոստովանութեան»-ը, «Սահմանք հաասոյ Հայաստանեայց եկեղեցւոյ»-ն, «Յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ»-ն և նրա ընդարձակ անակաճին: Նմանապէս՝ Մխիթար Գոշն ունի նաև առակներ, Վարդան Արևելցիին՝ «Ժղլանք», մեկնողական գործեր և այլն, Ամիրդովլաթ Ամասիացիին՝ «Անգիտաց անպէտ», «Ախրապատին»-ներ (երկու տեսակ) և այլ գործեր: Ի միջի այլոց՝ համաքարտարանին քարտարանի համար պետք է օգտագործել քննադրերի միայն ընտիր և քննական հրատարակություններ՝ որքան հնարավոր է, ինչպէս արված է արդեն մի շարք հեղինակների վերաբերմամբ (Խորենացի, Եզնիկ, Ագաթանգեղոս, Եղիշե և այլն):

Հասկանալի է, որ վերոհիշյալ ցուցակով չի սահմանափակվում հայ ինքնուրույն մատենագրության քարտարանի գործը: Դրանից դուրս դեռ կան շատ ու շատ հեղինակներ և անանուն գործեր, որոնք անհրաժեշտաբար պետք է ենթարկվեն համաքարտարանի: Այդպիսիներից են ոչ միայն հայ միջնադարյան գիտական գրականության տիտաններ հանդիսացող Անանիա Շիրակացին և Գրիգոր Մագիստրոսը, այլև պատմական, իմաստասիրական և եկեղեցական հարուստ գրականության ներկայացուցիչներ՝ Մամբրե Վերծանողը, Պետրոս Սյունեցին, Դավիթ Բագրևանդացին, Վրթանես Քերթոզը, Թեոդորոս Քոթենավորը, Խոսրովիկ Թարգմանիչը, Անանիա Սանահնեցին և շատ ուրիշներ, որոնց հետ միասին «Շարականց»-ի «Գանձարան»-ի, «Վարք հարանց»-ի, ճառընտիրների նման սովոր և արժեքավոր ժողովածուները, կամ՝ քերականագիտական, տոմարագիտական և այլ մասնագիտությունների պատկանող բազմաթիվ գործեր: Քարտարանի խմբագրությունն իր ապագայի ծրագրում ունի, անշուշտ, այս նյութերը, որոնք, մեր կարծիքով, քանակի տեսակետից կլինեն առնվազն հինգ կամ վեց անգամ ավելի, քան վերոբերյալ ցուցակի նյութերը:

Հայ թարգմանական գրականության քարտարաններ կազմելու խնդիրը քարտարանային բաժնում առ այժմ հեռանկարային բնույթ ունի: Այդ ուղղությամբ, ինչպէս ասվեց արդեն, էական աշխատանք չի արվել: Միայն իբրև

փորձ այն բանի, թե համաքարբառային միջոցներով լեզվա-քերականական ի՞նչ կարևոր երևույթներ կարող են պարզվել թարգմանական գրականության բնագավառում, քարտագրման են ենթարկվել հունարենից թարգմանված երկու երկեր միայն, որոնցից առաջինը՝ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք» կոչված ճառերի մատյանն է (հիմք՝ «Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացոց՝ ճառք վասն Վեցօրեայ արարչութեան», հրատ. Հ. Ա. Բագրատունու, Վենետիկ, 1830), որը թարգմանված է Ե դարի առաջին կեսում, իսկ երկրորդը՝ Արիստոտելի «Պատմութիւն յաղագս աշխարհի» երկն է (հիմք՝ «Կորին վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 603—628), որը համարվում է Զ/Է դարերի թարգմանութիւն:

Մեր միջնադարյան թարգմանական գրականությունը նույնքան և նույնիսկ ավելի է հարուստ, քան ինքնուրույնը:

Հայտնի է, որ Հայաստանում մտավոր ու գրական գործունեության արշալույսը բացվել է ասորերենից և հունարենից կատարված թարգմանություններով, որոնք հայերին հաղորդակից են դարձրել հարևան երկրների կրոնագաղափարական շարժումներին ու մշակութային արժեքներին, և միաժամանակ խթանել են հայ ինքնուրույն գրականության ստեղծումը: Թարգմանական այդ գրականության պատմական ու գիտական գնահատումը մենք տվել ենք ուրիշ առթիվ¹²⁰: Այստեղ նշենք, որ հայկական տառերի գյուտից հետո, Ե դարում, ասորերենից է կատարվել Աստվածաշնչի սկզբնական՝ «փութանակի» թարգմանությունը և այնուհետև թարգմանվել են պատմական և կրոնական բնույթի մի շարք գործեր՝ «Զգօն» գիրքը, Լաբուրեհիա Եղեսացու «Թուղթ Աբգարու», Եվսեբիոս Կեսարացու «Պատմութիւն եկեղեցւոյ», Եփրեմ Խորիի երկերի մի մասը, Մարութայի «Վկայք Արեւելից», Առաքելական կանոնները («Սահմանք եւ կանոնք զոր եղին...»), Աթեղահայի Ռովվական թուղթը, և ապա, հետզհետեւ, Հակոբ Սրճեցու, Փիլոքսենոս Նաբովկացու և այլոց երկերով թարգմանությունների շարքը հասել է մինչև ԺԲ/ԺԳ դարերը՝ մինչև Դանիել Սալահեցու և Միքայել Ասորու երկերի թարգմանությունը:

Հունարենից կատարված թարգմանությունները, որոնք կազմում են հայ թարգմանական գրականության հիմնական զանգվածը, սկսվել են Աստվածաշնչի հիշյալ «փութանակի» թարգմանության սրբագրությամբ՝ հունական «ստոյգ» օրինակների հիման վրա: Դրա հետ միասին Ե դարում ծավալվել է դավանաբանական և կրոնա-եկեղեցական գրականության հայացումը լայն չափերով: Այդ մեծ իրողության մասին մոտավոր գաղափար կազմելու համար բավական է աչքի առաջ բերել միմիայն նույն Ե դարում թարգմանված հունական պատկառելի հեղինակների աւուրների ոչ լրիվ շարքը՝ Հովհան Ոսկեբերան, Բարսեղ Կեսարացի, Աթանաս Աղեքսանդրացի, Կյուրեղ Երուսաղեմացի, Մեթերիանոս Գաբաղացի, Գրիգոր Նեոկեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Նյուսացի, Իգնատիոս Անտիոքացի, Կյուրեղ Աղեքսանդրացի, Հիպոլիտոս Բոստրացի, Եվթաղ Աղեքսանդրացի, Արիստիդես Աթենացի, Իրենեոս Լուզդունացի, Տիմոթեոս Կուզ և դեռ ուրիշներ: Նույն Ե դարում հունարենից փոխադրվել են նաև պատմական, իմաստասիրական, քերականական, հոետորական և այլ բնույթի երկեր՝ Եվսեբիոս Կեսարացի («Քրոնիկոն»), «Յաղագս պիտոյից», Փիլոն Եբրայեցի, Արիստոտել («Ստորոգութիւնք» և «Պերիարմենիաս»), Պորփյուր, Դիոնեսիոս Թրակացի, Թեոն Աղեքսանդրացի, «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», Նոննոս: Հունա-

¹²⁰ Հ. Ա. Անայան, «Հայկական մատենագիտություն», հտ. Ա, էջ VIII—IX;

րենից կատարվող թարգմանությունները շարունակվել են հետագա դարերում՝ ընդհուպ մինչև ԺԸ դար, երբ Գեորգ Պալատեցու և Մելքիսեդեկ Բանասերի ջանքերով հաղացվել են հին-հունական և բյուզանդական գրականությունից Հոմերոսի, Հերակլիտոսի, Պալեփատոսի, Կոոնոստոսի, Սիմեոն Սեթի, Գեորգ Ֆրանցեսի և այլոց երկերը:

Լատիներենից կատարված թարգմանությունները, որոնք ԺԲ—ԺԸ դարերին են պատկանում, կապվում են նախ Ներսես Լամբրոնացու գործունեության հետ, ապա՝ Նախիջևանում հաստատված միաբանողների (ունիտորների) և վերջում՝ Էջմիածնում, Կ. Պոլսում և այլուր հաստատված ոչ-միաբանող թարգմանիչների (Ստեփանոս Լեհացի, Հակոբ Ծամհիզաուն, Ղուկաս Խարբերդցի և ուրիշներ): Զգալի թիվ կազմող այդ թարգմանությունների շարքը մեզ տվել է մի կողմից Գրիգոր Մեծի, Թովմաս Ակուհնացու, Ալեքսոս Մեծի, Հովհաննես Սկոտոսի, Միքայել Սկոտոսի և մանկների երկերը, մյուս կողմից Հովսեփոս Փլաբիոսի «Հնությունք Հրեից» և «Պատմություն պատերազմին Հրեից» գործերը, Անտոն Գովդինի «Փիլիսոփայութեան» հատորները, Արիստոտելի երկերից այնպիսիներ, որոնք ժամանակին հունարենից չէին թարգմանվել («Բնազանցություն», «Զպատմություն կենդանեաց», «Զմասանց կենդանեաց», «Զքայլից կենդանեաց», «Զհոգույ», «Զգայություն և զգալեաց», «Զիշողություն և զվերիշմանե», «Զքնոյ և զհսկմանե» և այլն), նշանավոր Ավերբոյեանի արիստոտելյան մեկնաբանությունները և շատ ուրիշներ:

Գրական հույժ կարևոր հուշարձաններ կան թարգմանված հաև ուրիշ լեզուներից, ինչպես է «Գիրք վաստակոց» երկրագործական աշխատությունը արաբերենից՝ հավանաբար ԺԳ դարում, և «Անսիգբ Անտիոքայ» օրենսգիրքը ֆրանսերենից՝ ԺԴ դարում:

Հայ թարգմանական գրականության ուսումնասիրումը կարևոր նշանակություն ունի և՛ հայերենի և՛ մեր միջնադարյան գրականության պատմության հարցերի լուսաբանման համար:

Հին հայերենի գրական ձևավորման շրջանում, բնականաբար, անխուսափելի պիտի լինեին ասորերենի և հատկապես հունարենի ազդեցությունները նրա ինչպես բառային, այնպես էլ քերականական և մանավանդ շարահյուսական կողմի վրա, և այդպես էլ այդ ազդեցությունների դրոշմն անցավ Ե դարի մեր ինքնուրույն գրականության լեզվին և մնաց հետագա դարերում, նույնիսկ ավելի զարգանալով՝ նորանոր թարգմանությունների մթնոլորտում: ԺԴ—ԺԸ դարերում ազդեցության որոշ երևույթ՝ ստեղծեցին հաև միաբանողների լատինաբան թարգմանությունները, բայց դա չարմատավորվեց և մնայուն հետքեր չթողեց:

Նույնն եղավ գրականության ասպարեզում: Քանի որ թարգմանական գրականության ծավալումը Հայաստանում սկզբից իսկ գաղափարախոսական պահանջներով էր պայմանավորված, ապա բնական էր, որ ինքնուրույն գրականությունը հագեցված լիներ նրանով: Գրականության բոլոր ճյուղերը, լինի կրոնական ու դավանաբանական, լինի պատմական, լինի իմաստասիրական, հոեոտրական և կամ ուրե՛կ ուրիշը, անխաղձի կապերով կապված էին թարգմանական գրականության բովանդակության ու նյութերի հետ՝ մտքերի հաստատման, զարգացման ու հիմնավորման ուղիով, ուղղակի և կամ այլաբանական ակնարկներով, բառացի լիակատար և կամ կրճատ փոխառություններով և այլն, որպեսզի ամուր, ճշմարտացի և համոզիչ լինե՛ր զարգացող ինքնուրույն գրականությունը:

(Շարունակելի)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Երանի՝ որ ունիցի յիշատակ ի ս. Էջմիածին	3
Ի հայրապետության վազգէն Ա կաթողիկոսի բարերարք Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի	6
Ն. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ—Բարեշնորհ պահքի կատարյալ վարդապետություն ի Տեղ	8
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ	11
ԳՐԻԳՈՐ ԱՐԾԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ—5—7-րդ դարերի շարականների արվեստը	15
Սկսածք ութ-ձագների (նոտաներ)	23
ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ—Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանց	27
ՍՈՒՐԵՆ ՔՈՒԱՆՋՅԱՆ—Վարդան Այգեկցին և «Արմատ հաւատոյ» ժողովածուն	37
Գրախոսություն—Ա. Հ.—Զատիկի հարցը	44
Ա. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ—Արդյո՞ք Վարդանն է Յաշի հայկական եկեղեցու վերակառուցման հեղինակը	47
Հ. Ա. ԱՆԱՍՅԱՆ—Հայ համարարբառային գրականությունը և հայ մատենագրության համարարբառը	49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 24/II 1972 թ.: Ստորագրված է տպագրության 21/IV 1972 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 140

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1972 թ.